# Հ Յ ՈՒ Ս Ի Ս Ա Փ Ա Յ Լ

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**ՏԱՐԵԳԻՐՔ 2019 (4)**

ԵՐԵՎԱՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

*Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի*
*գիտական խորհուրդը*

Գլխավոր խմբագիր՝ Ճուղուրյան Ա.Գ. (տնտ. գիտ. դոկ.)
Խմբագրական խորհուրդ

Մակիչյան Բ.Մ. (մանկ. գիտ. թեկ.), Ալավերդյան Ա.Ս. (բան. գիտ. թեկ.), Ասատրյան Գ.Ե. (փիլ. գ իտ. դոկ.), Ավետիսյան Ս.Ս. (տնտ. գիտ. դոկ.), Երիցյան Ս.Ս. (բան. գիտ. դոկ.), Խեչոյան Ա.Ա. (իրավ. գիտ. թեկ.), Ներսիսյան Ա.Ա. (պատմ. գիտ. դոկ.), Միրզոյան Վ.Ա. (փիլ. գիտ. դոկ.)

Հյուսիսափայլ. գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ա.Գ. Ճուղուրյան և ուրիշ.: Գլխ. խմբ՝ Ա.Գ. Ճուղուրյան,- Եր.: “Հյուսիսայինհամալսարան”հրատ., 2019, 118 էջ:

© «Հյուսիսային համալսարան հրատարակչություն», 2019 թ.

**СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ**
**NORTHERN UNIVERSITY**

# ЮСИСАПАЙЛ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
ЕЖЕГОДНИК
2019 (4)

Главный редактор Джугурян А.Г. (доктор экон. наук)

Редакционная коллегия

Макичян Б.М. (канд. пед. наук), Аветисян С.С. (доктор экон. наук), Алавердян А.С. (канд. филол. наук), Асатрян Г.Е. (доктор филос. наук), Ерицян С. С. (доктор филол. наук), Нерсисян А.А. (доктор ист. наук), Хечоян А.А (канд. юр. наук), Мирзоян В,А. (доктор филос. наук)

# HYUSISAPAYL

Collected Scientific Articles
YEARBOOK
2019 (4)

Editor-in-chief: Tshuguryan A.G. (Doctor of science in Economy)

Editorial Collegium

Makichyan B.M. (PhD in Pedagogical), Alaverdyan A.S. (PHD of Philology), Asatryan G.E. (Doctor of Science in Philosophy), Avetisyan S.S. (Doctor of Science in Economy), Eritsyan S.S. (Doctor of Science Philology), Khechoyan A.A. (PHD of Law), Nersisyan A.A. (Doctor of Science in History), Mirzoyan V.A. (Doctor of Science in Philosophy).

# ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արմեն Ճուղուրյան Սաթեն Ալավերդյան

2019 թվականը հայտարարված է թումանյանական տարի, ինչը, իհարկե, ոգևորիչ իրողություն է Ամենայն հայոց բանաստեղծի կյանքին ու գործունեությանն ավելի խորությամբ անդրադառնալու, նրա հարուստ գրական ժառանգությունը վերստին ըմբռշխնելու առումներով: Սակայն, այս խորապատկերում ամենևին չպետք է անտեսենք և մոռացության մատնենք մեկ այլ մեծանուն գրողի՝ արևմտահայ երգիծաբան, հրապարակախոս և արձակագիր Երվանդ Օտյանի հոբելյանը՝ նույնպես 150-ամյակը:

Երվանդ Օտյանն իրավամբ համարվում է հայ ամենաբեղմնավոր հեղինակներից մեկը: Նա գրել է մեկ ողնիլ («Ջավալլըն) և մեկ կատակերգություն («Ֆրանքո-թրքական պատերազմ կամ Չարշըլը Աղա»), ինչպես նաև սոցիալական բնույթի բազմաթիվ երգիծավեպեր («Միջնորդ տեր պապան», «Թաղականին կնիկը, «Ազգային բարերարը, «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Վաճառականի մը նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը» և այլն): Քաղաքական երգիծանքի ասպարեզում նրա գլուխգործոցը «Ընկեր Փանջունի» վեպն է:

Դեռևս 1900 թվականին, երբ այնքան էլ մեծ չէր Օտյանի գրական վաստակը, մամուլն արդեն իսկ նրան էր վերապահել հայ երգիծաբանության հսկա Հակոբ Պարոնյանի թափուր «գահի» միակ ու արժանի փոխարինողի դերը: Այդուհանդերձ, հանդես գալով Պարոնյանից հետո, սովորելով նրանից՝ Օտյանը երբեք էլ չի կրկնօրինակել նրան, այլ, ընդհակառակը, ավելի է զարգացրել նրա երգիծանքի որոշ կողմեր, ստեղծել է մեծ կտավի երկեր՝ բարձր մակարդակի հասցնելով հատկապես քաղաքական երգիծանքը: Բովանդակալից, բարձրարվեստ իրապաշտական գրականության արարում. սա էր նրա կոչումը: Գրականագետներից շատերի պնդմամբ՝ եթե կա մի արևմտահայ գրող, որի երկերի վրա կարելի է վերարտադրել արևմտահայ ժողովրդի շուրջ 30-ամյա պատմությունը (19-րդ դարի 90-ականների կեսերից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը), ապա դա, առաջին հերթին, Երվանդ Օտյանն է: Վարպետորեն պատկերելով իր ժամանակաշրջանի հիմնական երևույթները, խորամուխ լինելով դրանց մեջ՝ նա կերտել է այնպիսի կերպարներ, որոնցից շատերը գլուխ-գործոցներ են: Նա ներկայացրել է իր ապրած դարաշրջանի հիմնական բախումները շահագործողի ու շահագործվողի միջև, պատկերել է դրա-մատիրության հետզհետե խորացող գաղափարական սնանկությունը: Իրականության այս և այլ տգեղ դրսևորումները նա արտացոլել է ոչ թե տխուր գույներով, զգայացունց տեսարաններով, այլ դրանց մասին խոսել

է ծաղրով, ծիծաղել դրանց վրա՝ ընդգծելով, որ «մեր ծիծաղը դառն բան կպարունակէ»:

Միալված չենք լինի, եթե ասենք, որ Երվանդ Օտյանը, հասնելով հայ երգիծական գրականության գագաթնակետին, թերևս, արդեն հարյուր և ավելի տարիների հեռավորությունից իր գաղափարախոսությամբ և հասարակարգի վերլուծական մոտեցումներով շարունակում է հաստա-տակամորեն մնալ այդ բարձունքին: Նրա երգիծական գրչի թանաքը չի չորացել և այսօր էլ իր շարադրանքով արդիական է մեր հանրային կյան-քում ու կենցաղում:

Օտյանի գրական վարպետության գաղտնիքը ոչ միայն իրեն շրջա-պատող աշխարհի գունագեղ ներկապնակի ստեղծումն է, այլև մեր ժողովրդին բնորոշ արատների վերհանումը. արատներ, որոնք, ցավոք, անցողիկ չեն և կրնկակոխ հետևում են մեզ դարերի խորքից՝ ուղեկցելով դեպի ապագան: Ոչ բոլոր գրողներին է հաջողվում նկատել սեփական ազգի արատները և այնուհետև բարձրաձայնել դրանց մասին: Դրա հա-մար, համարձակությունից բացի, պահանջվում է նաև ժամանակի շունչը զգացող քննադատի նրբանկատություն: Եվ ազգային արատների յու-րատիպ այս վերհանումներն են, որ ընդգծում են Օտյան գրողի հանճարը՝ նրա ստեղծագործություններն արդիական դարձնելով մեր իսկ օրերում: Ով կմտածեր, որ հարյուրամյակների խորքից եկող օտյանական քննադատությունն այսօր էլ կարող է նույնքան խոսուն ու նույնքան «հո-գեհարազատ» լինել, բայց, արի՛ ու տե՛ս, որ այդպես է: Նա, կարծես թե, ձուլվել է մեր ժամանակաշրջանին՝ դառնալով մեր ժամանակակիցը: Բանն այն է, որ Օտյանի ապրած օրերից մինչ ներկայի մեր իրակա-նությունն այնքան էլ շատ բան չի փոխվել մարդկային հարաբերություն-ների հաստատման, հատկապես՝ դրանցում առկա տգեղ ու մերժելի դրսևորումների առումով, ինչի հետևանքով հաճախ ենք համակվում օտյանական «վշտի ծիծաղով»: Այսօր էլ մեր հասարակությունը ղե-կավարվում է «մարդը մարդուն գայլ է» դաժան սկզբունքով, այսօր էլ մենք լուրջ կասկածի տակ ենք դնում բարեգործությունը, մեծահարուստների հանրային բարեկիրթ կեցվածքը և այլն, և այլն: Եվ մեր տառապանքը, ցավոք, փորձ ունի, քանզի անկախացումից ի վեր, մեր աչքերի առջևով եկել ու անցել են բարեգործներ, որոնք չափազանց մեծ արագությամբ, այլևայլ ճանապարհներով հաջողել են հարստություն դիզել՝ ի հաշիվ անարդար սեփականաշնորհման, բարձիթողի իշխանական վերահսկո-ղության և տասնյակ տարիների ընթացքում ժողովրդի արդար քրտինքով կուտակված ակտիվների թալանի: Հայազգի հաջողակ գործարարները, սերտ առնչություններ պահպանելով քրեաօլիգարխիկ համակարգի հետ, անկախությանը հաջորդած տարիներին իրենց գործունեությամբ խթանել են աղքատության խորացումը, միաժամանակ, դրան զուգահեռ, մերթ-ընդմերթ հանրության շրջանում «փայլատակել» իրենց բարեգործական միջոցառումներով, որոնք մինչ այսօր գրեթե աննկատ հետք են թողել

աղքատության շեմը հատող ազգաբնակչության կյանքում: Եվ որքա՜ն հեռահար պիտի լիներ հանճարի մտքի թռիչքը, որ դեռևս գրեթե մեկ ու կես դար առաջ վեր հաներ այն բոլոր պախարակելի երևույթները, որոնք այսօր էլ տեսնում ենք մեր իրականությունում.

***«Կը մտածեմ ինքնիրենս, թե աղքատությունն ալ հարկավոր բան մըն է աշխարհիս վրա, և միակ միջոցը մեր մեջ աժան-աժան բարերարներ արտադրելու: Եթե աղքատությունը չըլլար, ո՞ւր գոյություն պիտի ունենային այն մանրանկար բարերարները... որոնց ձախ ձեռքը չգիտե, թե աջն ի՞նչ կու տա ու աջն ալ չգիտե, թե ձախն ի՞նչ կու տա, որովհետև ոչ ձախը բան մը կու տա, ոչ աջը»:***[1]

Հատկանշական ու անչափ մերօրյա է Օտյանի դիտարկումն այն մասին, որ, այսպես կոչված, բարերարները, որոնք, միաժամանակ, ձեռներեցներ են, ձեռնարկատերեր, կարծես թե, պիտի ժամանակ և իրավունք չունենային զբաղեցնելու պետական պաշտոններ, անուամենայնիվ, նրանք ձգտում են ձեռք բերել հանրային կառավարման լծակներ, անկասկած, ունենալով իրենց անձնային շահը.

***«Բարերարներու սերունդ մը ունինք մեր մեջ, որ բավական չարիք հասուցած է մեր գլխին:***

***Հարուստ, ամուսնացած, ընտանիքի տեր, անձնական շատ զբաղմունք ունեցող մարդիկ են ասոնք: Ազգային ոնէ պաշտոն մը կհանձնվի իրենց, հրաժարական կուտան, չընդունվիր. կը պնդեն, կաղերսվի, վերջապես կը հավանին ընդունիլ այդ պաշտոնը: Հոգիով մարմնով մեջ կը մտնեն, գործերը կը պրծոտեն և ալ չեն ուզեր ետ քաշվիլ»:***[2]

Եկեք խոստովանենք, որ մեր օրերի հաջողակ ու խոշոր ձեռներեցները նույնպես ձգտում են զբաղեցնել պատգամավորական աթոռներ, ակտիվորեն մասնակցում են Ազգային ժողովի ընտրություններին, անգամ փորձում են սուբյեկտիվորեն ազդել դրանց ընթացքի վրա՝ hօգուտ իրենց շահի:

Նորից անդրադառնալով բարեգործությանը՝ նշենք, որ Օտյանը մերժողական վերաբերմունք ուներ այդ երևույթի նկատմամբ ու, բազմաթիվ օրինակներ բերելով, բազմաբնույթ կերպարներ կերտելով, նա ապացուցում է իր ճշմարտացիությունն այս առնչությամբ: Հիշե՛նք Հաճի աղայի կերպարը: Այս մարդը բարեգործական նպատակներով մոմավաճառու-թյամբ էր զբաղվում՝ անձնական գրպանից լրացնելով հասույթը ու դա հատկացնելով եկեղեցուն.

***« Ամսագլուխներուն կը բերեր մոմին հաշիվը և գանձապետին կը հանձներ:***

***- Ահա՛, ա՛ռ 250 դրուշ:***

***- Հաճի՛ աղա, այս ամեն ամիս ճիշտ 250 դրու՜շ կըլլա:***

---

[1] Ե. Օտյան, Ընտիր երկեր // Քրոնիկ, «Լույս», 1988, էջ 526:

[2] Ե. Օտյան, Ընտիր երկեր, // Շաբաթական քրոնիկ, «Լույս», 1988, էջ 528:

*- Չէ, երկու հարյուր հազիվ կհասնի, բայց ես ուխտ ըրած եմ, որ 250-ի թամամցնեմ, էհ, քանի մը դրուշ ալ ես չի տամ, մի յա…»*[3]*:*

Իսկապես, հուզիչ է, մարդն «ուխտ ըրած» է օգնել եկեղեցուն, հոգալ դրա կարիքները: Իսկ իրականում.

«*Հաճի աղայի մահից հետո, թաղականները կորոշեն, որ փոխն ի փոխ իրենք նստին բանկալը: Զարմա՛նք, զայթակղությու՛ն: Առաջին ամիս 1 500 ղուրուշ հասույթ կըլլա մոմեն, հաջորդ ամիսը՝ 1 480, և այսպես ամեն ամիս: Այն ատեն կը հասկցվի, թե ինչու Հաճի աղան ուխտած էր անպատճառ մոմը ինքը ծախելու: Քանիինգ տարվա մեջ, ժամուն երեք հազար ոսկին գողացած էր պապա մարդ Հաճի աղան»:*[4]

Փաստորեն, պատմվածքի հերոսը բարեգործության քողի ներքո գողանում է հանրային փողերը, միաժամանակ, հանդգնորեն հոխորտալով, թե ամեն ամիս սեփական գրպանից նվիրատվություն է անում կայուն հասույթ ապահովելու և եկեղեցուն հանձնելու համար:

Իսկ Օտյանը շտապում է ասել.

*«Այս դեպքեն, եթե հետևություն մը ուզեինք հանել, այն պիտի ըլլար, թե՝ պետք է զգույշ կենալ այն բարերարներեն, որոնք տզրուկի պես կը փակչին հանրային զանազան հասութաբեր գործերու և չեն ուզեր հետ քաշվիլ...»:*[5]

Առանց վարանելու՝ կարող ենք մարգարեական համարել մեծ երգիծաբանի վերոնշյալ խորհուրդը և զուգահեռներ անցկացնել մերօրյա «Հաճի աղաների» հետ: Շատերս ենք ականատեսն ու վկան դառնում այն բանի, թե ինչպես զանազան հիմնադրամներ պարզապես որպես կերակրատաշտ են հանդես գալիս որոշ պաշտոնյաների համար: Հիշենք, թեկուզ, ոչ վաղ անցյալից մի դրվագ, երբ հասարակական կազմակերպու-թյան ծառայողը, չարաշահելով սեփական լիազորությունները, հիմնա-դրամի բանկային քարտից միլիոնավոր դրամներ էր փոխանցել առցանց խաղատներին, կամ երբ մեկ այլ հիմնադրամի տնօրեն, համահայկական փառատոնի անցկացման պատրվակով, յուրացրել էր հիմնադրամի հա-սույթը:[6]

Երվանդ Օտյանի տեսադաշտից չէին կարող վրիպել նաև մամուլի շինծու և անպատեh գովասանքները՝ ուղղված հայ բարերարների անձին ու նրանց գործունեությանը: Եվ իզուր չէ, որ նա, իրեն հատուկ յուրօրինակ շրջահայցությամբ, մամուլի այդ գովեստները որակում էր որպես ընթերցողին մատուցվող դյուրամարս կերակուր: Զուգահեռ անցկացնելով մեր օրերի հետ՝ կարող ենք հավաստիացնել, որ նույն երևույթը նույնքան «հաջողությամբ» տեղ է գտել մեր իրականությունում: Գրեթե ամեն օր և՛

[3] Ե. Օտյան, Ընտիր երկեր // Շաբաթական քրոնիկ, «Լույս«, 1988, էջ 529:

[4] Ե. Օտյան, Ընտիր երկեր // Շաբաթական քրոնիկ, «Լույս», 1988, էջ 530:

[5] Ե. Օտյան, Ընտիր երկեր // Շաբաթական քրոնիկ, «Լույս», 1988, էջ 530:

[6] http://newsarmenia.am/am/news/politics/arm1-20110413-42433256/

ԶԼՄ-ները, և՛ առցանց լրատվամիջոցները զանազան պատրվակներով անհարկի գովեստներ ու մեծարանքի խոսքեր են շռայլում, այսպես կոչված, բարերարների հասցեին՝ ընդհուպ նրանց աստվածացնելը:

Այս առիթով մեծ երգիծաբանն իր «Ազգային բարերար» վիպակում շտապում է ասել.

***«Թերթերը, որոնք գրաքննության մշտահալած ուրվականէն սարսափահար, ինչ գրելիքեն չէին գիտեր, սովալլուկ զահավիժումով մը նետված էին Սահակ էֆենտիի բարերարության անմեղուկ պնակին վրա: Բարեմիտ ընթերցողներին հրամցվելիք անվնաս ու մարսողական կերակուր մըն էր ան, զոր կարելի է հարդարել զանազան կերպով ու տարբեր թացաններով»:*** [7]

Հեղինակին խորթ էր թվում, որ բարերարությամբ զբաղվողը միաժամանակ առիթը բաց չի թողնում շահույթ ստանալ՝ գործի դնելով առևտրի հնարքները: Նույն՝ «Ազգային բարերար» վիպակի հերոսին նա բնութագրում է մեր օրերի համար դիպուկ և հատկանշական որակներով.

***«Սահակ էֆենտին խորամանկ մը չէր, որ կուզեր վարպետությամբ բարերար մը ձևանալ, այլ իրապես բարիքը սիրող և զայն կատարել փափաքող մը: Միայն թե իր շուկացիի գործնական մարդու խառնվածքը զինքը ինքնաբուխ կերպով ու անգիտակցաբար կմղեր բարերարության մեջն ալ գործածելու առևտուրի հնարքները: Ինչպես իբր վաճառական խաբեբայությամբ շահ մը ըրած ատեն ունէ խղճահարություն չէր զգար, այլ ընդհակառակը, պարկեշտորեն իր գործը տեսած ըլլալու անխռով գոհունակությունը ուներ, Սահակ էֆենտի, նույնպես, իբր բարերար, շուկացիի, հնարքները գործածելով չէր նկատել, թե պարտավորության դեմ մեղանչած կըլլա»:*** [8]

Եվ այդ խորթությունը համակել է նաև մեզ, գալով-հասնելով մինչև մեր օրերը, երբ խոշոր գործարարները բարերարություն են անում՝ ի շահ իրենց ձեռներեցական համբավի բարձրացման:

Մեծ երգիծաբանը հատկապես անհաշտ վերաբերմունք ուներ բարերարության հետևանքների նկատմամբ: Ալեքսանդր Մանթաշյանցին ուղղված իր բաց նամակում նա նույնիսկ հանդգնում է կշտամբել նշանավոր հային՝ ասելով, որ նրա բարերարությունը պարզապես աղետ է հայ ժողովրդի համար.

***«Դուք կը քաջալերեք կոր ամբողջ խումբ մը հայեր, ոտքերնին, ձեռքերնին բանելու կարող, ունէ աշխատությամբ մը իրենց հացը պարկեշտորեն ու առնականորեն վաստակելու կարող շատ մը հայեր, որոնք ալ ուրիշ բան ըրած չունին, բացի սպասելուն ձեր տարեկան կրկին այցելությանը Բարիզ, որպեսզի ձեր պանդոկին դռան առջև չափրաստ բաբն բռնած ու ողնաթեք սպասելով, ձեր ետևեն վազվռտելով, հայ եկեղեցիին***

---

[7] Ե. Օտյան, Ընտիր երկեր// Ազգային բարերարը, «Լույս», 1988, էջ 469:

[8] Ե. Օտյան, Ընտիր երկեր // Ազգային բարերարը, «Լույս», 1988, էջ 469:

*սեղմին վրա ձեզի քսվռտվելով ու ձեր ձեռքերը լըզվռտելով, ձեր մեկ ողոր-մատու շարժումին արժանանան:*

*Դուք մարդոց մեջ գիտակցաբար կմեռցնեք կոր ամեն առնակա-նություն, ամեն հպարտություն, ամեն արժանապատվություն, ամեն ազ-նվություն, - բաներ, որոնց մասին անշուշտ մեծ մտահոգություն մը ունե-նալու չեք…*

*Ու մենք ասիկա աղետ մը կը նկատենք, տեսնելով հետզհետե ծավալիլը այդ ստորության համաճարակին, որուն աղբյուրը ձենե կը բխի և որուն օրինակը չարաշուք կդառնա կոր հետզհետե հասնող սե-րունդներուն համար:*

*Ու ձեզի պատասխանատու կճանչնանք այս աղետին»:*[9]

Եվ մեծ գրողի՝ հարյուր տարվա ակունքներից եկող այս բնութագրմանը համահունչ, մերօրյա մամուլը գրում է. *«Եվրամի-ությունը Հայաստանին 140-170 միլիոն եվրո է տրամադրում, ընդ որում՝ անհատույց կարգով: Սա տրամադրում են մեր երկրում արդարադատությունը, մասնավոր հատվածն ու հանրային կառա-վարումը բարեփոխելու համար: Այդ մասին փաստաթուղթն ար-դեն ստորագրել են Բրյուսելում: Ընդ որում, գումարը նախնական է, ու, դրական միտումներ արձանագրելուն զուգահեռ, ֆինանսա-վորումը շարունակվելու է: Հետաքրքիր է՝ ինչ է մտածում ԵՄ-ն՝ անհատույց գրանտներ տրամադրելով, երբ ՀՀ արդարադատու-թյունն արդեն 10տարի բարեփոխումների փուլում է, և դեռ այս ոլորտում միակ ձեռքբերումները թերևս մեծ թվով այն գործերն են, որոնք ուղարկվում են Մարդու իրավունքների եվրոպական դա-տարան»:*[10]

Օտյանական մոտեցմամբ հետազոտելով մերօրյա մամուլի էջերը՝ չենք դադարում զարմանալ ու զայրանալ՝ կատարելով, մեղմ ասած, ոչ այնքան հաճելի բացահայտումներ տրամադրվող դրամաշնորհների առնչությամբ: Պարզվում է, օրինակ, որ նույնիսկ ՀՀ նախագահի աշխատակազմի տրամադրած դրամաշնորհներն են ոչ արդյունավետ կերպով օգտագործվում մի շարք կազմակերպությունների կողմից՝ անգամ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է Հայոց ցեղասպանության տարելիցների նշման արարողակարգի կազմակերպմանը: Ու տպավորություն է ստեղծվում, որ ցեղասպանության թեման որոշ անձանց համար դարձել է գործարարության առարկա, և նրանք, տարիներ շարունակ օգտվելով նախագահի աշխատակազմի տրամադրած դրամաշնորհներից, այդպիսով փող են աշխատել …[11]

---

[9]Ե. Օտյան, Բաց նամակ Պ. Մանթաշյանին //Երկեր, հատ. 1, Եր., «Հայպետհրատ», 1961, էջ 555:

[10] https://galatv.am/hy/84768/

[11] https://168.am/2018/03/07/917832.html

Օտյանն ընդգծված անհաշտ վերաբերմունք ուներ կեղծ ընդդիմության նկատմամբ: Եվ երգիծանքի վարպետի այն տողերը, որոնք բնութագրում են անսկզբունքային գաղափարախոսներին, մարդկանց, որոնք պարզապես հեշտությամբ հարմարվում են քաղաքական հոսանքներին՝ ապահովվելու համար իրենց տաքուկ տեղն արևի տակ, նույնքան այժմեական են ու սթափեցնող.

***«Շատ բնական է կարծեմ հեղափոխության մակաբույծները նկատել այն տեսակ մի տիպարներ, որոնք 96-են ի վեր մեջտեղ ելած են, և որոնք հեղափոխությունը ջատագելով զայն շահագործելեն ետքը, հիմակ սկսած են հեղափոխության հակառակորդ ձևանալով ապրիլ, տեսնելով, որ այդ միջոցը ավելի շահաբեր է: Արդ, առանց հեղափոխական շարժման գոյության՝ այս մարդիկը չպիտի կրնային իրենց դերը խաղալ և մտնել այն մարդոնց աչքերը, որոնց գրպանեն որոշած են ապրիլ մինչև ետքը»:***[12]

Մի պահ փորձենք Օտյան քննադատի աչքերով նայել մերօրյա քաղաքական գործիչներին և Ազգային ժողովի տարբեր նստաշրջանների պատգամավորներին ու վերստին կհամոզվենք, որ իրականում շատ բան չի փոխվել. նույնն է մնացել «գրպանային» ընդդիմության էությունը, և «Հեղափոխության մակաբույծները» խորագիրը նույնքան արդիական է մեր օրերում: Ավելին, մեր դիտարկումները ցույց կտան, որ քաղաքական գործչի այս տեսակը պարզապես կատարելագործել է իր դրսևորման ձևերը. նա «շոուներ» է կազմակերպում Ազգային ժողովում, կոտրատվում տեսախցիկների առաջ, բայց դժվարին պահերին, ինչպես և Օտյանի ապրած ժամանակաշրջանում էր, նա ժողովրդի հետ չէ և անգամ փորձ էլ չի անում գոնե մի փոքր անձնական նպաստ բերել սեփական երկրի բարգավաճման գործընթացին:

«Արտասահմանցի գործիչը» պատմվածքում Օտյանի «հերոսը» Կակայանցն է, մի «քաղաքական գործիչ», որ թափառում է երկրից երկիր՝ կոչ անելով ազատագրել Արևմտյան Հայաստանը թուրքական լծից: Ու վերջինիս քաղաքական գործունեությունը սահմանափակվում է զուտ կոչերով ու անտեղի դրամահավաքներով: Երբ հեղինակը հանդիպում է Կակայանցին Եգիպտոսում, նրանց միջև տեղի է ունենում հետևյալ սուր երկխոսությունը.

***«- Պարո՛ն Կակայանց, ինչո՞ւ եկած ես Եգիպտոս:***

***- Ե՞ս, զարմա՛նք, պրոպականտի համար:***

***- Բայց հոս ի՞նչ օգուտ ունի քո պրոպականտդ, արտասահմանի հայերուն մեջ քո հեղափոխական թերթերը կրնան ազատորեն պրոպականտ ընել, պետք է Թուրքիա երթալ, հոն ավելի կարևոր է, ավելի օգտակար:***

***- Թուրքիա՞, չեմ կարող այդ բարբարոս թուրքերի երեսը տեսնել, թե մի հատ հանդիպեմ նրանց՝ հենց այն րոպեին պետք է սպանեմ…***

[12] Ե. Օտյան, Ընտիր երկեր // Հեղափոխության մակաբույծները/Հակահեղափոխականը, «Լույս», 1988, էջ 49:

*- Լավ, սպանի՛ր:*

*- Ինչ հեշտ ես ասում, որ այդ կարելի՛ է:*

*- Եթե կարելի չէ՝ մի՛ սպանիր, բայց գնա՛ Թուրքիա:*

*-Դուք, թրքահայերդ լռկիայով չեք խոսիր, ամեն բան թեթևությամբ եք դատում, - պատասխանեց Կակայանցը: - Քո ասածի մեջ իմաստ չկա, այդ առֆիզմ է»:*[13]

Իր «հերոսի» ջախջախիչ նկարագիրն Օտյանն ամփոփում է հետևյալ կերպ.

*«Բավական ժամանակ ետքը շրջաբերական մը ցույց տվին ինծի՝ պաշտոնական կնիքով: Այդ շրջաբերականը կհայտներ, որ իմացված էր, թե Կակայանց անունով մարդ մը, Եգիպտոսի մեջ դրամ հավաքած է հեղափոխական նպատակի համար՝ զանազան խաբեբայական միջոցներով, և դրամը չի ղրկած կեդրոնական սնտուկին, հետևաբար այդ անձն արտաքսված է կուսակցութենեն»:*[14]

Երվանդ Օտյանը նաև կենցաղային միջավայրը թիրախավորելու և երգիծանքի «նիզակով» խոցելու հմուտ վարպետ էր: Ընդ որում, երգիծանքի այս ուղղության մեջ ևս նա անգերազանցելի է ու, ինչպես միշտ, «մարգարե», քանի որ այս ասպարեզում նույնպես նրա սրատես աչքից չեն վրիպել այն արատավոր իրողությունները, որոնք, ցավոք, եկել հասել են մինչև մեր օրերը՝ բնավ չկորցնելով իրենց արդիականությունը՝ բացասական իմաստով: Կարծես՝ մեծ գրողը կանխագուշակել էր, որ հարյուր տարի անց էլ ոչինչ չի փոխվելու, և կենցաղում, շատ դեպքերում, սիրո և համերաշխության մթնոլորտը պիտի փոխարինվի փողին ու հարստությանը հասնելու անկուշտ մոլուցքով:

«Վաշխառուն» վիպակում Օտյանն արտացոլում է կերպարային դրամատիկ բախումներ, որոնք առաջանում են աղքատությունից խուսափելու և հարստության մոլուցքին տուրք տալու հողի վրա: Եվ այդ բախումներն առավել ցցուն և ցավոտ են դառնում այնտեղ, որտեղ կա իրական սեր: Զարուհին սիրահարված է Վահան անունով մի աղքատ երիտասարդի, սակայն հանկարծակիորեն պարզվում է, որ նա պարտավոր է զոհաբերել սերը՝ հանուն իր հոր՝ Հակոբ աղայից վերցրած պարտքերի՝ համաձայնելով դառնալ այդ վաշխառուի կինը: Թվում է՝ այդ առաջարկն անհեթեթ է ու անիրական, բայց, արի՛ ու տե՛ս, որ հեղինակը, օգտագործելով նորավեպի ժանրը, շրջադարձային և անսպասելի լուծում է տալիս դրամատիկ այդ իրողությանը՝ վիպակն ամփոփելով հետևյալ կերպ.

---

[13] Ե. Օտյան, Ընտիր երկեր //Հեղափոխության մակաբույծները/Արտասահմանցի գործիչը «Լույս», 1988, էջ 10:

[14] Ե. Օտյան, Ընտիր երկեր // Հեղափոխության մակաբույծները/Արտասահմանցի գործիչը, «Լույս», 1988, էջ 11:

***«.... զուգակշիռ մը ըրավ Վահանի և Հակոբ աղայի միջև և հետևությունը Հակոբ աղայի նպաստավոր եղավ: Հակոբ աղան հարուստ է, փարա ունի, տգեղ է եղեր, տարիքոտ է եղեր, ի՞նչ կըլլա. իրեն պետք եղածը էրիկ մըն է… Ճշմարիտ է, թե Հակոբ աղա տգեղ և անկիրթ է, բայց պետք չէ այդ թերություններուն իրենց բուն արժեքեն ավելի կարևորություն տալ, ստակը կծածկե ամեն բան: Եվ մի՞թե ինքը պարտավորված է ամբողջ ժամանակը անոր հետ անցընելու, չէ՞ որ առտուն կանուխ գործի պիտի երթա ու իրիկունը ուշ ատեն գա»:***[15]

Այնուհետև Օտյանը շարունակում է «արդարացնել» Զարուհու վարքագիծը՝ նշելով, որ Հակոբ աղայի հարստությունը թույլ կտար աղջկան ապրել շքեղ կյանքով, տան հոգսերից ազատված, արդուզարդի նկատմամբ ունեցած տենչանքը գոհացնելով: ***«Իսկ Սե՞րը»***,- հարցնում է Օտյանը: Ու ինքն էլ պատասխանում է իր իսկ հնչեցրած հարցին. ***«Սերը ամեն ատեն կրնար գտնել, եթե ուզեր, բայց ստակը ոչ»***:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հիրավի, Երվանդ Օտյանի գրական ժառանգությունը համամարդկային է և արժանավայել զարդ՝ երգիծանքի համաշխարհային գանձարանում, բայց այն հատկապես անգնահատելի է մեզ համար: Որպես մի հանճար՝ նա կարողացել է նկատել հայ ժողովրդի բաց նյարդը և, ցավոտ հպվելով դրան իր իսկ երգիծանքի գրչով, կոչ է արել ինքնամաքրվել, թոթափել այն բացասականն ու արատավորը, որ խոչընդոտում է ազգային բարգավաճումը, ստորջրյա վտանգավոր խութեր ձևավորում ազգային երազանքների իրականացման ճանապարհին: Այդ խութերը՝ երբեմն թաքնված, երբեմն էլ՝ բացահայտ, մինչև այսօր էլ առկա են ապազային միտված մեր ուղու վրա: Եվ, միգուցե, օտյանական երգիծանքին ավելի մոտենալն ու այն լիովին ընկալելը մեզ կօգնեն թոթափել ազգային արժեհամակարգի արատավոր այդ բեռը, որ բերում ենք անցյալից և դեռևս շարունակում ենք մեզ հետ տանել դեպի ապագա:

***Հիմնաբառեր.*** սոցիալական երգիծանք, ազգային արատներ, քաղաքական երգիծանք, Երվանդ Օտյան, նորավեպ, կեղծ բարեգործություն, արևտահայ գրականություն:

[15] Ե. Օտյան, Ընտիր երկեր // Վաշխառուն, «Լույս», 1988, էջ 67:

## THE PRESENCE OF YERVAND OTYAN IN OUR REALITY

Armen Jughuryan Saten Alaverdyan

The literary heritage of Yervand Otyan is a global and worthy adornment in the treasury of world satire, however it is especially valuable for the Armenian people. As a genius, he was able to notice the open-mindedness of the Armenian reality and, painfully touching on it with his satirical pen, called for self-control, in order to defuse the negativity and vice, that prevented national prosperity, to identify dangerous underwater reefs in the way of realizing the national dream. These reefs, sometimes hidden, sometimes open, are still present on the path of our future. And, perhaps, approaching the satire of contemporaries and fully understanding it will help us alleviate the vicious burden of the national value system that we carry from the past and still take with us to the future.

***Keywords:*** social satire, national vices, political satire, short story, Yervand Otyan, false charity, Western Armenian literature.

## ПРИСУТСТВИЕ ЕРВАНДА ОТЯНА В НАШЕЙ РЕАЛЬНОСТИ

Армен Джугурян Сатен Алавердян

Литературное наследие Ерванда Отяна безусловно является общечеловеческим и достойным украшением в сокровищнице мировой сатиры, однако оно особенно ценно для армянского народа. В свое время он гениально смог заметить непредубежденность армянской реальности и больно коснуться его своей сатирой, призывая тем к самообузданию, чтобы разрядить негатив и пороки, мешавшие национальному процветанию, выявить опасные подводные рифы на пути осуществления национальной мечты. Эти рифы, иногда скрытые, иногда открытые, все еще присутствуют на пути намеченного нами будущего. И возможно, приближение к отяновской сатире современников и полное ее понимание поможет нам облегчить порочное бремя национальной системы ценностей, которую мы несем из прошлого и все еще берем с собой в будущее.

***Ключевые слова:*** социальная сатира, национальные пороки, политическая сатира, новелла, Ерванд Отян, ложная благотворительность, западноармянская литература.

# ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Վալերի Միրզոյան

Հայ գրականության մեծագույն երախտավորներից մեկը՝ Երվանդ Խաչիկի Օտյանը (1869 – 1926), բազմաժանր գրող է՝ երգիծաբան, վիպասան, թատերագիր, թարգմանիչ, հրապարակախոս, քննադատ, թողել է գրական ծավալուն ժառանգություն: Բայց հենց սկզբից խոստովանենք, որ Օտյանը մինչ օրս չի ստացել իր վաստակին համարժեք գնահատում: Այնպես որ, նրան նվիրված անդրանիկ ամբողջական մենագրության ներածության մեջ ժամանակին արդարացիորեն է ասվել. «Սակայն այս մեծ գրողը, որով կարող է հպարտանալ ամեն մի ժողովուրդ, երկար ժամանակ ստվերի մեջ է մնացել և ինչպես հարկն է չի գնահատվել»[16]: Ավելի քան հիսուն տարի հետո էլ, ցավոք, նույնը պիտի կրկնենք, և, թերևս, սխալված չենք լինի՝ կրկնելով (հարկադրաբար) նաև մենագրության հեղինակի բացատրությունը[17], իհարկե, ժամանակաշրջանի փոփոխությունները հաշվի առնելով:

Ինչպես և այդ շրջանի մեր շատ գրողներ, Օտյանը հիմնականում ինքնակրթությամբ է զարգացում ստացել. մեկուկես տարի սովորել է Պոլսի Պերպերյան վարժարանում, հետո կրթությունը շարունակել տանը՝ հրավիրյալ մանկավարժների միջոցով: Իմացել է մի քանի լեզու, կատարել բազմաթիվ թարգմանություններ, բայց իր կոչումը գտել է լրագրական ասպարեզում, տպագրվել սկսել է 1887 թվականից: 1896 թ. հարկադրված է լինում Պոլսից փախչել (թուրքական իշխանության հետապնդումից մազապուրծ՝ հրաշքով հայտնվելով ֆրանսիական մի նավում) Աթենք, այնուհետև տասներկու տարի դեգերել՝ Ալեքսանդրիա, Լոնդոն, Փարիզ, Վիեննա, Բոմբեյ, Կահիրե[18]: 1909-ին վերադառնում է Պոլիս, 1915 թ. մյուս հայերի հետ աքսորվում Դեյր Էզ-զոր, վերստին հրաշքով փրկվում նահատակվելուց: Եվ այսօրինակ կյանքով ապրած գրողը մեզ թողել է վիթխարի

---

[16] **Ան. Մակարյան**, Երվանդ Օտյան, Եր.: Հայաստան, 1965, էջ 16:

[17] Արձանագրելով Երվանդ Օտյանի վաստակի անտեսումը՝ Անուշավան Մակարյանը շարունակում է. «Դրա հիմնական պատճառը նրա երկերի քաղաքական սրությունն է, դիմակազերծող ռեալիզմը, ոչնչացնող սատիրան, ժողովրդա-դեմոկրատական առաջավոր գաղափարախոսությունը, ժողովրդի իրավունքների ու շահերի բուռն հետևողական պաշտպանությունը,– հատկություններ, որոնք հաճելի չեն եղել «մեծ աղաներին» ու ժողովրդի հաշվին ապրող քաղաքական մակաբույծներին» (Ան. Մակարյան, Երվանդ Օտյան, էջ 16):

[18] Իր թափառումների մասին Երվանդ Օտյանը հանգամանորեն գրել է հուշագրություններում. տե՛ս, մասնավորապես՝ **Ե. Օտյան**, Տասներկու տարի Պոլսեն դուրս // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. չորրորդ, Եր.: Հայաստան, 1962:

գրական ժառանգություն, որն ինչպես հարկն է դեռ հարկավոր է յուրացնել, խելամտորեն ագուցել նորօրյա Հայաստանի մշակութային և քաղաքական կյանքի ընթացքին: Չմոռանանք նաև այն ճշմարտությունը, որ ստեղծագործողին գնահատելուն կօգնի նաև նրա անձնային բնութագրի իմացությունը. բարեբախտաբար, դրանցից մեկը մեզ հասել է Երվանդ Օտյանի հետ անմիջաբար շփված և նրա մտերմությունը վայելած մեկ այլ մեծ գրողի՝ Ալեքսանդր Շիրվանզադեի խորունկ նկարագրության շնորհիվ. «Արտիստ էր որպես գրող, որպես մտածող ու գործող, արտիստ իր ճաշակով, իր նրբազգացությամբ, իր կրթությամբ: Բոհեմյան էր, բայց առանց վյուլգերության, բարեկամ՝ առանց ակնկալության, ընկեր՝ առանց շահախնդրության»[19]:

Հանրային կյանքի վերաբերյալ Երվանդ Օտյանի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումներին մեր անդրադարձը սկսենք նրա աշխարհայացքի վերլուծությունից, որ ամենից ցայտուն արտահայտված է նրա հրապարակախոսական դիրքորոշման մեջ: Երբ 1901 թվականին Օտյանը Փարիզում սկսեց տպագրել իր առաջին ամսագիրը (փոքրածավալ «ամսատետրը», որն ինքը «պարսավատետր» էր անվանում), հարկ համարեց նախաբանում հստակեցնելու դրա հիմնական առաքելությունը՝ «մեր ծիծաղը կամ զայրույթը լսելի ընել՝ վախկոտ իրավախոհություններու, գաճաճ վախերու, տխմար զգուշավորություններու, լիրբ լռություններու ու ընդոստող ապուշ հավակնություններու մեջտեղ»[20]: Հաջորդ տարի, տեղափոխվելով Եգիպտոս և վերսկսելով հրատարակությունը, նաև վերահաստատում է իր հավատամքը, այն է՝ «անհաճո ըլլալ» շատ շատերի համար. «Ա՜հ, գերագույն երանությունը անհաճո ըլլալու բոլոր անոնց՝ որոնք կարհամարհես: Քու մտավորականի բարձրութենեդ դիտել ոտքիդ տակ գալարվող ամբարտավան ոչնչություններու վիրահար ծամածռությունները, խնդալ ու անցնել... »[21]:

Եվս մեկ անգամ, արդեն 1906 թ., շարունակելով ընդհատված ամսագրի տպագրությունը, Օտյանը հարկ է համարում առավել ընդլայնված արտահայտվելու. «Հայտնի է որ այս թերթը զավեշտական պիտի ըլլա, բայց ոչ այն ձևով ինչպես ըմբռնված է ընդհանրապես մեր մեջ, այսինքն՝ իբրև գռեհիկ հացկատակ մը կամ հտպիտ մը որ իրեն պաշտոն ընտրած է ժողովուրդը խնդացնել կարգ մը խեղկատակություններով: Չէ, մենք խնդացնողներ չենք այլ՝ խնդացողներ և եթե մեզի հետ ընթերցողն ալ խնդա, ատիկա իր գիտնալիք բանն է և մենք ատոր համար ոնէ ջանք պի-

---

[19] **Ալ. Շիրվանզադե**, Երվանդ Օտյանը // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. ութերորդ, Եր.: Հայպետհրատ, 1961, էջ 535:

[20] **Ե. Օտյան**, «Ազատ խոսք» // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. առաջին, Եր.: Հայաստան, 1960, էջ 553:

[21] **Ե. Օտյան**, Մեր անուղղությունը // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. առաջին, Եր.: Հայաստան, 1960, էջ 564:

տի չընենք: Պիտի խնդանք առանց քեն կամ ոխ, ատելություն կամ նախանձ խառնելու մեր ծիծաղին մեջ, որովհետև ծիծաղը սուրբ, աստվածային է. գուցե միակ ձիրքն է որ մեզ կը բաժնե մյուս բոլոր կենդանիներեն որոնք չեն գիտեր խնդալ»[22]:

Երվանդ Օտյանի կյանքին ու բազմաբնույթ գործունեությանը ծանոթացումը լիակատար հիմք է տալիս մեզ եզրակացնելու, որ Օտյան լրագրողը, հրապարակախոսը, երգիծաբանը, հասարակական գործիչը երբեք չդավաճանեց իր սկզբունքներին, չընթարկվեց ճնշումների, չընկճվեց մշտական հալածանքից, այլ կարողացավ նյութական անբարենպաստ պայմաններում հարատև ստեղծագործել՝ մնալով «անհաճո» բազում անձանց և երևույթների համար: Եվ իսկապես, օտյանական նրբին հեգնանքի և անխնա ծաղրի թիրախը շատ ընդգրկուն է՝ «կեղծ փրկիչներ», «օճառի պղպջակներ» շինված համբավներ», ինքնահավան պոռոտախոսներ, «անկեղծության աճպարարներ», սուտ բարերարներ, «գողությամբ պարկեշտացած ազնվաշուքներ», բարոյականության անբարո քարոզիչներ, «հոխորտաբար հղփացող աղտոտ մենծ աղաներ», սեփական լեզուն արհամարհող «ալաֆրանկա» հայեր, պատեհապաշտ քաղաքական գործիչներ, «ունայնության վրա կառուցված արժանիքներ» և այլն[23]:

Արատավոր այս կերպարների մի իսկայական շարք ենք տեսնում անխոնջ հեգնաբանի երկերում՝ «Միջնորդ Տեր պապան», «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Հեղափոխության մակաբույծները», «Պրոպագանդիստը», «Ազգային բարերարը», «Վաճառականի մը նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը», «Գործի մարդիկ», «Վաշխառուն», «Մեր երեսփոխանները», «Թաղականին կնիկը», «Կավե հերոսներ», «Ես դրսեցի չեմ առներ», «Նոր հարուստներ», «Համբարձում աղա» և այլն: Վերջապես նրա գլուխգործոցը, համաշխարհային հեգնաբանական գրականության լավագույն գործերից մեկը՝ «Ընկ. Բ. Փանջունին»: Դե, իսկ եթե աչքներս կտրո՞ւմ ենք Օտյանի գրվածքից եւ փոքր-ինչ ավելի ուշադրությամբ, սակայն Օտյանի աչքերով ենք նայում մեր կյանքի՞ն... Իհարկե, Երվանդ Օտյանը տվել է 19-րդ դարի վերջի – 20-րդ դարի սկզբի պոլսահայության (մասամբ նաև՝ եգիպտահայության) պատկերը, բայց եկեք խոստովանենք, որ 21-րդ դարի հայերիցս շատերի համար էլ մեծ երգիծաբանը պիտի որ «անհաճո» լինի, այդքանով էլ՝ արդիական՝ հայ հասարակության

---

[22] **Ե. Օտյան**, «Ազատ խոսք» (նոր շրջան) // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. առաջին, Եր.: Հայաստան, 1960, էջ 581:

[23] Երվանդ Օտյանի հեգնանքի և մանավանդ քաղաքական սատիրայի արդյունավետության մասին է վկայում նրա հրապարակումների յուրատեսակ «հետադարձ կապը». ծաղրված և ծաղրի արժանի ու ենթակա անձինք, մի կողմից, սարսափում էին նրա ֆելիետոններից ու պամֆլետներից, մյուս կողմից՝ հակահարված էին տալիս՝ հեղինակի հասցեին կեղծիքի և զրպարտության տարածումից մինչև բացահայտ ահաբեկման փորձեր:

բարոյական առողջացման հիմնախնդիրների ըմբռնման և համարժեք լուծումների փնտրտուքի համար:

Այո, Օտյանի բնավ էլ լոկ վերացական չի խոսում, այլև շատ որոշակի, հարկ եղած դեպքում՝ նաև ուղղակի անուններ նշելով, այլ կերպ ասած՝ ընդհանրական կերպարներ ստեղծող երգիծաբանը տեղը զիջում է միանգամայն որոշակի թիրախներ խոցող հրապարակախոսին: Ինքն էլ բացատրել է 1910 թ. իր մի հոդվածում. «Մեր կռիվը ստության, կեղծիքի, շահագործության, խաբեբայության դեմ է. և եթե անձերով կզբաղինք, հաճախ պատճառը այն է, որ այդ անձերեն ամեն մեկը իր մեջ կը մարմնավորե ստության, կեղծիքի, շահագործության կամ խաբեբայության այլազան երևույթներեն մեկը»[24]:

Ավելին, գործելակերպի հռչակված սկզբունքներն իրականացնել՝ նշանակում է հանրային կյանքում ամենաիսկական հեղափոխություն կատարել, ահա թե ինչու մեծ գրողն ու հասարակական գործիչը փաստորեն խլում է «հեղափոխություն» բառը դրա վեհ իմաստն աղավաղողներից եւ իր ու համակիրների անունից շիփ-շիտակ հայտարարում. «Մենք հեղափոխականներ ենք, բայց հեղափոխությունը մեզի գործ կամ արհեստ չենք ըրած, այսինքն զուտ գաղափարային հեղափոխականներ, որոնք առանց որոշ ամսականի, առանց «գիտակից» վճարումներու, առանց սակարկված «աշխարհայացքներու», առանց սերտված «ինքնագիտակցության» և գեշ մարսված «ղեկավարող սկզբունքներու», անկախորեն ու տիրաբար իրենց սկզբունքները կը քարոզեն: Մեր հեղափոխությունը «պլատֆորմ» չունի և երբեք չի փորձեր կակուղ ու թույլ ուղեղները իր գլանին մեջ կաղապարել և միօրինակ մտածողություններ պարտադրել իր աղանդավորներուն, ինչպես կընեն լատինական եկեղեցին և հայ կուսակցությունները»[25]:

Երվանդ Օտյանի աշխարհայացքը ճիշտ գնահատելու համար ուշադրություն դարձնենք, որ նրա բոլոր գործերում քիչ չկան նաև լուսավոր, ազնիվ, առաքինի անձինք, իսկապես ազգանվեր գործիչներ: Գրողը հավատարիմ է եղել իր խոստմանը (վերոնշյալ նախաբանում արված). «Ազնիվ երևույթ մը, բարի գործ մը, իրական արժանիք մը մեզի սակայն անտարբեր չեն թողուր: Եթե ասոնց հանդիպելու մխիթարությունը ունենանք մեր ճամբուն վրա, սրտագին համակրանքի բարև մը պիտի տանք»[26]: Այստեղ հատկանշական է (կարծում եմ՝ նաև հույժ արդիական) լրագրողական էթիկայի օտյանական ըմբռնումը. «Մեր գերազանցությանը համոզ-

---

[24] **Ե. Օտյան**, Մեր ուղղությունը // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. չորրորդ, Եր.: Հայաստան, 1962, էջ 685:

[25] Անդ:

[26] Ե. Օտյան, «Ազատ խոսք», էջ 554:

ված ու անոր մեջ փաթթված մարդիկ չենք այստեղ: Կընդունինք ամեն թելադրություն, կը բավե որ համոզվինք անկեղծությանը»[27]:

Երվանդ Օտյանի ընտրած թեմաների և անձ-թիրախների առումով երբ ծանոթանում ենք գրողի աստանդական կյանքին, ոչ միայն օտարների, այլև յուրայինների սանձազերծած հալածանքին[28], մտավորականի իր տեսակը պահպանելու տիտանական ջանքերին, նման պայմաններում ձևավորված աշխարհայացքին, ապա ինքնին հասկանալի է դառնում, թե ինչու Երվանդ Օտյանի առանձնահատուկ ուշադրությունն են «վայելում», այսպես կոչված «գործի մարդիկ»՝ խորամանկ ձեռներեցներ, ճարպիկ խաբեբաներ, ամուսնություն անսկզբունք միջնորդներ, որ իրական գործարարության հետ ոչ մի կապ չունեին, բայց և ամեն ինչի ձեռք էին զգում, ամեն տեսակի կասկածելի գործարք անում հանուն շահի՝ «գործի մարդ մը առանց ոևէ խոստովանելի գործ ունենալու»[29]:

Դրանցից մեկը, օրինակ, գործի մարդու տաղանդով փայլում էր փաստաբանության ասպարեզում. ահավասիկ նրա կերպարը օտյանական անզուգական գրչի պատկերմամբ. «Երեսուն տարիէ ի վեր Սահմանադրության ամեն օրենքները, կանոնները, հոդվածները, կետերն ու ստորակետերը ծամած, կուլ տված և որոճացող կենդանիներու պես նորեն ու նորեն ծամած ու մարսած էր: Նույն իսկ ակնհայտնի խաբեբայություն մը չկար զոր կարող չըլլար հաշտեցնել օրենքին հետ: Անհարազատ տղաքը հարազատել, հարազատները անհարազատել, ամուսնացածը կրկին ամուսնացնել, չամուսնացածը ամուսնացած հռչակել, հրեան հայ շինել, հայը հոռոմ շինել, հոռոմը տաճիկ շինել, ձախեն բարև մը տալ Սահմանադրության և ապօրեն կնունք մը կատարել, աջեն բարև մը տալ ու ավազակ զանձապահ մը արդարացնել, իրեն համար ջուր խմելու պես բաներ էին»[30]:

Եվս մի նման կերպար, «գործի մարդ»... հոգևորականների շրջանից. «Տ. Մկրտիչ «գործի մարդ» քահանա էր, որ կրոնավորություն կըներ վաճառականություն ընելու պես: Իրեն համար կրոնքը խոշոր խանութ մըն էր. տունօրհնեք, խաչահանգիստ, խոստովանանք, նշանտուք, կնունք, հաղորդություն, ավետարան, բարի խրատ, կշտամբանք, թաղում, հարսնիք և այլն ապրանքներ էին զորոնք պետք էր կարելի եղածին չափ սուղ ծախել

---

[27] Անդ:

[28] Ավելորդ չէ, կարծում եմ, մեջբերել Երվանդ Օտյանի դառնորեն արված (վերստին նշեմ՝ կարծես նաև մեր օրերի համար) մի արձանագրություն. «Իրողությունը խեղաթյուրել մարդ մը աղտոտելու համար՝ կարծեմ շատ ստորին միջոց մըն է որ ափսոս, անխղճահարությամբ ի գործ կը դրվի հաճախ մեր հեղափոխական մամուլին մեջ» (Ե. Օտյան, Տասներկու տարի Պոլսեն դուրս, էջ 52):

[29] **Ե. Օտյան**, Գործի մարդիկ // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. առաջին, Եր.: Հայաստան, 1960, էջ 356:

[30] Անդ, էջ 356 – 357:

և միշտ ջանալ առաջ ավրվածները քշել»[31]: Շահամոլությունը պայմանավորում է այս տեսակի մարդկանց հանրային վարվելակերպը, ինչը հեղինակը բնութագրում է նույն կերպարի օրինակով. «Հպարտ ու ամբարտավան իրմե տկարներուն հետ՝ Տ. Մկրտիչ ամենեն գետնաքարշ սողոսկումներն ուներ հարուստներուն դիմացը և այս էր անոնց մոտ իր հաջողության գլխավոր պատճառը: Կեղծավորությունը արվեստի մը նրբություններուն հասուցած և իրավցնե զյուտեր ըրած էր այդ ճյուղին մեջ»[32]:

Եվ ուրեմն, զարմանալի չէ, որ մարդկանց այս խավի համար այն «անուղղա ուղղամիտ», օրինավոր, պարկեշտ մարդիկ, որոնք ձգտում են արդար քրտինքով, ոչ թե խաբեությամբ, իրենց հացը վաստակել, և «կհամառին միշտ ուղիղ ճամբեն քալելու», դրանք ահա «ընդհանրապես «ապուշ» մակդիրով կմկրտվին»[33]:

Բարոյականության առումով «գործի մարդ» տեսակից առանձնապես չեն տարբերվում այն անձինք, որոնք չունենալով իրական արժանիքներ, ձգտում են այդպիսիք ցուցադրել, այսինքն՝ փորձում են թյուր ինքնամատուցմամբ մոլորեցնել ուրիշներին: Այս երևույթը, իհարկե, նոր չէ, և դրա մասին շատերն են գրել, և անկասկած, էլի է գրվելու, քանի որ հատկապես մեր օրերում ոչ թե իրապես «լինելու», այլ լոկ «թվալու» հնարավորություններն առավել ընդլայնվել են: Այս առումով նման անձնավորության օտյանական մի նկարագրություն հույժ օգտակար է որպես դիդակտիկ նյութ. «Լևոն, ինչպես ըսինք, գեղադեմ երիտասարդ մըն էր, բավական զարգացած, խոսուն և համարձակ: Իր գլխավոր հատկությունն էր ամենափոքր կարողությունները արժեցնել, երևան հանել, զանոնք կարելի եղածին չափ խոշորցնելով: Կյանքի մեջ հաջողելու ամենեն էական պայմանն էր այս և երիտասարդը հույսը դրած էր իր այս հատկության վրա»[34]:

Երվանդ Օտյանի համար հանրային բարքերի ապականման, արժեքների խաթարման չափանիշներից մեկն էլ երիտասարդ աղջիկների՝ ամուսնության հարցում ընտրություն կատարելու դիրքորոշման արձանագրումն է իր հերոսուհիներից մեկի՝ Սաթենիկի օրինակով. «Իր բուն մտատիպարն էր բացարձակապես «գործի մարդ»-ը, վաճառական, սեղանավոր կամ վաշխառու. աչքը բաց, եփուն, շունշանորդի, դիմացինը խաղի բերող, աջեն ձախեն կրծոն ուտող գործի մարդը»[35]:

Քաղաքական գործիչների մեջ նույնպես քիչ չեն նույնաբնույթ արժեքային համակարգ ունեցող անձինք՝ բացահայտ կամ քողարկված «գործի մարդիկ», իրականում զուտ անձնական շահերը հետապնդող ճարպիկ

---

[31] Անդ, էջ 366:

[32] Անդ:

[33] Անդ, էջ 375:

[34] **Ե. Օտյան**, Ես դրսեցի չեմ առներ // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. հինգերորդ, Եր.: Հայաստան, 1962, էջ 55:

[35] Ե. Օտյան, Գործի մարդիկ, էջ 349:

դատարկախոսներ. Երվանդ Օտյանը զուր չի նրանց օժտել խոսուն ազգանուններով՝ «Կերավյանց», «Կուլտամյանց», «Ինձելտուրյանց», «Կակայանց», «Փանջունի», «Սարսափունի», «Առկերունի», «Ռմբունի» և այլն: Պերճախոս երևույթ է նաև կուսակցական գործիչների դյուրին ճամբափոխությունը. դրանց մասին գրողի կարծիքը լավագույնս արտահայտված է մի հեգնական արձանագրման մեջ. «Բանտ մտնող հնչակյան մը անկէ դուրս ելած էր իբրև թունդ դաշնակցական և փոխադարձաբար»[36]:

Առհասարակ, Օտյանը չի խնայում անբարո և պորտաբույծ քաղաքական գործիչներին՝ լինեն դրանք օսմանյան խորհրդարանի անդամներ, կառավարության անդամներ, թե հայոց ինքնակառավարման մարմնի՝ Ազգային ժողովի երեսփոխաններ: Օտյանն ինքը եղել է Ազգային Ժողովի երեսփոխան և մոտիկից է ուսումնասիրել հայոց երևելիների վարքուբարքը, նկարագրել անպտուղ ճառերը, կիսադատարկ դահլիճում անցնող տաղտկալի նիստերը[37], ինքնասիրահարված շատ գործիչների[38]: Այդուհանդերձ, ամենամեծ վնասը հայոց միասնականությանը հասցնում են հայկական կուսակցությունները՝ իրենց փոխադարձ անհանդուրժողականությամբ: Ահա թե ինչու մեծն հեգնաբանը երբեմն մի կողմ է դնում քաղաքական սատիրան ու այլաբանությունը և ուղղակի շպրտում դրան ղեկավարների երեսին. «Անցան այն ժամանակները ուր տոն քիշոթական գործունեությամբ կարելի էր ժողովրդի աչքին փոշի նետել և հանուն սկզբունքային հարցերու՝ անձնական շահեր հետապնդել»[39]:

Երբ 1913 թվականին օսմանյան կառավարությունը հայտարարեց, թե պատրաստվում է հայկական վեց նահանգների մեջ մարդահամար անցկացնել՝ իբր հիմք հետագա բարենորոգումների համար, այդ մոլորեցնող ձեռնարկմանն ի պատասխան՝ Երվանդ Օտյանը հանդես է եկավ մի սուր պամֆլետով. «Հայերը կը ջարդվին, հայերը կը կողոպտվին, հայ կիները կառևանգվին, հայերուն հողերը կը հափշտակվին: Կառավարությունը կուզէ այդ չարիքներուն դարման մը տանել՝ ասոր համար ի՞նչ

---

[36] **Ե. Օտյան**, Տասներկու տարի Պոլսեն դուրս // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. չորրորդ, Եր.: Հայաստան, 1962, էջ 136:

[37] Պարզվում է, որ Ազգային ժողովի նիստերի կիսադատարկ դահլիճը հինավուրց հայկական «ավանդույթ» է. ահավասիկ երեսփոխան հեղինակի վկայությունը. «Առաջին և երկրորդ կարգի ունկնդիրներու հատկացված բաժինները լեցուն էին, մինչ երեսփոխաններեն շատերու թիկնաթոռները պարապ էին, իրենց վրա բազմողներու գլուխներուն պես» (**Ե. Օտյան**, Ազգ. ժողովի վերջին նիստը // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. չորրորդ, Եր.: Հայաստան, 1962, էջ 640):

[38] Երեսփոխանների դիմանկարների օտյանական շարքը յուրատեսակ շարունակությունն է Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերի» մեջ պատկերված կերպարների. տե՛ս **Ե. Օտյան**, Մեր երեսփոխանները: Մեր Ազգային ժողովը, Եր.: Մազադաթ, 1999:

[39] **Ե. Օտյան**, Ժողովուրդը կը բողոքե // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. չորրորդ, Եր.: Հայաստան, 1962, էջ 673:

հարկ կա նախ հասկնալու, թե քանի՞ հայ, քանի՞ թուրք և քանի քյուրտ կա այդ նախանգներուն մեջ: Ասոնց քանակությանը չափո՞վ արդարությունը պիտի գործադրվի միթե»[40]: Հարցադրումներն ավարտվում են մարդասեր գրողի հավատո հանգանակի հստակ ձևակերպմամբ. «Արդարության համար մեկ անմեղը պետք է հարյուր ոճրագործեն ավելի զորավոր նկատվի, ըլլա հայ, ըլլա քյուրտ»[41]:

Երվանդ Օտյանի հանճարի փայլատակումը, անտարակույս, «Ընկ. Բ. Փանջունի» եռագրությունն է: Սրա հերոսը թեպետ կերտվել է որոշակի նպատակով, սակայն Փանջունին հավաքական մի կերպար է, որի նախատիպը կարող ենք գտնել պատմության շատ էջերում, բոլոր ժողովուրդների կյանքի հատկապես շրջադարձային փուլերում. սա, իսկապես, հեղափոխության «մակաբույծ» է՝ ի հայտ է գալիս հեղափոխության ընթացքում, անվերջ խոսում հեղափոխությունից, բայց և ամենամեծ վնասը հասցնում հեղափոխության նպատակներին: Կարևորն այն է, ամենից առաջ, որ խուսափենք Փանջունու պարզեցված, մակերեսային ընկալումից, ուստի և խուսափենք փանջունիականության հանրային վտանգի թերագնահատումից:

Առերևույթ՝ ամեն ինչ պարզ է. Փանջունին թերուս է (դա վկայում է հեղինակը իր հերոսի կենսագրական նոթեր-առաջաբանում), շաղակրատ («Փանջունի շատ ուշ լեզու ելած է, բայց անգամ մը խոսիլ սկսելե ետքը, ալ բերանը դյուրավ չէ գոցած»), ընչասեր (անվերջ կրկնում է կուսակցության կենտրոն հղած նամակներում՝ մի քիչ փող ուղարկեք), սերտած մտակաղապարների գերի («Մենծ էֆենդին պետք է լինի ազգասեր, փառամոլ. ազգին շահն իր շահին զոհող. բուրժուան պետք է լինի ապականած, դրամապաշտ, անբարոյական. հարուստը պետք է լինի կեղեքիչ, անխիղճ. հեղափոխականը՝ իդեալիստ, մաքուր, անշահախնդիր, անկեղծ, անձնվեր), կուսակցամոլ («Չիք ուղղություն և ճշմարտություն արտաքո մեր կուսակցության») և այլն[42]: Եվ ուրեմն, ի՞նչ մի հանրային վտանգ է ներկայացնում այս պարզունակ կերպարը: Այդպես չէ, և պատմության ընթացքում ժողովուրդները քանի-քանի անգամ են խաբվել՝ դառնալով հերթական «ֆյուրերի», «կաուդիլիոյի» կամ «վոժդի» զոհը:

Նախ և առաջ, պետք է ընդունենք, որ Փանջունին բնավ շնորհազուրկ չէ. ընդհակառակը, քարոզիչի անուրանալի ձիրք ունի. «Իր տաք, համոզված, եռանդուն և անխոնջ պերճախոսությունը կը հրդեհեր սառած հոգիները, կը պրկեր, կը զորացներ թուլցած ջիղերը և կը խանդավառեր միամիտ էությունները»[43]: Նա նաև հետևողական է, աննկուն և համառ:

---

[40] **Ե. Օտյան**, Նախ մարդահամար հետո բարենորոգում // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. չորրորդ, Եր.: Հայաստան, 1962, էջ 655:

[41] Անդ, էջ 65:

[42] **Ե. Օտյան**, Ընկ. Բ. Փանջունի, Եր.: Հայաստան, 1989, էջ 20, 237, 247:

[43] Անդ, էջ 28:

Որքան էլ տարօրինակ է թվում, Փանջունին լիովին համոզված է, թե ինքը ծառայում է թե՛ պրոլետարիատի ազատագրման գործին, և թե՛ «հայ ազգի վերածնությանը»: Եվ սակայն, այս դրական հատկությունները նույնիսկ փաստացի վնաս են հասցնում ինչպես մարդկային համակեցության բնականոն պայմանների ապահովման, այնպես էլ զուտ ազգային խնդիրների լուծման առումով:

Ինչո՞ւ: Եվ ո՞րն է ընկեր Բ. Փանջունու կերպարի բանալին: «Acta, non verba, այս պետք է լինի մեր նշանաբանը». որպես մարտակոչ՝ նա իր զինակիցներին նետում է «Գործ, ոչ թե խոսք» ասացվածքը: Ընդհանրապես, սիրում է կրկնել, թե «խորհուրդի ժամանակ չէ, այլ գործելու»[44]: Սա առհասարակ հատուկ է նմանօրինակ եռանդուն գործիչներին. Օտյանի մեկ այլ հերոս ևս այդպես էր հանդիմանում իր հետևորդներին. «Պարապ խոսքեր լսելու ատեն չունիմ... Խոսքի ժամանակը անցուցինք, հիմակ գործելու ժամը հնչեց»[45]:

Ըստ իս, Օտյանը բնավ պատահաբար չէ Փանջունու «շնորհել» հիշյալ ասույթը՝ այն էլ լատիներեն: Նախ՝ մեկ անգամ ևս ցանկացել է, թերևս, շեշտել Փանջունու գաղափարների օտարամուտ լինելու հանգամանքը: Ապա՝ անհարկի օտաբանությունների գործածությունը բնորոշ է հեղափոխական գործչի համար առհասարակ. հիշենք Օտյանի «Հեղափոխությունը հայ լեզվին մեջ» փայլուն ակնարկը, որտեղ իր հայերեն գրված նյութը ամսագրի խմբագիրը ստիպում է հագեցնել օտար բառերով, թեպետ դրանց բոլորի համարժեքը կա հայերենում[46]: Վերջապես՝ խոսքի և գործի նմանօրինակ հակադրումն առավել խորությամբ է բնութագրում վայ-հեղափոխականի, փուչ ազգային գործչի էությունը, լիովին բացահայտում կերպարի կատակերգաողբերգական բնույթը:

Առավել կարևոր է տեսնել Փանջունու ամենամեծ հանցանքը. նա վարկաբեկում է մարդկային խոսքը՝ գաղափարը, միտքը, տեսությունը, ուսմունքը: Եվ տվյալ պարագայում բնավ էական չէ պղծվող խոսքի առարկայական բովանդակությունը: Օտյանի երկում վերջինս մարքսիստական դրույթների խառնիճաղանճ հավաքածուն է, ինչն էլ երկար ժա-

---

[44] Անդ, էջ 102, 216:

[45] **Ե. Օտյան**, Պրոպագանդիստը // Ընտիր երկեր, Եր.: Լույս, 1988, էջ 139:

[46] Մի նմուշով համեմատենք մերժված («հոսհոսի») լեզուն «հեղափոխականի» հետ: «Ազատությունը ձեռք կբերվի արյան գնով և ոչ թե դիվանագիտական միջոցներով: Այժմ հայկական հեղափոխությունը նոր շրջանի մը մեջ մտած է, և կեղծ բարենորոգումներով չէ որ պիտի գոհանանք՝ Հայաստանը ավերող ահռելի աղետքին հանդիսատես ըլլալե ետքը.... Ազատությունը ձեռք կբերվե արյան գնով և ոչ թե դիբլոմատիկական միջոցով: Այժմ հայկական հարցը մտել է մի նոր ֆազիսի մեջ և ֆիկտիվ ռեֆորմներով չպետք է գոհանանք, Հայաստանը ավերող ահռելի կատաստրոֆային սպեկտորները լինելուց ետքը» (**Ե. Օտյան**, «Հեղափոխությունը՛ հայ լեզվին մեջ // Ընտիր երկեր, Եր.: Լույս, 1988, էջ 534):

մանակ խոչընդոտում էր «Ընկ. Բ. Փանջունու» տպագրությանը խորհրդային տարիներին (միայն այս հիմքով գիրքը մերժող գրաքննիչները դրանով ցույց էին տալիս, որ... իրենք առանձնապես չեն տարբերվում Օտյանի հերոսից): Իսկ եթե Փանջունին լիներ մի խանդավառ կրոնախև, ապա չէ՞ որ միևնույն մոլեռանդությամբ նա քրիստոնեություն կամ կրիշնայականություն էր քարոզելու՝ վարկաբեկելով այդ ուսմունքները: Եթե լիներ, դիցուք, սովաբուժության գաղափարագար, միևնույն թափով գռեհկացնելու էր այս ասպարեզի հեղինակությունների խոսքը: Եթե «խփնվեր» կենսադաշտով կամ այլմոլորակայիններով, անխուսափելիորեն վնասելու էր լուրջ մարդկանց դատողությունները:

Չըմբռնված խոսքը չի կարող բարերար գործ դառնալ՝ արարիչ սկիզբ լինել: Մակերեսորեն յուրացված խոսքը՝ ուսմունքը, գաղափարը, ծրագիրը և այլն, կործանարար է թե՛ գործի, թե՛ բուն խոսքի համար: Ա՛յս դասն է ահավասիկ հարկավոր քաղել մեծն երգիծաբանի հանճարեղ գործից, հատկապես ա՛յս միտքը ըմբռնել:

Իսկ սրանից բխում է մեկ այլ, դարձյալ մշտապես հրատապ դաս. հասկանալ, թե ինչո՞ւ և ինչպե՞ս են հին ու նոր փանջունիները բազում հետևորդներ ձեռք բերում, թեկուզ առժամանակ՝ դառնում զանգվածների մտքի և հոգու առաջնորդը: Երվանդ Օտյանը հուշում է բացատրությունը. արդեն «Հեղափոխության մակաբույծները» շարքի առաջին պատմվածքում նա իր հերոսի շուրթերով է արձանագրում, թե «անիմաստ խոսք մը միշտ լավագույն ազդեցությունը կընե ամբոխին վրա»[47]:

Անիմաստ խոսքի մեկ նմուշ նշված պատմվածքի մի կերպարից. «Ես ալ մասնակցեցա վիճաբանության, պաշտպանեցի միության գաղափարը, հետո ցույց տվի, որ անջատ գործունեությունը լավագույնն էր, կեդրոնացումին ի նպաստ խոսեցա և վերջացուցի խոսքս ապակեդրոնացումի առավելությունները պարզելով»[48]: Երկու օրինակ էլ հեղափոխական քարոզիչների խոսքից. «Նույնիսկ եթե դուռը բաց գտնենք, նախ պիտի խորտակենք ու հետո ներս մտնենք»[49]: «– Թեկուզ անոթի մեռնիք՝ պետք է դիմանաք, – վճռեց ընկեր Սարսափունի,– մինչև որ այսօր անոթի չմեռնիք՝ չեք կրնար վաղը լավ կշտանալ»[50]:

Այս պարագայում «անիմաստ խոսքը» Երվանդ Օտյանի ցայտուն մատուցմամբ է լիովին բացահայտում իր անիմաստությունը, մինչդեռ ընդունենք, որ տվյալ հաղորդակցական համակարգում այդ խոսքն իմաստ ունի, քանի որ ապահովում է հասցեատիրոջ վարքագծի վրա խոսողի ազդեցությունը՝ վերջինիս մտադրությանը համապատասխան: Խոստովա-

[47] **Ե. Օտյան**, Հեղափոխության մակաբույծները // Ընտիր երկեր, Եր.: Լույս, 1988, էջ 6:

[48] Անդ, էջ 9:

[49] Ե. Օտյան, Ընկ. Բ. Փանջունի, էջ 28:

[50] Անդ, էջ 156:

նենք նաեւ, որ իրականում հաճախ չենք էլ նկատում մեր ասածի եւ մեզ ասվածի անիմաստությունը՝ լինի առտնին խոսքուզրույցի մեջ, թե՝ պաշտոնական եւ նույնիսկ գրավոր խոսքում: Իսկ սա, Օտյանի տրամաբանությամբ, նշանակում է, որ մենք, որպես հանրություն, ինքնին խոցելի ենք ամբոխահաճ ելույթների, առհասարակ կառավարման ամբոխավարական եղանակներին դյուրին ենթարկվելու առումով:

Արդ, եկեք, վերստին Երվանդ Օտյանի օգնությամբ, «ամբոխ» ասվածը փոքր-ինչ տրոհենք: Մասնավորապես, ուշագրավ է, որ խորունկ հոգեվերլուծաբանի հանգույն նա ուրվագծել է Փանջունի առաջնորդին արժանի փանջունիական հետեւորդների կերպարը. «Ապուշության սահմանները դեգերող սոսկալի կերպով անտանելի էություններ, որոնք իրենց կյանքը կանցնեն բերանաբաց հիանալու ոևէ մեկուն վրա, որ բախտը կամ մանավանդ անբախտությունը կունենան իրենց վրա ազդելու: Ա՛լ անիկա է իրենց մտատիպարը՝ հերոսը՝ կուռքը: Անոր պես խելացի, անոր պես կատարյալ, անոր պես աղվոր, անոր պես ուժով մարդ չի կա ու վա՜յ անոր, որ համարձակվի խնդրո նյութ ընել իրենց կուռքին հազար ու մեկ արժանիքներեն մին. այն ատեն գրեթե մոլեգին կատաղությամբ կը հարձակին ընդդիմախոս ամբարիշտին դեմ և կը ջանան ամեն խենթուխելառ միջոցներով պաշտպանելու սրբություն սրբոցը որ սակայն, իրենց իսկ հայտարարությամբ «արդեն երբեք պաշտպանվելու պետք չունի»[51]:

Ասվածը բացատրում է փանջունիատիպ առաջնորդների՝ թեկուզ ժամանակավոր հաջողությունը, բայց չի նվազեցնում ամբոխավարության վտանգը: «Անիմաստ խոսք»-ի մոգական ազդեցությունը ոչ թե թուլանալու է, այլ ուժեղանալու: Իրոք, գովազդի կցկտուր խոսքը, համացանցային մակերեսային հաղորդակցումը, լրջմիտ ընթերցանության անկումը, աղքատիկ բառապաշարը, հանրային կարծիքի ձեռնածության ընդլայնվող տեխնոլոգիական հնարավորությունները լայն ասպարեզ են տրամադրում անիմաստ խոսքի հանրային ավերիչ գործունեության համար: Որքան պարզունակ է դառնում լեզուն, այնքան ավելի դյուրին է «անիմաստ խոսք» թե՛ արտասանելը, թե՛ յուրացնելը, և թե՛ որպես կառավարման հզորագույն միջոց գործածելը, ինչն էլ, իր հերթին, հակադարձ ազդեցությամբ, անխուսափելիորեն ավելի է աղքատացնում լեզուն: Անվարան կարող ենք ասել, որ այսկերպ հաստատվում է մի առիթով Օտյանի մարգարեական դիտարկումը, թե «ընկեր Փանջունի կապրի միշտ»[52]:

Երվանդ Օտյանը, հիրավի, շատ բան է կանխատեսել ներկայիս քաղաքակրթության իրողություններից, իսկ պարգեւելով մեզ ընկեր Բ. Փանջունու պես մի կերպար զգուշացրել իրական ժողովրդավարության հաստատման ճանապարհին ամենամեծ վտանգներից մեկի մասին: Իսկ ի՞նչ

---

[51] Ե. Օտյան, Պրոպագանդիստը, էջ 148:

[52] Մեջբերումը ըստ՝ **Ա. Մակարյան**, Երվանդ Օտյան // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. առաջին, Եր.: Հայաստան, 1960, էջ XXIX:

կասեր 150-ամյա գրողը իր հոբելյանի առթիվ հրավիրվելիք հանդիսությանը. «Զգուշացե՛ք Փանջունուց»: Եվ կբացատրեր, թերեւս, որ «նոր Հայաստանի»՝ արժեքային նոր համակարգ հաստատող հասարակության, փոխադարձ վստահությամբ եւ հարգանքով տոգորված քաղաքացիների բնականոն համակեցության եւ անխոչընդոտ զարգացման համար կյանքի որեւէ ասպարեզում ի հայտ եկած փանջունիակերպ ճոռոմախոս գործիչը պիտի հնարավորինս արագ պսակազերծվի եւ վնասազերծվի:

Մեզ մնում է կարդալ և խորհել մեծն հեգնաբանի դիտարկումների շուրջ՝ ցանկալի է ոչ միայն հոբելյանական օրերի առթիվ:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում քննարկվում են Երվանդ Օտյանի սոցիալ-փիլիսոփայական որոշ դիտարկումներ, դրանց աշխարհայացքային հիմքը, գրողի գեղարվեստական աշխատանքի մեթոդաբանության առանձնահատկությունները: Վերլուծված են գրողի բացասական վերաբերմունքի պատճառները, այսպես կոչված՝ «գործի մարդկանց» և մակաբույծ քաղաքական գործիչների հանդեպ, գնահատված են դրանց հասցեին օտյանական հեգնանքի և ծաղրի տեսակները: Մեծ ուշադրություն է հատկացված Օտյանի հիմնական աշխատության՝ «Ընկ. Բ. Փանջունի» եռագրության գաղափարական նպատակադրումների պարզաբանմանը, հատկապես խոսքի և գործի խզման, «անիմաստ խոսքի» հրապարակային գործադրման վնասակարության պատկերավոր ցուցադրմանը: Օտյանի դիտարկումներն արդիական են, կարող են նպաստավոր լինել սոցիալ-փիլիսոփայական և սոցիալ-հոգեբանական ներկայիս հետազոտությունների համար:

***Հիմնաբառեր.*** *Երվանդ Օտյան, աշխարհայացք, սոցիալ-փիլիսոփայական դիտարկումներ, հեգնանք, «գործի մարդիկ», խոսք և գործ, «Ընկ. Բ. Փանջունի», փանջունիականություն*

## СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЕ ЗАМЕТКИ ЕРВАНДА ОТЯНА

Валерий Мирзоян

В статье обсуждаются некоторые социально-философские заметки великого армянского сатирика Ерванда Отяна, мировоззренческие основы и методологические особенности его художественного творчества. Анализированы причины негативного отношения Отяна к так называемым “деловым людям” и политическим деятелям-паразитам, дана оценка использованным методам иронии и сатиры. Большое внимание уделяется основному произведению Ерванда Отяна – “Тов. Б. Панджуни”, в частности показан основной

поведенческий изъян героя книги – “пламенного революционера”: разрыв между словом и делом, манипулятивное использование “бессмысленной речи” в публичных выступлениях и т.д. Заметки Отяна актуальны, могут эффективно быть использованы в современных социально-философских и социально-психологических исследованиях.

***Ключевые слова:*** Ерванд Отян, мировоззрение, социально-философские заметки, ирония, “деловые люди”, слово и дело, “Тов. Б. Панджуни”, панджунианство.

## SOCIO – PHILOSPHICAL NOTES OF YERVAND OTYAN

Valeri Mirzoyan

The article discusses some of the socio-philosophical notes of the great Armenian satirist Yervand Otyan, the philosophical foundations and methodological features of his artistic work. The reasons for Otyan’s negative attitude to the so-called “business people” and parasitic politicians are analyzed, the methods used for irony and satire are evaluated. Much attention is paid to the main work of Yervand Otyan – “Comr. B. Panjuni ”, in particular, shows the main behavioral flaw of the hero of the book – the“ fiery revolutionary ”: the gap between word and deed, the manipulative use of“ meaningless speech ”in public speaking, etc.

Otyan's notes are relevant, can be effectively used in modern socio-philosophical and socio-psychological studies.

***Key words**:* Yervand Otyan, worldview, socio-philosophical notes, irony, “business people”, word and deed, “Comr. B. Panjuni ”, panjunianism.

# ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ

Աշոտ Ներսիսյան

Հայ կամավորական շարժման սկզբնավորմանը հարցը ցայսօր հայ պատմագրության կողմից չի ներկայացվել այն ճիշտ հայեցակետի որոնման ջանքերով, թե ինչու՞ հայ քաղաքական ղեկավարները մեծամասամբ տարվեցին դրանով, ինչ որ տեղ հակասելով նաև մինչև Առաջին համաշխարհային պատերազմը իրենց ընդունած որոշումներին: Այս բացը լրացնելն ունի արդիական նշանակություն, քանի որ այսօր մեր պատմագրության կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի ցեղասպանության պատճառների համակողմանի բացակայությունը, թուրքական պատմագիտական այն մոտեցումներին հակազդելը, որոնք շատ հաճախ հայոց քաղաքացիական և քաղաքական ոչ ճիշտ պահվածքով են պայմանավորում ցեղասպանության իրականացումը:

1914 թվականի հուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) բռնկվում է Առաջին համաշխարհային պատերազմը, որով օրակարգից դուրս է գալիս հայոց բարենորոգումների խնդիրը, և Հայաստանի երկու օտարերկրյա կառավարիչները (Հոֆը և Վեստենենկը) հետ են կանչվում: Այս իրավիճակում հայ քաղաքական ղեկավարների (ինչպես նաև՝ մտավորականների) միակ հույսը մնում է Ռուսաստանը, քանզի ամենուրեք իշխում է այն համոզմունքը, որ նա, մասնավորապես Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո, կարճատև ընթացքում կգրավի Արևմտյան Հայաստանը:

Այսպիսով՝ կարևոր է այն հայեցակետի մատուցումը, **որ հայ ղեկավար ուժերը, մոռանալով ոչ վաղ անցյալի ցարական հալածանքները, ռուս-թուրքական պատերազմի բռնկումով նորից որդեգրեցին ռուսական կողմնորոշումը**:

Անաչառ լինելու համար պետք է պնդել, որ Հ.Յ Դաշնակցությունը, Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց առաջ, երբ այդ առումով կասկած չկար, ընդունում է բավական իրատեսական և ճիշտ որոշումներ: Այլ հարց է, որ գործնականում նա շեղվեց այդ որոշումներից: Առաջին համաշխարհային պատերազմի կամ Թուրքիայի հետ Ռուսաստանի պատերազմի մեջ մտնելու դեպքում Դաշնակցության որդեգրվելիք մարտավարությունը և ռազմավարությունը իր ձևակերպումները գտավ 8-րդ Ընդհանուր ժողովում, որն ավարտվելու վրա էր, երբ պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը: Եվ սա այն դեպքում, երբ, Ս. Վրացյանի արտահայտությամբ, բարենորոգումների խնդրով «Հայ ժողովրդի առջև բացվում էին նոր, անսահման հրապուրիչ հորիզոններ,,,»:[1]

«Հրապուրիչ հորիզոնները» այդպես էլ չբացվեցին, պատերազմով կասեցվեց բարենորոգումների խնդիրը, Հ. Յ. Դաշնակցությունը շեղվեց իր

[1] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Պեյրութ, 1958, էջ 7:

իրատեսական որոշումներից և դատարկվեց Արևմտյան Հայաստանն իր բնիկ հայ տարրից:

Ընդհանուր ոգևորությունների ալիքի մեջ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1914թ. հուլիսին, Էրզրումում գումարվում է ՀՅԴ հայտնի ժողովներից մեկը՝ 8-րդ Ընդհանուր ժողովը: Ժողովը գումարվում է հուլիսի սկզբներին, քանզի, ինչպես վկայում է Ս. Վրացյանը, «Օրակարգի հարցերը ապահոված չէին դեռ, երբ ստացվեց եվրոպական պատերազմի լուրը»:[2] Փաստորեն Ընդհանուր ժողովն ավարտվում է հուլիսի 19-ից (հին տոմարով) ոչ ուշ:

Ընդհանուր ժողովը շարունակվում է երկու շաբաթ և ունենում է 28 նիստ:[3] Ժողովի կարևոր մասնակիցներից կարելի է հիշատակել Ակնունուն, Ռոստոմին, Ռ. Զարդարյանին, Ս. Վրացյանին, Ռուբեն Տեր-Մինասյանին, Ա. Օխիկյանին (Սլաք), Մ. Թերլեմեզյանին, Համազասպին, Ա. Հանըմյանին և բժ. Ավ. Ինճեճիկյանին:[4]

Ընդհանուր ժողովը նախ և առաջ անդրադառնում է Թուրքիայի հետ հարաբերություններին, որոնք իրենց արտահայտությունն են գտնում տարբեր բաժիններում (մեր հարաբերությունը կառավարության հետ, զինվորական ծառայության հարցը, բարեփոխումների հարցը, կուսակցությունը և ազգային հաստատությունները, մեր հարաբերությունը Օսմանյան խորհրդարանի հետ, գրավոր և բանավոր պրոպագանդան և այլն):

Ընդհանուր ժողովի որոշումների մեջ ամենաուշագրավ կետը կարելի է համարել հետևյալը՝ **պատերազմի ժամանակ յուրաքանչյուրը պարտավոր է կատարել իր քաղաքացիական պարտքը պետության նկատմամբ**: Այսպիսով՝ **տեսականորեն Դաշնակցություն կուսակցությունը դեմ է արտահայտվել Ռուսաստանի կամ Թուրքիայի օգտին գործողությունների գնալուն պատերազմի ժամանակ**: Սա է հաջորդ, կարևոր պատմագիտական հայեցակետը:

Սակայն կուսակցության հետագա գործելակերպը լրիվ հակասեց Ընդհանուր ժողովի, կարծում ենք իրատեսական այս որոշմանը:

Դա հատկապես արտահայտվեց նրանում, որ Հ. Յ. Դաշնակցությունը ակամա հանդես եկավ ռուսական բանակներին կից հայկական կամավորական ջոկատներ կազմակերպողի դերում: Ի՞նչ հանգամանքներ ստիպեցին նրան՝ գնալու դրան: Անհրաժեշտ է գտնել այս հարցի պատասխանը: Հենց սկզբից հարկ ենք համարում շեշտել, որ Ընդհանուր ժողովի արձանագրությունների մեջ ոչինչ չկա կամավորական շարժման մասին, թեպետ դրա կազմակերպման նպատակահարմարության շուրջը

---

[2] Նույն տեղում, էջ 8:

[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 88:

[4] Հրաչ Տասնապետյան, Հ.Յ. Դաշնակցությունը իր կազմութենեն մինչև ԺԵ Ընդհանուր ժողով (1890-1924), էջ 111:

խոսակցություններ եղել են: Բավական ինքնօրինակ առաջարկ է արել ժողովում Ռուբեն Տեր-Մինասյանը: Այդ մասին վկայում են թե՛ Սիմոն Վրացյանը և թե՛ Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինկիրյան): Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Ռուբեն Տեր-Մինասյանը, Տարոնի ներկայացուցիչ, առաջարկեց կամավորական խումբեր կազմել թուրք բանակի կողքին ռուսների դեմ, բայց միտքը այնքան տարօրինակ թվաց, որ նույնիսկ քվեարկության չդրվեց»:[5]

Ռուբեն Դարբինյանը, որն անդրադարձել է Ռուբենի առաջարկին, հետևյալն է գրում. «Հայտնի է այնուհետև իր մասնակցությունը (Ռուբենի-Ա.Ն.) Կարին ՀՅԴ Ընդհանուր ժողովին, որուն մեջ ան պաշտպանած էր թեև մեծամասնության հակառակ, **բայց թրքահայության ֆիզիկական պահպանման համար ուրիշներեն ավելի խոստումնալից տեսակետ մը**: Ներկայի ակնոցով դիտելով անցյալի դեպքերը՝ կրնանք ըսել, որ Ռուբենի այս տեսակետը կամ ծրագիրը ևս ավելի առողջ, ավելի հեռատես և քաղաքականապես ավելի ճիշտ էր, քան այն ճամբան, որուն հետևեցավ գրեթե ամբողջ հայությունը ՀՅԴ գլխավորությամբ:

**Բնական է, որ Ռուբեն չուզեց անցնիլ Կովկաս և միանալ հոն սկսվելիք կամավորական շարժման ի նպաստ Ռուսաստանի»**:[6] (Ընդգծումները մերն են-Ա.Ն.)

Ընդգծումներից պարզ է, որ Ռուբենը իսկապես այնպիսի մի առաջարկ է փորձել առաջ քաշել, որոնք, ըստ Ռ. Դարբինյանի / և կարծում ենք, որ նա ճիշտ է/՝ արևմտահայության համար պատերազմի ժամանակ ինքնապաշտպանվելու երաշխիքներ էին տալիս և երկրորդ, ի տարբերություն շատերի, Ռուբենը դեմ էր ի նպաստ Ռուսաստանի կամավորական շարժմանը:

Հետաքրքիրն այն է, որ Ռուբենի այս ցանկությունն ունեին նաև երիտթուրքերը: Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Ընդ. ժողովը վերջացած էր, երբ Կարին եկան Իթթիհատի ներկայացուցիչներ Նաջի բեյը և Բեհաէդդին Շաքիրը մի խումբ կովկասցի մահմեդականների և պարսիկ հեղափոխականների հետ: Իթթիհատի ներկայացուցիչները եկել էին բանակցելու ՀՅԴ Ընդհանուր ժողովի հետ, բայց որովհետև ժողովը փակված էր, բանակցությունների մեջ մտան ՀՅԴ Հայաստանի Բյուրոյի ներկայացուցիչների՝ Ռոստոմի ու Վռամյանի և քաղաքական հանձնախումբի անդամներից մի քանիսի հետ: Բանակցությունները տևեցին մի քանի օր և դրական հետևանք չունեցան: Իթթիհատի ներկայացուցիչները առաջարկում և պահանջում էին, որ ՀՅ դաշնակցությունը, պատերազմի դեպքում Կովկասյան բանակի թիկունքում ապստամբություններ կազմակերպեր

[5] Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, Գ հատոր, Պեյրութ, 1963, էջ 9:

[6] Յառաջաբանի տեղ, տե'ս Ռուբէն, Հայ հեղափոխականի մը յիշատակները, հ. Է (7), էջ 126-127, այս մասին տե'ս նաև՝ Աշոտ Ներսիսեան, Ռուբէն, Երեւան, 2007, էջ 159:

կովկասյան մյուս ժողովուրդների հետ: Փոխարենը հաղթության պարագայում խոստանում էին ստեղծել ինքնավար Հայաստան՝ Թուրքիայի հովանավորության ներքո: Դաշնակցության ներկայացուցիչները աշխատում էին համոզել, որ Թուրքիան պատերազմին չմասնակցի, մնա չեզոք, որ թուրքերի վարած հակահայ քաղաքականության հետևանքով հնարավոր չէ Կովկասում առաջ բերել որևէ ձևի շարժում ի նպաստ Թուրքիայի, որ պատերազմի դեպքում, հայ ժողովուրդը կը մնա օրնապահ և կը կատարե իր քաղաքացիական բոլոր պարտականությունները: Այսքանը, սակայն, թուրքերին չէր գոհացնում, և բանակցությունները վերջացան առանց որոշ արդյունքի»:[7]

Կ. Սասունին գրում է. «Թուրքերը կուզեին, որ մենք ապստամբինք Արարատյան Հայաստանի մեջ, **գործենք ռուսական բանակի կռնակեն, բացի օրինական զինվորներե, կամավորական գունդեր կազմակերպենք և Կովկասյան ճակատի վրա արշավենք»**:[8]

Իսկ Ռուբեն Տեր-Մինասյանը հետևյալն է գրում. «Նրանք (Իթթիհատի պատվիրակները-Ա.Ն) կառաջարկեին հոն գումարվող (Էրզրումում-Ա.Ն.) Դաշնակցության իննի հանձախումբին՝ ստեղծել Հայաստան՝ կեդրոն ունենալով Էջմիածինը, միավնելով դրան Տաճկահայաստանի որոշ մասեր: Գործնականապես, կառաջարկվեր միացյալ Հայաստան թուրքերի կողմից, պայմանավ, որ մենք և' պահաջատեր դառնայինք Ռուսաստանից, և' Անդրկովկասում առաջապահը դառնայինք Կովկասյան ապստամբության, պատերազմի պարագային:

Առանց ետին թվով մտնելու այդ պաշտոնական բանակցությանց մեջ, այստեղ կարևոր է շեշտել, որ **անկախ և միացյալ Հայաստանի առաջարկը կուգար Թուրքիայից**, Դաշնակցությունը այս կամ այն պատճառով կը մնար յուր համեստ պահանջների վրա - Անդրկովկասում՝ ֆեդերացիա Ռուսաց սահմաններում. Տաճկաստանում՝ «ատեմի մերքեզիաթ»:[9] (Ընդգծումները մերն են-Ա.Ն.)

Այսպիսով՝ Էրզրումում թուրքերն առաջարկում էին.

ա) Ռուսաստանի դեմ թուրքերի հետ ստեղծել ընդհանուր ճակատ:

բ) Բացի թուրքական բանակին օրինավոր զինվորներ տալուց՝ կամավորական գնդերի ստեղծում նույն բանակին կից:

գ) Անկախ Հայաստանի ստեղծում (Արարատյան Հայաստան):

ՀՅԴ ներկայացուցիչները մերժեցին թուրքերին՝ առաջարկելով նրանց «չմտնել պատերազմի մեջ՝ խոստանալով լոյալ (օրինավոր) մնալ,

[7] Ս. Վրացյան, նշվ.աշխ., Գ. հատոր, էջ 10-11:

[8] Կ. Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, Բոստոն, 1927, էջ 22:

[9] Ռուբեն, նշվ. աշխ. հ. Է (7), էջ 126-127:

երկու հայկական մասերում քաղաքացիական պարտականություններից չխուսափելով»:[10]

Իհարկե, թուրքերին միանալով և ռուսների դեմ ընդհանուր ճակատ ստեղծելով՝ ճիշտ էր մտորումներն այն ուղղությամբ տանելը, որ դրանով մեր դեմ կը տրամադրինք ռուսներին (Կ. Սասունին գրում է. «մեկ խոսքով կուզեին, որ ոչ միայն չմտածենք Թուրքիո մեջ ամփոփված հայության ինքնապաշտպանության մասին, այլ այնպիսի քայլեր առնեինք, որ ամբողջ Կովկասի հայությունն ալ ենթարկվեր ռուսական սուրին»:[11]), բայց անշուշտ, անհրաժեշտ էին նաև այնպիսի մտորումները, **որ ռուսներին միանալով՝ նպաստում էինք, որ արևմտահայ տարրը** «ենթարկվեր» թուրքական սրին: Եվ այստեղից էլ՝ ինչո՞ւ չգնալ կամավորական գնդեր ստեղծելու թուրքական առաջարկին ևս: Չէ՞ որ այս դեպքում ըստ հնարավորին կկանխվեր արևմտահայ եղեռնը: Իսկ ինչ վերաբերվում է անկախ Հայաստանի ստեղծման գաղափարին, ապա կարելի է մտածել, որ թուրքերը խաբում էին, բայց նրանք չմերժվեցին հայոց այդ համոզմունքի համար, այլ այն, որ Թուրքիան պարտվելու էր: Իսկ մեզ տվյալ իրավիճակում անհրաժեշտ էր հայության պահպանումը, որի առումով, մեր խորին համոզմամբ, քայլերը ճիշտ ուղղությամբ չգնացին:[12] Անդրադառնալով արևմտահայոց չեզոք մնալու որոշման խնդրին՝ Կ. Սասունին ճիշտ կերպով գտնում է, որ «Մեր չեզոքությունը կը նշանակեր թշնամություն հանդեպ թուրքին»:[13]

«Այդ պարագան կատարելապես պետք է գիտակցեինք,-շարունակում է նա այնուհետև,-կար ուրիշ շեշտված երևույթ մը, այդ այն է, որ ոչ միայն ռուսական բանակները կարշավեին Թուրքիայի վրա, այլ ռուսահայ հատվածը և հոն ամփոփված տաճկահայությունը կամավորական գունդերով միացավ ռուսական հարձակվողներին: Այս ակնհայտնի դրության առջև հայերու **հնազանդությունը և ինքնապաշտպանությունը** անխելքություն էր, պարզ կարճամտություն, թուրքերը խաբելու միամտություն էր, ինչ որ բացարձակ անկարելիություն մըն էր: Հայերս պետք է բռնեինք **ապստամբական** դիրք: Ինքնապաշտպանությունը այն առումով, ինչ որ մենք հայերս կըմբռնենք, ատիկա վերջին շունչը փչելու ջանք մըն էր և չի հասնիր իր նպատակին: **Ինքնապաշտպանությունը Թուրքիո մեջ, այն ժամանակաշրջանին, կարելի էր միայն ապստամբությամբ, վճռական ու խիզախ, Վանեն մինչև Կիլիկիա**»:[14]

Անշուշտ, ճիշտ է Կ. Սասունին, երբ փրկության միջոցը տեսնում է ապստամբությունը: Բայց մի՞թե դա հնարավոր էր տվյալ իրավիճակում,

[10] Նույն տեղում, էջ 127, նաև՝ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 9:

[11] Կ. Սասունի, նշվ.աշխ., էջ 22:

[12] Աշոտ Ներսիսյան, Ռուբեն, էջ 22:

[13] Նույն տեղում, էջ 25:

[14] Նույն տեղում:

երբ, ինչպես բազմիցս շեշտել ենք, 1908թ. հետո անտեսվել էին աշխատանքներն այդ ուղղությամբ: Նա ինքն էլ գտնում է, որ հայությունը և ՀՅԴ նման ձեռնարկի համար պատրաստ չէին: Բայց չէ՞ որ նման հնարավորություն հայերին ընձեռվում էր թուրքական բանակներին կից կամավորական զնդեր ստեղծելու առաջարկով, որը, սակայն, մերժվեց: Բայց դժբախտաբար միայն Ռուբենն էր, որ կողմ էր այս առաջարկին: Եվ նա իր ձգտումն արտահայտել էր դեռևս թուրքական պատվիրակության՝ Էրզրում գալուց առաջ:

Սակայն ՀՅԴ 8-րդ Ընդհանուր ժողովը, մերժելով կամավորական գնդերի կազմակերպումը թե' թուրքական և թե' ռուսական բանակներին կից, դեպքերի բերումով գնում է նման գնդերի կազմակերպմանը ռուսական բանակներին կից: Սա արդյունավետ մարտավարություն չէր արևմտահայության անվտանգությունն ապահովելու տեսանկյունից: Այս ըմբռնմանն են բերում հետագա պատմական իրադարձությունները:

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս ամենը, եթե ընդհանրացնենք, մղում է հետևյալ հայեցակարգային հիմքի մշակման անհրաժեշտությանը, այն է՝ **եթե Դաշնակցություն կուսակցությունը իր ընդհանուր ժողովում մերժեց կամավորական շարժումը հօգուտ Ռուսաստանի, բայց հետագայում դեպքերի բերումով գնաց դրան, ապա միաժամանակ պետք էր կամավորական գումարտակներ ստեղծեր թուրքական բանակներին կից, որն արևմտահայերին կտար զինվելու հնարավորություն և միգուցե այդքան ահավոր չլինեին ջարդերի հետևանքները, որոնց համար առիթ էր նաև հօգուտ Ռուսաստանի կամավորական շարժումը:**

Այս հայեցակետի մատուցումը, մեր կարծիքով չափազանց կարևոր է և ունի արդիական հնչեղություն:

***Հիմնաբառեր.*** կամավորական շարժում, առաջին համաշխարհային պատերազմ. կովկասյան ճակատ, ռուսական և թուրքական կողմնորոշումներ:

## ON THE ORIGIN OF THE ARMENIAN VOLUNTARY MOVEMENT IN THE FIRST WORLD WAR

A. Nersisyan

The article proposes to develop the following conceptual basis: if the Dashnaktsutyun party at its general meeting rejected the volunteer movement in favor of Russia, and subsequently adopted this path, then volunteer battalions would also need to create an extension to the Turkish armies, which would enable the Western Armenians to arm

themselves, and perhaps the results of the massacre of the Armenian people were not so obvious.

***Keywords:*** volunteer movement, World War I Caucasian front, Russian and Turkish orientations.

## О ВОЗНИКНОВЕНИИ АРМЯНСКОГО ДОБРОВОЛЬЧЕСКОГО ДВИЖЕНИЯ В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

А. Нерсисян

В статье обосновывается необходимость разработки следующей концептуальной основы. Если партия «Дашнакцутюн» на своем общем собрании отвергла движение добровольцев в пользу России, а впоследствии приняла этот путь, то одновременно с этим должна была создать добровольческие батальоны в качестве пристройки к турецкой армиии, которая дала бы возможность западным армянам вооружиться, и возможно последствия резни армянского народа не были бы столь ужасающими.

***Ключевые слова:*** добровольческое движение, Первая мировая война, Кавказский фронт, русская и турецкая ориентации.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Արման Սարգսյան

Հայաստանի առաջին հանրապետությունը գոյություն է ունեցել այնպիսի պատմական ժամանկահատվածում, որը խորհել է տալիս, թե որքանով էր նպատակահարմար այն քաղաքական համակարգը, որը որդեգրվել էր նրա համար: Քաղաքական համակարգերի ընտրությունը անպայմանորեն պետք է պայմանավորել ոչ միայն ներքին, այլև արտաքին գործոններով: Ներքին գործոն ասելով պետք է հասականալ, թե ինչպիսի ներքաղաքական իրավիճակ է ապրում տվյալ համակարգը որդեգրած կամ որդեգրել փորձող քաղաքական միավորը: Հայաստանի առաջին հանրապետության համար կարելի է պնդել, որ այն քաղաքական

իրավիճակը, որում գտնվում էր այն, միաժամանակ երկրորդական պետք է դարձներ ժողովրդավարական համակարգի ընտրությունը: Իսկ այդ քաղաքական իրավիճակը թելադրում էր ավելի շատ դիկտատորական կառավարման համակարգի առժամյա ընտրություն, որովհետև ներքին դավադիր թաթար տարրը ցանկանում էր ներսից պայթեցնել այդ պետությունը: Բավական է նշել, որ հանրապետության ներսում գոյություն ունեին թվով քսաներկու թաթարական իշխանություններ, որոնք արտաքուստ որդեգրելով մեղմ և հանդուրժողական վերաբերմունք, ներքուստ դավում էին նրան և ձգտում էին պայթեցնել: Չպետք է անտեսել նաև այն թշնամական վերաբերմունքը, որն ունեին ՀՀ նկատմամբ Վրաստանն ու Ադրբեջանը: Այս պայմաններում անհրաժեշտ էր ուժերը միավորել պետության փաստացի ամրապնդման ուղղությամբ, որի հաջողության գաղտնիքը ուժեղ իշխանություն էր կամ դիկտատուրան, բայց ոչ դասական իմաստով, այսինքն՝ սեփական ժողովրդի իրավունքների և ազատության ոտնահարում, որը նախատեսում է սեփական իշխանության հարատևության ապահովում, այլ՝ դիկտատուրա՝ այդ նույն ժողովրդին ընդդեմ թշնամիների միավորելու և նրա փաստացի ու իրավական գոյությունը որոշակի սահմանների վրա հիմնավորելու համար:

Արտաքին գործոն ասելով պետք է նկատի ունենալ գերտերությունների պարտադրանքները քաղաքական համակարգերի ընտրության տեսանկյունից: Իսկ վերջիններս 1918 – 20թթ. ցանկանում էին Հայաստանը տեսնել ժողովրդավարական, որը հայության ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից միանգամայնորեն ժամանակավրեպ էր: Այս ամենի հետևանքով ՀՀ գոյության ոչ երկարատև ժամանակահատվածում մենք ականատեսն ենք դառնում երկու քաղաքական թևերի անընդհատ պայքարի՝ քաղաքական այս կամ այն համակարգի ընտրության շուրջը, որը քիչ նշանակություն չունեցավ այդ պետության 1920թ. ճաշակած պարտությունների առումով: Այդ պայքարի հետևանքով է, որ այս պետությունն ունեցավ բավական յուրահատուկ քաղաքական համակարգ, որն իր մեջ ներառում է այն ժամանակների համար և ընդունելի և դատապարտելի բաղադրամասեր:

Հայտնի է, որ Հայաստանի առաջին հանրապետությունը խորհրդարանական կառավարման տիպի պետություն էր, որը ենթադրում է լայն ժողովրդավարություն: Սակայն նման պետության որակավորումը սխալ է տարածել նրա գոյության ողջ ժամանակահատվածի վրա, որովհետև ՀՀ–ն ունեցել է զարգացման փուլեր, որոնց ընթացքում քաղաքական համակարգը լիովին փոխվել է: Խորհրդարանական կառավարմանը փոխարինել է կուսակցական կառավարումը՝ հանձին Բյուրո – կառավարության, որի գործունեության ընթացքում չի գումարվել խորհրդարանական ոչ մի նիստ և բոլոր որոշումները առանց խորհրդարանի վավերացման իրականացրել է Դաշնակցության Բյուրոն, որի նախագահն

ու անդամները միաժամանակ կառավարության նախագահն ու անդամներն էին: Ահա սրանում է կայանում ՀՀ քաղաքական համակարգի յուրահատկություններից մեկը: Փաստորեն 1920թ. մայիսի 5 – ից մինչև նույն թվականի նոյեմբերի 23–ը երկրում իշխում էր կուսակցական դիկտատուրա: Բայց այն դիկտատուրա էր պետության թշնամիների նկատմամբ և ոչ թե սեփական ժողովրդի, որով պետք է պայմանավորել հիշյալ պետության քաղաքական համակարգի մյուս յուրօրինակությունը: Դաշնակցության միանձնյա կառավարելու ձգտումը պետք է պայմանավորել երկրի առջև ծառացած վտանգներով, բոլշևիկների մայիսյան և թաթարական խռովություններով և ոչ թե ժողովրդավարական պետության նկատմամբ անհանդուրժողականությամբ: Եվ այդ դիկտատուրան տալով իր դրական արդյունքները, պետությունը փրկելով ներսից պայթեցնելու վտանգից, ի վերջո հեռանալու էր: Նման դիկտատուրայի ստեղծումը մինզամայնորեն արդարացված էր, թեպետ ուշացած: Իսկ ժողովրդավարական քաղաքական համակարգը Հայաստանի հանրապետության համար ժամանկավրեպ էր:

Այս ամենում համոզվելու համար փորձենք լուսաբանել ՀՀ կազմավորման սկզբում ձևավորված քաղաքական համակարգի էությունը, իսկ մինչև այդ, թե ինչ պետք է հասկանալ առհասարակ քաղաքական համակարգ ասելով:

Քաղաքական համակարգ հասկացողությունն իր մեջ ներառում է հետևյալ բաղադրամասերը՝պետություն, քաղաքական իշխանություն, քաղաքական կուսակցություններ, քաղաքական վարչակարգ, զանգվածային լրատվության միջոցներ: Պետությունը քաղաքական համակարգի միջուկն է, մնայուն, բայց ոչ հավերժական կազմակերպություն, որի կառավարման ղեկն ստանձնում են իշխանությունները: Այդ իշխանությունների այլ քաղաքական կազմակերպությունների կամ կուսակցությունների և ԶԼՄ-ների նկատմամբ հանդուրժողականության չափից է կախված քաղաքական համակարգի ժողովրդավարական, ավտորիտար կամ ամբողջատիրական էությունը:

Հայաստանի առաջին հանրապետությունում այդ հանդուրժողականության չափը ապահովում էր այդ պետության քաղաքական համակարգը լիարժեքորեն ժողովրդավարական համարելու հիմքերը: Փորձենք դրանում համոզվել՝ դիմելով փաստերին:

Հայտնի է, որ Հայաստանի առաջին հանրապետությունն ունեցել է երկու օրենսդիր մարմին: Առաջինը կոչվում էր Հայաստանի խորհուրդ, որը ոչ թե ձևավորվել է պետության կազմավորմանը հաջորդած ընտրությունների հետևանքով, այլ՝ դեռևս 1917թ. Թիֆլիսում արևելահայերի գումարած համագումարում ընտրված Հայոց Ազգային խորհրդի կազմի ընդլայնմամբ: Հայոց Ազգային Խորհուրդը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ ընտրվել էր 15 հոգուց: 1918թ. մայիսի 28 – ին Հայոց Ազգային խորհուրդն իրեն հռչակում է հայկական գավառների միակ իշխանություն,

որից հետո հուլիսի 20-ին եռապատկելով իր անդամների թիվը, վերակազմվում է՝ որպես Հայաստանի Խորհուրդ՝ Ավետիք Սահակյանի նախագահությամբ: Խորհուրդ են հրավիրվում թուրքերի եզդիների և ռուսների ներկայացուցիչներ[15]:

Խորհրդի պաշտոնական բացումը տեղի է ունենում 1918թ. օգոստոսի 1–ին Երևանում: Որպեսզի համոզվենք, որ Հայաստանի առաջին Հանրապետությունն իրոք ուներ ժողովրդավարական քաղաքական համակարգ, բավական է մատնանշել, թե ինչպիսին էր նրա կազմը: Այն ներառում էր 18 դաշնակցական, 6 սոցիալիստ հեղափոխական, 6 սոցիալ – դեմոկրատ, 2 անկուսակցական, 1 եզդի, 1 ռուս[16]:

Ինչպես համոզվում ենք՝ օրենսդիր մարմնում ընդգրկված էին բոլոր առկա քաղաքական ուժերի և այլազգիների ներկայացուցիչները, որը վկայում է որ **Հայաստանի առաջին հանրապետությունը ձևավորվում էր որպես ժողովրդավարական պետությունների բոլոր առանձնահատկությունները ներառող պետություն:** Նույնիսկ խորհրդում ներառված էին 6 մահմեդականներ, որոնց առկայությունը ենթադրում էր վտանգ Հայաստանի ազգային անվտանգության համար, որի թուրք կամ թաթար տարրը միշտ հակված էր ներսից պայթեցնելու այդ նորանկախ պետությունը: **Եզրակացությունը մեկն է՝ անկախ ընտրված քաղաքական համակարգի նպատակահարմարությունից, այն լիարժեք ժողովրդավարական էր:**

Իսկ ժողովրդավարական քաղաքական համակարգը տվյալ իրավիճակում ինչպես նշեցինք, ժամանակավրեպ էր, որովհետև Հայաստանին դավում էին նրա անմիջական հարևաններ Վրաստանն ու Ադրբեջանը, որոնց հետ արդեն 1918թ. աշնանից խորացան տարածքային վեճերը: Բացի այդ, Խորհրդի կազմը խայտաբղետ էր, որը հնարավորություն չէր ընձեռում ուժերի կենտրոնացման համար այն բարդ ժամանակաշրջանում:

Ինչպես նկատել է Ս. Վրացյանը՝<<Հայաստանի խորհուրդը ներքին շաղախից զուրկ, ամուր մեծամասնություն չունեցող, հակամարտություններով լի և հիվանդ մի մարմին էր և այդ հիվանդությունը հնարավոր չեղավ դարմանել[17]:

ՀՀ առաջին կառավարությունը, որի վարչապետը Հովհ. Քաջազնունին էր, նույնպես ձևավորվում է ժողովրդավարական սկզբունքով: Ցավոք նրան չի հաջողվում կառավարության մեջ ներառել Հայ ժողովրդական կուսակցության և էսեռների ներկայացուցիչներին և առաջին

---

[15] Աշոտ Ներսիսյան, Ավետիք Սահակյան/Հայր Աբրահամ/, Երևան, 2006, էջ 211:

[16] Նույն տեղում, էջ 217, նաև՝ Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետություն, Բէյրութ, 1958, էջ 184 - 190

[17] Նույն տեղում, էջ 190:

կառավարության կազմի մեջ մտնում են չորս դաշնակցականներ[18], երկու անկուսակցականներ, բայց այն, որ վարչապետը ձգտում էր կառավարության մեջ ներգրավել նաև այլ քաղաքական ուժերի, վկայում է քաղաքական համակարգի ժողովրդավարական լինելու մասին:

Այդ մասին է վկայում նաև հանդուրժողական վերաբերմունքը արտախորհրդարանական քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Դրանք էին ՀՍՌԿ –ն, ՍԴՀԿ-ն և ՍԴԲՀԿ-ն/Սպեցիֆիկները/:

Ինչպես արդեն նշեցինք, նման քաղաքական համակարգը մերժելի էր շատ դաշնակցական գործիչների համար/ Արամ Մանուկյան, Ռուբեն Տեր Մինասյան, Արշակ Ջամալյան, Արտաշես Բաբալյան և այլն/, որոնք ցանակնում էին հասնել կուսակցական դիկտատուրայի: Սա նշանակում է, որ պայքար էր գնում կառավարման համակարգի ընտրության շուրջը, որը պայմանավորված էր այս կամ այն քաղաքական ձգտումների հեղինակների պատմական ժամանակահատվածի նկատմամբ ունեցած մոտեցումներով: Որն էր կարևորը՝ ժողովրդավարական համակարգը, որը նախատեսում էր կուտակված հրատապ խնդիրների շուտափույտ լուծում, թե դիկտատուրան, որի դեպքում ավելի արագորեն կարելի էր լուծում տալ այդ խնդիրներին: Բնականաբար երկրորդը: Եվ պատահական չէ, որ 1919թ. փետրվարի 28–ին կուսակցական դիկտատուրայի ստեղծմանը ձգտող ուժերը փակում են խորհուրդը, որից հետո այն չի գումարվում մինչև 1920թ. օգոստոսի 1–ը, երբ ընտրությունների արդյունքում բացվում է Հայաստանի խորհրդարանը:

Որպեսզի պարզ դառնա, որ խորհրդարանական համակարգը տվյալ իրավիճակում արդյունավետ չէր, բավական է նշել, որ կառավարության ընդդիմադիր գործիչներն այնտեղ զբաղվում էին նրա գործունեության անտեղի քննադատությամբ, այն դեպքում, երբ թաթար ընդդիմադիր տարրը Սուրմալուի գավառում կոտորում էր հայ բնակչությանը նույն փետրվար ամսին և վտանգի տակ էր պահում Էջմիածին - Իգդիր խճուղին[19]: Այս պայմաններում ում էր հարկավոր խորհրդարանը: Ուստի և, փետրվարի 28 – ին երբ քննարկվում էր Սուրմալուի գավառում ռազմական դրություն մտցնելու կառավարության առաջարկը և ընդդիմադիրները դեմ էին արտահայտվում դրան, ժողովրդական մի զանգված մասնավորապես Ռուբենի և Արտ. Բաբալյանի դրդմամբ ցրեց խորհուրդը:

Այսպիսով, կարճատև մի ժամանակիհատվածում պարզ դարձավ, որ որդեգրված քաղաքական համակրգը արդյունավետ չէր: Սակայն արդյունավետ չդարձավ հունիսին ընտրված խորհրդարանի գործունեությունը ևս, որի բացումը տեղի ունեցավ 1919թ. օգոստոսի 1–ին: Խորհրդարանն այս անգամ ուներ 80 պատգամավոր, որից 72 դաշնակցական, 4

---

[18] Արարատ Հակոբյան, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918 – 1920, Երևան, 2005, էջ 48:
[19] <<Հայրենիք>> ամսագիր, թիւ 9, Յուլիս, 1922, էջ 1923:

սոցիալիստ – հեղափոխական/էսեռ/, 1 անկուսակցական, 2 թաթար և 1 եզդի[20]:

Ինչպես համոզվում ենք, այստեղ նույնպես բացարձակ մեծամասնություն էր կազմում Դաշնակցությունը, բայց այս խորհրդարանն էլ էր ժողովրդավարական ընտրության արդյունք, քանի որ այնտեղ տեղ էր հատկացված նաև այլազգիներին: Ինչպես էր հնարավոր թաթար պատգամավորի նվիրումը հայկական պետականության ամրապնդման գործին, երբ Հայաստանում առկա թաթարական ապստամբ տարրերը քանդում էին նրա հիմքերը: Միանգամայն ժողովրդավարական սկզբունքներով էր գործում նաև Ալ. Խատիսյանի կառավարությունը, որի օրոք Հայաստանում ազատ քարոզչություն էին տանում բոլշևիկ գործիչները, որոնք 1920թ. մայիսին նույն թաթար տարրի ապստամբ լինելու պայմաններում բարձրացրեցին մայիսյան խռովությունները:

ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարական էության վնասակար հետևանքները զիտակցվեց ուշացումով և ներքաղաքական պայքարն ավարտվեց մայիսյան խռովությունների առիթով ՀՅԴ Բյուրոյի դիկտատուրայի ստեղծմամբ 1920թ. 5–ից մինչև նոյեմբերի 23–ն ընկած ժամանակահատվածում, երբ Դաշնակցության Բյուրոն իր ձեռքն առավ կառավարության ղեկը և խորհրդարանի գործունեությունը դադարեցվեց, բայց արդեն բավական ուշ էր, քանի որ բոլշևիկյան քարոզչությունը կազմալուծել էր հայոց բանակը: Այնուամենայնիվ Բյուրո – կառավարությունը կարողացավ չեզոքացնել թաթար ապստամբ տարրը և հօգուտ հայոց փոխել պետության ժողովրդագրական պատկերը:

Սակայն բոլշևիկ – քեմալական դաշինքի պայմաններում այս կառավարությունը չկարողացավ պահել իր դիրքերը և վերջին, Ս. Վրացյանի կառավարությունը Դեկտեմբերի 2 – համաձայնագրով զնաց ՀՀ խորհրդայանցմանը:

Շարադրվածից հիմնական եզրակացություններն հետևյալներն են.

Առաջին. Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական համակարգը լիարժեք ժողովրդավարական էր, որը տվյալ ժամանակահատվածի համար արդյունավետ չէր, քանի որ անտեղի խորհրդարանական վեճերը ձգձգում էին կենսական խնդիրների լուծումը:

Երկրորդ. Հայաստանի հանրապետությունն իր ողջ գոյության ընթացքում չէ, որ ունեցել է խորհրդարանական կառավարման համակարգ: Խորհրդարանը գործել է երկու փուլով՝ 1918թ. օգոստոսի 1 – 1919թ. փետրվարի 28 և 1919թ. օգոստոսի 1 – 1920թ. մայիսի 5, բայց այդ գործունեությունը չի եղել արդյունավետ:

Երրորդ. Երկրորդ օրենսդիր մարմինը կարող էր արդյունավետ գործել, քանի որ մեծամասամբ ընդգրկում էր դաշնակցականների, բայց վերջիններս էլ միակամ չէին դիկտատուրայի ստեղծման առումով: Բացի

[20] Արարատ Հակոբյան, նշվ. աշխ., էջ 185:

այդ՝ ժողովրդավարական հովերով էր տարված Ալ. Խատիսյանի կառավարությունը:

Չորրորդ. ՀՅԴ Բյուրոն ի վերջո կարողանում է հաստատել իր դիկտատուրան, բայց դա արդեն ուշացած քայլ էր, թեև արդյունավետ էր թաթար տարրի վնասազերծման առումով:

Հինգերորդ, այդ դիկտատուրան դիկտատուրա չէր դասական առումով, այլ պայմանավորված էր ներքին և արտաքին թշնամիներին չեզոքացնելու հանգամանքով:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական համակարգը լիարժեք ժողովրդավարական էր, որը տվյալ ժամանակահատվածի համար արդյունավետ չէր: Այն իր ողջ գոյության ընթացքում չէ, որ ունեցել է խորհրդարանական կառավարման համակարգ: Խորհրդարանը գործել է երկու փուլով՝ 1918թ. օգոստոսի 1 – 1919թ. փետրվարի 28 և 1919թ. օգոստոսի 1 – 1920թ. մայիսի 5, բայց այդ գործունեությունն չի եղել արդյունավետ: 1920թ. մայիսի 5 -ին ստեղծվել է կուսակցական դիկտատուրա, որը դիկտատուրա չէր դասական առումով, այլ պայմանավորված էր ներքին և արտաքին թշնամիներին չեզոքացնելու հանգամանքով:

***Հիմնաբառեր.*** քաղաքական համակարգ, Հայաստանի Հանրապետություն, ժողովրդավարություն, դիկտատուրա, խորհուրդ, խորհրդարան, Դաշնակցություն, Բյուրո – կառավարություն:

## THE PECULIARITY OF THE POLITICAL SYSTEM OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Arman Sargsyan

The political system of the First Republic of Armenia was fully democratic which was not effective for that period of time. During its existence the governmental system was not always parliamentary. The parliament acted in two stages: from August 1, 1918 to February 28, 1919 and from August 1, 1919 to May 5, 1920, but that activity was not effective. On May 5 1920 Party Dictatorship was formed, which was not a dictatorship in classic sense. It was conditioned by neutralizing internal and external enemies.

***Keywords:*** political system, Republic of Armenia, democracy, dictatorship, council, parliament, Dashnaktsutyun, bureau - government.

# СВОЕОБРАЗИЕ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Арман Саркисян

Политическая система первой республики Армении была полностью демократической, что для данного периода времени было неэффективным. Она не во все время своего существования имела систему парламентского правления. Парламент действовал в два этапа: с 1 августа 1918г. до 28 февраля 1919г. и с 1 августа 1919г. до 5 мая 1920г., но эта деятельность была неэффективной. 5 мая 1920г. была создана партийная диктатура, которая не была классической диктатурой. Все это было нацелено на нейтрализацию внутренних и внешних врагов.

***Ключевые слова:*** политическая система, республика Армения, демократия, диктатура, совет, парламент, дашнакцутюн, бюро – правительство.

# ECONOMY DEVLOPMENT AND NATIONAL VALUE INTERDEPENDENCE IN ARMENIA

Armen Tsughuryan Nonna Khachatryan

***Abstract***

The Armenian people usually presented in the world with their creative abilities, entrepreneurial skills, and the reputation of a successful businessman. However, by contrast, Armenia, with its mono-ethnic composition, where 98% of the population is ethnics, has been unable to make economic progress since independence, even when they have been successful in business outside homeland. Such a situation is caused by unrecognized war situation in the country, economic blockade from neighbor countries, loss of markets of the Soviet empire, and disruption of former business ties formed over decades. At the same time, however, the impact of the Armenian national value system on the development of Armenia's economy is not always taken into account, which in our opinion is a very influential factor and in some cases even an obstacle to the country's economic prosperity. The article discusses the hypothesis of the impact of the national value system on the possible developments of the Armenian economy.

## *What is hindering our economic growth?*

Classical economics mainly relates the socio-economic development of nations to the country's favorable geographical location, the availability of minerals, accumulated physical and financial assets, and the factors of human capital formed. And it is believed, that the prosperity of nations, if in the previous ages was conditioned by the stock of available economic resources, now accumulated human capital has a decisive role in this matter.[1] In terms of accumulated human capital, the Republic of Armenia is favorably positioned in the context of its national wealth (see Table 1).

Macroeconomic indicators have been developed and are currently being used in economic practice, with some measuring the country's economic growth (gross national product, gross domestic product, net national income, etc.), and for the rest, national wealth. At the same time, the most widely used indicators of economic growth, which are continuously presented in the statistical reports. And the indicator of national wealth does not find its widespread use in practice, which somewhat obscures the true picture of the country's economic progress

[1] Acemoglu D. and Robinson J., Persistence of Power, Elites and Institutions, American Economic Review, 98 (1), 2009, pp. 121-124

Table 1[2]

Per capita national wealth size and structure of components (2014, US $)

| Countries | National Wealth | Raised Capital | Natural Capital | Human Capital | Net Foreign Assets | Population Numbers |
|---|---|---|---|---|---|---|
| Armenia | 52894 | 15451 | 12702 | 27329 | -2588 | 3006154 |
| | 100.0 | 29.2 | 24.0 | 51.7 | -4.9 | |
| Azerbaijan | 85341 | 20061 | 45935 | 11961 | 7384 | 9535079 |
| | 100.0 | 23.5 | 53.8 | 14.0 | 8.7 | |
| Georgia | 44327 | 20415 | 7344 | 21251 | -4682 | 3727000 |
| | 100.0 | 46.1 | 16.6 | 47.9 | -10.6 | |

Thus, if we follow the statistics, almost all the years of the newly independent Republic of Armenia, except for the period of the global financial and economic crisis, have registered economic growth, but at the same time, the economic prosperity of the population has not yet been registered in the country, by expanding the range of values of national wealth. More, the country is continuously increasing its external economic debt, bearing the heavy burden of poverty (around 25%), emigration does not stop, foreign investment fails, and national wealth growth does not occur.

Current statistics show, that the migration balance of the population in Armenia has been negative for many years. During the years of independence, with the exception of 2004-2006, the number of returnees to the republic declined annually; Since then, an average of 43,000 people have left the country each year. In general, during the period 1992-1997. 586800 people left the country, 129300 people in 1998-2007, and 307600 people from 2008 to January 1, 2016. Since independence more than one million Armenian citizens has become emigrants.[3]

And how it turns out that Armenian businessmen are able to achieve serious economic success abroad, while in Armenia they find it difficult to show economic activity and succeed. And that is why the

[2] Մարկոսյան Ա., , Մաթևոսյան Է., Ազգային հարստություն ստեղծելու տնտեսական ներուժը, “21-րդ դար”, թիվ 4, 2018 թ., էջ 52

[3] Долятовский В. А. Кросс- культурный менеджмент – инструмент организации кросс культурного взаимодействия, //Экономические науки, https://cyberleninka.ru/article/n/kross-kulturnyy-menedzhment-instrument-organizatsii-kross-kulturnogo-vzaimodeystviya

spread of the Armenian influence in the international arena, as a rule, is perceived only as significant achievements of Armenian businessmen, and is almost ignored in the context of the Armenian public.

In this respect, professional literature suggests that… despite early state traditions and rich cultural heritage, there is a certain awareness in the newly independent Armenia of the inability to compete with the world's strongmen or, to be the object of geopolitical interests, which is specific to the tastes of colonialism and To the Middle East. The basis of this thinking is the following approach: "The superpowers rule over us and everything depends on them." [4]

Moreover, distrusting the homeland, the national capital constantly flees from the Republic of Armenia. According to analysts, it cannot feel safe due to the imperfection of the laws in Armenia, the lack of independence of the judiciary, and in some ways also the insecurity of business. However, in our view, in addition to the factors mantioned above, the established national value system is a major obstacle to Armenia's economic prosperity, which simply deprives Armenians of the opportunity to pursue patriotic economic activity.

***How is patriotic entrepreneurship characterized?***

In theory, the term "patriotic business" is not commonly used, but in general, it can be characterized as an economic process, targeted at the development of the home economy. As a matter of fact, the public's desire to acquire and produce foreign products from the market and to deny foreign production, granting state-owned privileges to domestic investors, large-scale business development tax payouts, and nation-wide payouts for the economy and so on may be private manifestations of this process. However, in our opinion, the key component of patriotic economy is the public's awareness of and interest in the nation's interest. In this case, in the subconscious mind of every citizen, besides self-interest, is it serving the interests of the public economy, which is a powerful and stimulating factor in the economic progress of one's homeland.

A vivid example of the systematic application of "patriotic economy" was demonstrated in the Soviet Union, where the driving force of economic progress was the communism sermon, which directly interfered with the subconscious of every citizen, forcing him to show

---

[4] Սողոմոնյան Վ., Հայկական ինքնությունն ու եվրոպական արժեհամակարգը, //http://diskurs.am/2013/08/109/

a keen interest in the Soviet empire. Communist propaganda machine and adapted to its value, eventually led to patriotic entrepreneurship.
Since independence, when the Armenians centuries-old dream of having a state finally came true, the process of patriotic entrepreneurship in the Republic of Armenia has failed. The exact opposite was done. On the one hand, instead of helping the country prosper, Armenian businessmen stole the assets accumulated over decades and privatized during independence, rather then promoting them for active business development. On the other hand, in those years, state officials simply for the sake of self-interest simply wasted a significant portion of grants and aid entering the country, bypassing public interest and thus causing serious economic damage to the homeland. As a result, the capital accumulated in the country began to feel more comfortable abroad, and the rate of emigration increased.[5]
Instead, significant inflows of international credit entered the country, which began to serve not only the economic growth, but only short-term macroeconomic stability, thereby increasing the external debt of the Republic of Armenia year by year. Here too, the "patriotic business" did not manifest itself, since the authorities preferred not to exert special efforts in the development of the economy, but merely to ensure economic stability at the expense of external debt at the expiration of its term and a growing debt burden. without worrying that this burden could be a serious obstacle to the future prosperity of the economy.
The lack of "patriotic entrepreneurship" was also reflected in the way companies and individual entrepreneurs performed their tax obligations. Naturally, personal or private interests in all countries and at all times evade large or small tax liabilities. However, in economically developed countries, people or businesses are consciously and even willingly paid taxes, with the boomerang effect of expecting social and economic support from the state. In the Armenian reality, taxes are largely reluctant to pay, as private or public interest expectations of the state are insufficient, resulting in distortions of tax redistribution, promotion and taxation fairness. Moreover, the low level of development of civil society in the country results in the public being almost indifferent to how budget resources are spent and public oversight over budget spending is almost formal in this case, and public interest in budget spending does not work.

[5] Կապիտալի փախուստը ահազնացող չափեր է ընդունում, https://www.1in.am/2387610.html

On the other hand, the pursuit of the “maximum profit” of his majesty pushes Armenian businessmen further away from “patriotic entrepreneurship”. In our reality, at least today, the slogan "You must not import what can be produced domestically" should be considered more relevant today, which currently largely bypasses the activities of Armenian entrepreneurs. Having large funds, they focus more on importing products that are in high market demand, than on producing them in the home country, as the latter is less profitable. Thus, national capital serves the economic interests of foreigners and does not serve the development of the real economic sector of the homeland and the formation of the country's national wealth.

***What are the risk components of the national value system?***

The national value system plays a decisive role in the economic barrier of the country. Economists even attempt to measure and quantify the interrelations between the socio-economic development of nations and the value systems of nations, with the aim of revealing the causal impact of national stereotypes on economic growth. In this regard, we attach importance to the interpretation of the impact of the Armenian people's national value system on the country's economic developments.

In general terms, the national value system is presented as a set of stereotypes specific to a particular ethnic group, in which the customs and norms of cultural, spiritual, and specific behavioral performance are mutually exclusive. In this respect, the Armenian people, who have a millennium-long history, have inherited a number of value-added components that can have both positive and negative effects on the country's national wealth formation, such as diligence, creativity, and a rapid perception of competitive entrepreneurship. or, an opposite, a lack of perception of corporate economic interest, a deficiency of entrepreneurial collectivism, a shortage of awareness of the need for state-run economics, and so on.




Figure 1: The mapping of Ethnic values system Impact Factor on national wealth[6]

Thus, if the national wealth of a country is mapped in a circle, its diameter (d) will be represented as a measure of the influence of the factors of national wealth formation, and consicuently, as “d” increases, the scope for national wealth growth will expand. Resarchers from an economical point of view already consider, what constitutes a set of factors influencing the formation of the Armenian people's national wealth, given the country's geographical location, historical development, competitive opportunities in international markets, but in this context the national value system is hardly discussed. Instead, from them a number of questions are raised.

[6] The figures 1-4 composed by authors




Figure 2 Overview of the impact of the ethnic value system on the formation of national wealth

What is the nature of the relationship between political, economic and so-called "invisible" institutions, and how should this be considered when talking about future of Armenian nation? How to ensure transparency, principles of dignity, professionalism, common rules for everyone in public relations and institutions? What are the internal incentives, that can mobilize the nation and make it a historical breakthrough? Will we be able to turn from a geopolitical entity into a full-fledged entity, or will nation prefer isolation and adaptation as development guidelines?

From our point, as a measure of the extent of the influence of the factors of national wealth formation (d), are suggested to present two major components: constitutional **(m)** and ethnic **(e).** Therefore, in factor analysis of national wealth formation we find it appropriate to be directed by the **d = e + m** hypothesis. And if we recognize, that the formation of the national wealth is more influenced by national values, than consistency with constitutional norms (e> m), then the ACB triangle, at its height (e), acts as a domain for influencing national peculiarities of economic prosperity (see Chart 2 ):

Consequently, as the ABC triangular area increases, as the ethnic value system is coming poewrfuull over the constitutional factor in

the national wealth formation. At the same time, the influence of factors of ethnic value system on national wealth can be viewed both positively and negatively (see Chart 1).




Figure 3 Overview of the constitutionality of the influence on the formation of national wealth

And if the constitutionality factor over the formation of national wealth is prioritized over value system influence (m>e), then we will have a new redistribution of factor influence, where the constitutionality will dominate, reducing the ABC triangle area (see chart 3). And as the **m/e** ratio increases, it will diminish the impact of the national value system on the nation's wealth creation. After all, if the **“e”** factor strives for 0 as much as possible, it can be stated, that the impact of the national value system on the economic prosperity of the country is not significant and here the constitutionality factor is dominant (see Figure 4).




Figure 4 The full impact of constitutionality on the formation of national wealth

Hence, the question arises as to which country, in the way of its economic development, usually succeeds: when it considers the constitutional factor to be a priority, or that it is largely under the influence of the national value system. We believe, that a specific approach to the search for the answer to this question needs to be taken into account, given the peculiarities of the national value system formed in the different countries. Thus, Western European countries, traditionally on the same plane of realization and consistency of constitutional norms and almost equally economically affected by the end of World War II, continued to have uneven economic development. Defeated Germany recovered faster and became economically advanced in a very short period of time because of the strong influence of positive components of the national value system, such as Germany's labor discipline, high levels of self-organization of work groups, some participatory management activity, and corporate involvement. supporting the establishment, the national vision of building an economically prosperous country, and the dominant position of the Aryan tribe in the world family of nations aspiration. These components of the national value system had a positive impact on the rapid recovery and sustainable development of post-war Germany's economy.

How will we assess the impact of the national value system on the development of the newly independent Armenian economy? It seemed that the collapse of the administrative-economic management system after the independence and the formation of market relations, the fulfillment of the centuries-old dream of the restoration of statehood by the Armenian people should have boosted the country's economic growth. However, this was not the case and one of the reasons was the negative impact of some components of the national value system on the economic development of the country. The tradition of primacy of the Armenian businessman's private interest over public economic interest has led the owners of the privatized companies to begin to dismantle the business with their own hands and to destroy the acquired manufacturing assets by selling and dismantling the economy.[7]

One of the negative components of the Armenian people's system of values that has lost state for centuries is the relatively weak sense of statehood that is reflected in economic relations as well. For Armenian businessmen, it is occasionally preferable to export capital from their own country and to start a business abroad, as in some cases the latter may be more profitable. Guided by the principle that "capital recognizes comfort rather, than the homeland," Armenian businessmen often contribute to the development of the economy of foreign countries, bypassing the economic interests of the homeland. Not only is the capital of Armenian businessmen emigrating from the homeland, but the capital of successful Diaspora Armenian businessmen is hardly ever returned to Armenia. And the main reason is not only the lack of attractiveness of the country's investment environment, but also the lack of state economy oriented approach in the national value system of Armenians.

***How are national values and national wealth linked?***

National income and prosperity are based on the country's assets or wealth, which are based on various macroeconomic measures. According to international standards, national wealth includes the following four components: produced capital, natural capital (reserves), human capital and net external assets. However, in parallel, the indicator of national wealth does not find its widespread use in practice and mainly uses the GDP and other macroeconomic indicators (net national income, gross national income, etc.). The main

---

[7] 90-ականների սեփականշնորհումն ու համատարած թալանը, https://4news.am/2019/02

disadvantage of calculating these indicators is that they typically characterize the country's twinkling of development without presenting the socio-economic development opportunities and potential. This major gap neutralizes the indicator of national wealth, which, at a given point in time, accumulates value in the country's natural resources, created physical capital, human capital and financial resources. According to experts, the use of this indicator is important in the process of macroeconomic regulation, but the RA National Statistical Service still does not calculate the magnitude of this indicator.

Thus, according to the World Bank data, per capita of national wealth per capita, the Republic of Armenia ranks 10th in the former Soviet republics, 12th in produced capital, 10th in natural capital and 8th in human capital. Second place. In terms of population, Armenia is in the 10th place.[8] Given that a significant portion of the national wealth (51.7%) per capita in the RA is human capital and that of the components of national wealth in the Caucasian region Armenia has an advantage (see Table 1), it becomes an increase of national wealth. the main factor.

Consequently, there is a need to analyze, how human capital and the associated national value system affect the national wealth of the country. Specific indicators are used in professional literature for this purpose, establishing a correlation between changes in human capital components and the economic growth of the country, based on stochastic analyzes.

In this regard, we propose to consider the circular approach to national wealth mapping by discussing the factor impact of the components of the national value system (see diagrams 2-4). Following our hypothesis of national wealth formation, it is counteracted by constitutional and national value system factor groups. Thus, if the area of national value system influence (ABC triangle area) increases within the framework of national wealth formation, than the constitutional factor influence area (residual area of the circle) decreases, and vice versa.

Our self proposed classification of the components of the National Value System on the RA Economy

1 Positive Impact Components K1

1.1 Emphasized diligence K11

[8] The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future. World Bank Group https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/29001/9781464810466

1.2 High level of creativity in management K12
1.3 Flexibility to Overcome Changes K13
1.4 Coping With Stresses in Business K14
1.5 Easily Identify the Competitive Entrepreneurial Guidelines K15
1.6 Adaptation to survival struggle K1
1.n other positive components K1n
2 Negative Impact Components K2
2.1 Priority for Mono Entrepreneurship aspirations K21
2.2 Weak orientation of state-owned businesses K22
2.3 Bypassing the Principles of Patriotic Economy K23
2.4 Refusal of participatory governance principles K24
2.5 Self-enrichment mania K25
2.6 No Confidence in the Institutional System of the Domestic Economy K26
2.7 Avoiding Entrepreneurial Consolidation K27
2.n other negative components K2n

Therefore, following the hypothesis we propose, it is possible to establish a balance between the above-mentioned impact areas in the following format:

Circle Area = Outlined Triangle Area + Remaining Area of Circle

or

Factor area of national wealth formation = area of national value system impact + constitutional sphere of influence

By presenting such a balancing in geometric scale, we will get:

Constitutional Impact Area = 3.14xD2 / 4 - ½ x b x c

It follows, that the influence of constitutional norms on the accumulation of a country's national wealth is counteracted by the introduction of the national value system, and the smaller the latter, the more the country's economic development rests on constitutionality.

Therefore, in assessing the macroeconomic assessment of the factor formation of the national wealth of the Republic of Armenia, we consider it important to take preventive measures and eliminate the impact of value-added factors that adversely affect the country's economic growth and the resulting accumulation of national wealth.

We believe that in the foreseeable future in the Republic of Armenia it is not possible to form such an institutional economic environment that will operate solely on the basis of constitutional norms and will not be affected by national systemic values. In this respect, the Armenian economy will find itself in a position to be able to somehow manage to neutralize the negative factors stemming from the national

value system, or to minimize their impact on economic development, with the aim of balancing it.

$$\Sigma K1 - \Sigma K2 \longrightarrow \max$$

Consequently, not only the discovery of the impact of the national value system on the process of national wealth formation in the Republic of Armenia, but also the definition of moderation, is currently considered the subject of serious economic research and requires researchers to find appropriate ways to address it.

## *Conclusion*

The concept of discussing the problems of economic prosperity of the country is undergoing radical changes among modern theorists. Consistent with the traditional geopolitical and resource-based factors, economic developments are now also intertwined with constitutionalism. At the same time, however, in the context of economic commentary, there is a need to continually identify and assess the impact of those unique components of the national value system that have a decisive role in the well-being of countries in the formation of national wealth.

***Key words:*** national wealth, national value system, economic growth, factor analysis, economic prosperity, constitutionality.

## ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ում

Արմեն Ճուղուրյան Նոննա Խաչատրյան

Երկրի տնտեսական բարգավաճման հիմնախնդիրների քննարկման հայեցակարգը արդի տեսաբանների շրջանում արմատական վերաձևումների է ենթարկվում: Ավանդական համարվող ռեսուրսային և աշխարհաքաղաքական գործոններին համընթաց, ներկայումս տնտեսական զարգացումները փոխկապակցվում են նաև սահմանադրականության հետ:[9] Սակայն, դրան զուգահեռ, տնտեսագիտական մեկնաբանումների

[9] Սարգսյան Հ., Հարությունյան Գ., Գևորգյան Ռ., Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցություն, Զանգակ, Երևան, 2018, 208 էջ

շրջագծում անհրաժեշտություն է ծագում շարունակաբար վերհանելու և գնահատելու ազգային հարստության ձևավորման վրա ազգային արժեհամակարգի այն յուրահատուկ բաղադրիչների ներազդեցությունը, որոնք իրենց որոշիչ դերակատարումն ունեն երկրների բարեկեցության ձևավորման գործընթացում:

***Հիմնաբառեր.*** ազգային հարստություն, ազգային արժեհամակարգ, տնտեսական աճ, գործոնային վերլուծություն, տնտեսական բարեկեցություն, սահմանադրականություն:

## ВЗАИМОЗАВИСИМОСТЬ НАЦИОНАЛЬНОЙ СИСТЕМЫ ЦЕННОСТЕЙ И ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В РА

Джугурян Армен Геворкович Хачатрян Нонна Николаевна

Концепция обсуждения проблем экономического процветания страны терпит радикальные изменения среди современных теоретиков. В сочетании с традиционными ресурсными и геополитическими факторами, экономические процессы в настоящее время также взаимосвязаны с конституционализмом. Наряду с этим, в статье предлагается в контексте экономических комментариев постоянно выявлять и оценивать взаимосвязи между тех уникальных компонентов национального богатства и национальных систем ценностей, которые играют решающую роль в формировании благосостояния страны.

***Ключевые слова:*** национальное богатство, национальная система ценностей, экономический рост, факторный анализ, экономическое процветание, конституционность.

# ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Վլադիմիր Վահանյան

Ճգնաժամային իրավիճակները հասարակությունում դրսևորվում են մի շարք ոլորտներում և բացասական ազդեցություն են թողնում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Ճգնաժամերը հատուկ են ինչպես տնտեսությանը, երբ խախտվում է մակրոտնտեսական հավասարակշռությունը, այնպես էլ սոցիալական, բնապահպանական, հասարակության անվտանգության ոլորտներին: Բոլոր դեպքերում, ճգնաժամը ընդհանրական բնութագրվում է որպես իրավիճակի կտրուկ փոփոխություն, որը համատարած սպառնալիքներ է առաջացնում հանրության կենսագործունեության խաթարման, կայուն զարգացման կասեցման, սոցիալ-տնտեսական անվտանգության ապահովման առումներով:[10]

Հասարակության զարգացման տարբեր փուլերում ճգնաժամային իրավիճակներին մարդկության կողմից տարբեր մոտեցումներ են ցուցաբերվել: Եթե սկզբնական փուլում ճգնաժամաերի ժամակ գեիշխել է կարծիք. “Փրկվեք, ով կարող է”, ապա հետագայում, սոցիումի զարգացման և հասարակական կյանքի որակների փոփոխման արդյունքում այդ մոտեցումը մարդկանց գիտակցությունում վերանայվել է, և որպես կանոն, ճգնաժամերի էսկալացիայի ու համատարած սպառնալիքների տարածման պայմաններում արդեն իսկ ներկայացել է “Փրկվենք միասին” ձևակերպումով: Հանրային կյանքի ներկա որակները և տեխնոլոգիական զարգացման ընթացքը հասարակական վերաբերմունքի նոր մոտեցումներ է դրսևորում ճգնաժամային իրավիճակներին, երբ արտակարգ պայմաններին ցուցաբերվոևմ է հետևյալ վերաբերմունքը. “Հնարավորինս կանխարգելում ենք համատարած աղետը, իսկ եթե այն տեղի է ունենում, ուրեմն միահամուռ ուժերով և ժամանակակից տեխնոլոգիաներով փրկության ուղիներ ենք որոնում”: [11]

Հետևաբար, հասարակությունը մշտապես ձգտում է խուսափել ճգնաժամային իրավիճակներից և հնարավորինս կանխարգելել դրանք: Իսկ եթե ճգնաժամային իրավիճակների ձևավորումը օբյեկտիվ բնույթ է կրում դառնում է անխուսափելի, ապա առաջնահերթ է դառնում այն հնարավորինս դարձնելու կառավարելի, փորձելով մեղմել ճգնաժամային ռիսկերից ձևավորվող բացասական վնասները:[12]

---

[10] Экономические механизмы управления рисками чрезвичайных ситуаций, // http://www.obzh.ru/eco/

[11] Стоецкий В.Ф., Управление техногенной без0пасностью обьектов повышенной опасности, Киев 2005, стр. 31, 492 стр

[12] Акимов В.А., Богачев В .Я., В.К.Владимирский, В.Д. Новиков, В.В. Лесных, В.А. Макеев, В.И. Сорокин, А.В. Шевченко.. Экономические механизмы управления рисками чрезвычайных ситуаций / МЧС России., М.: ИПП «Куна», 312 с.. 2004

Հայաստանը բնածին ծագման արտակարգ իրավիճակների հնարավոր դրսևորման տեսակետից գտնվում է բավականին բարձր ռիսկային տարածաշրջանում: Հայտնի բնածին վտանգավոր երևույթներից **110**-ը դրսևորվել է, կամ կարող է դրսևորվել հանրապետությունում: Բնական աղետներից Հայաստանի Հանրապետությունը բոլորից շատ ազդեցություն է կրում երկրաշարժերից, սողանքներից, գարնանային ցրտահարությունից, կարկտահարությունից, սելավներից, ուժեղ քամիներից, անտառային հրդեհներից: Սակայն երկրաշարժի վտանգը հանրապետությունում կազմում է աղետների ընդհանուր վտանգի շուրջ 94 %-ը:

Մյուս կողմից, գիտատեխնիկական առաջընթացը իր հետ բերում է նաև տեխնածին աղետների ձևավորման հավանականություն: Հետևաբար, ճգնաժամային իրավիճակների ձևավորման պատճառները ոչ միայն բնածին են, այլև առնչվում են մարդու գործունեության հետ, որոնք հանգեցնում են տեխնածին վթարների, արդյունքում առաջացնելով աղետներ: Համաձայն գործող օրենսդրության, տեխնածին վթարը արտադրության մեջ կիրառվող տեխնոլոգիական սարքավորումների, շենքերի, շինությունների ավերածություններ, չվերահսկվող պայթյուն եւ հրդեհ, վտանգավոր, վնասակար նյութերի արտանետումների հետևանք է, որով վնաս է հասցվում մարդկանց առողջությանը, շրջակա միջավայրին:[13] **Այս առումով,** ՀՀ-ում տեխնածին խոշոր վտանգների ռիսկի աղբյուր են հանդիսանում ինչպես Հայաստանի ԱԷԿ-ը, այնպես էլ քլոր, ամոնիակ, աղաթթու և այլ վտանգավոր նյութեր օգտագործող թվով **27** քիմիական գործարան, բարձր պայթյունավտանգ և հրդեհավտանգ շուրջ **1500** ձեռնարկություն, **80** ջրամբար, **19** պոչամբար:[14]

Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ մոլորակի վրա տարերային աղետներից ազգաբակչութունը առավելապես տուժում է երկրաշարժերից, որն իր առավել ցայտուն դրսևորում է Հայաստանի Համրապետութունում (տես գծապատկեր 1.1.1): Բնածին աղետների կողմից պատճառվող վնասների կազմում ՀՀ-ում էական տեսակարար կշիռ են կազմում նաև սողանքները:

Ինչպես տեխնածին, այնպես էլ բնածին աղետները հանգեցնում են արտակարգ իրավիճակների, որոնք որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, հանգեցնում են մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և

[13] "Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին" ՀՀ օրենքը, Երևան. 2005, հոդ. 4

[14] Մանուկյան Ս.Ա, Ճաղարյան Գ.Հ., Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր, ԵՊՀ հրատ., 2017, էջ 3

կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:[15] Ընդ որում, ՀՀ-ում առավելապես ազգաբնակչությունը տուժում է տեխնածին աղետներից: Միայն 2018 թվականին հանրապետությունում տեխնածին աղետներից տուժել է 6 378 մարդ, որոնցից զոհվել են 364-ը (տես աղյուսակ 1.):




Գծապատկեր 1. Տարերային աղետների վնասի համեմատական կառուցվածքը[16]

Փորձը ցույց է տալիս, որ ինչքան փոքր է երկրի տարածքը, այնքան նրան սպառնացող արտակարգ իրավիճակների տեսակների թիվը սահմանափակ է: Եթե առավել խոշոր երկրներին՝ Ֆրանսիա, Իսպանիա, որոնք ունեն 500 հազար քառ. կմ-ից մեծ տարածք, սպառնում են գրեթե բոլոր արտակարգ իրավիճակները, ապա համեմատաբար փոքր երկրներին (Բելգիա, Հոլանդիա, Իսլանդիա և այլն) մինչև 50-60 հազ. քառ. կմ տարածքով, սպառնում են այդ արտակարգ տարատեսակ իրավիճակների ձևավորման գրեթե կեսը: Սակայն այս առումով բացառիկ է Հայաստանի Հանրապետությունը, քանի որ ոչ մեծ տարածքով մեր երկրին սպառնում են գրեթե բոլոր տեսակի արտակարգ իրավիճակները, բացառությամբ ծովային աղետների: Եվ այս առումով, մասնագիտական գրականությունում ՀՀ-ն բութագրվում է որպես բնական աղետների, տարաբնույթ տեխ-

[15] "Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին" ՀՀ օրենքը, Երևան., 1999, հոդ. 1

[16] Կազմել է ատենախոսի կողմից՝ համեմատական վերլուծությունների հիման վրա:

նածին վթարների մի բնական լաբորատորիա: Պատճառը բնակլիմայական, աշխարհագրական, ռելիեֆային բազմազան պայմաններն են, բազմապրոֆիլ արդյունաբերությունը, էներգետիկան և այլն:[17]

Աղյուսակ 1.

ՀՀ-ում գրանցված արտակարգ դեպքերից տուժածների թվաքանակը, 2018թ.[18]

| Արտակարգ դեպքեր | Տուժած մարդկանց քանակը | | այդ թվում | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | զոհվել են | | վիրավորվել են | |
| | ընդամենը | նրանցից՝ կանայք | Ընդամենը | նրանցից՝ կանայք | Ընդամենը | նրանցից՝ կանայք |
| Տարերային վտանգավոր երևույթներ | 4 | - | 2 | - | 2 | - |
| Տեխնածին աղետներ | 6 378 | 1 826 | 364 | 58 | 6 014 | 1768 |
| Սոցիալ-կենսաբանական արտակարգ դեպքեր | 5 234 | 1 372 | 37 | 10 | 5 197 | 1362 |
| Ընդամենը | 11 616 | 3 198 | 403 | 68 | 11 213 | 3 130 |

Ճգնաժամային իրավիճակի ձևավորման պատճառ են հանդիսանում նաև սոցիալ-կենսաբանական արտակարգ դեպքերը, որոնք համատարած բնույթ կարող են ստանալ, իրենց զարգացումներով վերածվեն աղետի և լուրջ սպառնալիքներ ստեղծեն հասարակության համար: Որպես կանոն, դրանք ձևավորվում են մարդկանց և կենդանիների շրջանում համատարած թունավորումների, համաճարակային բռնկումների ժամանակ: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում գրանցված արտակարգ դեպքերից տուժածների թվաքանը մեծ տեսակարար կշիռ են զրավում հենց սոցիալ կենսաբանական արտակարգ դեպքերից (տես աղյուսակ 1.):

[17] Հարությունյան Ս. Ա., ԱԻ և ՔՊ հիմնահարցեր, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003, «Տնտեսագետ» հրատարակություն, էջ 12

[18] ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 213

Աղյուսակ .2

Գրանցված սոցիալ-կենսաբանական արտակարգ դեպքերի քանակն ու տուժածների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2018թ.[19]

| ՀՀ մարզեր և ք. Երևան | Արտակարգ դեպքերի քանակը, միավոր | Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ | | |
|---|---|---|---|---|
| | | ընդամենը | այդ թվում | |
| | | | զոհվել են | վիրավորվել են |
| ք. Երևան | 3 489 | 3 445 | 16 | 3 429 |
| Արագածոտն | 79 | 92 | - | 92 |
| Արարատ | 252 | 274 | 5 | 269 |
| Արմավիր | 440 | 522 | 4 | 518 |
| Գեղարքունիկ | 150 | 237 | 5 | 232 |
| Լոռի | 128 | 202 | 1 | 201 |
| Կոտայք | 206 | 236 | 1 | 235 |
| Շիրակ | 94 | 123 | 1 | 122 |
| Սյունիք | 39 | 49 | 2 | 47 |
| Վայոց ձոր | 22 | 17 | 1 | 16 |
| Տավուշ | 37 | 37 | 1 | 36 |
| Ընդամենը ՀՀ | 4 936 | 5 234 | 37 | 5 197 |

Ընդ որում, սոցիալ-կենսաբանական աղետներից առավելապես տուժում է խիտ բնակեցված վայրերը, որտեղ բավականին մեծ են համաճարակների տարածման, շփթայական թունավորումների առաջացման ռիսկերը:

Այսպես, պաշտոնական վիճակագրական տվյալներով 2018 թվականին ՀՀ-ում սոցիալ-կենսաբանական արտակարգ դեպքերի քանակն ու տուժածների թվաքանակն առավելապես գրանցված են Երևան քաղաքում (տես աղյուսակ 2):

Պաշտոնական վիճակագրությունը վկայում է նաև, որ տարերային աղետների վնասակար ներազդեցությունը և դրանից տուժողների թվաքանակը ՀՀ-ում շատ ավելի նվազ են, համեմատած սոցիալ կենսաբանական և տեխնածին արտակարգ դեպքերի հետ: Այսպես, աղյուսակ 3-ը ցույց է տալիս, որ 2018 թվականին ՀՀ-ում գրանցված տարերային վտանգավոր երևույթներից տուժածների թվաքանակը շատ ավելի փոքր է՝ համեմատած ճգնաժամային մյուս իրավիճակների:

[19] ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 212

Աղյուսակ 3

Գրանցված տարերային վտանգավոր երևույթների քանակն ու տուժածների թվաքանակն ըստ տեսակի, 2018թ.[20]

| Տարերային աղետ | Արտակարգ դեպքերի քանակը, միավոր | Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ | | |
|---|---|---|---|---|
| | | Ընդա-մենը | այդ թվում | |
| | | | զոհվել են | իրավորվել են |
| Ուժեղ քամի, փոթորիկ, մրրիկ, փոշեփոթորիկ | **34** | **1** | | **1** |
| Ամպրոպ, կայծակ | **6** | | | |
| Կարկուտ | **46** | | | |
| Տեղատարափ անձրև | **12** | | | |
| Սողանք, հողասահք | **4** | | | |
| Սելավ | **1** | | | |
| Բուք | **5** | | | |
| Սառցամածություն | **21** | **1** | **1** | |
| Ձնահյուս | **1** | | | |
| Անտառային հրդեհ | **21** | | | |
| Ցրտահարություն վեգետացիոն շրջանում | **4** | | | |
| Հեղեղում, գետերի վարարումներ | **11** | | | |
| Դարափուլ (փլվածք, նստվածք) | **15** | **1** | **1** | |
| Քարաթափվածք | **43** | **1** | | **1** |
| Երկրաշարժ | **47** | | | |

Այս առումով, կառավարման տեսանկյունից կարևորվում է ճգնաժամային իրավիճակների բնութագրիչների դասակարգումը (տես գծապատկեր 2): Ընդհանուր առմամբ, ճգնաժամերի առաջացման օջախները երեքն են՝ բնածին, տեխնածին և սոցիալ կենսաբանական, որոնք արտակարգ իրավիճակ են ստեղծում, ունենալով համատարած բնույթ և ուղեկցվելով տնտեսական, հոգեբանական և սոցիալական ահռելի կորուստներով: Սակայն, ոչ միշտ է, որ մարդկությունը ընդհանրապես ի զորու չի լինում կանխարգելելու, և անգամ կառավարելու ճգնաժամային իրավիճակներն այնպես, որ այդ կորուստները հնարավորինս հասցվեն նվա-

[20] ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 213

զագույնի:[21] Հետևաբար, ճգնաժամային իրավիճակները առաջարկում ենք բնութագրել նաև ըստ կառավարլիության աստիճանի:




Գծապատկեր 2 Ճգնաժամային իրավիճակների բնութագրիիչները կառավարման տեսանկյունից[22]

Այսպես, գործնականում գրեթե անհնար է կանխարգելել բնածին աղետները (երկրաշարժեր, փոթորիկներ, ցունամիներ և այլն), ապա կենսաբանական աղետները արդեն իսկ ամբողջովին կանխարգելի են (համաճարակների դեմ պատվաստումներ, համատարած թունավորումների կանխմանը ուղղված սննդի անվտանգության ապահովման գործառույթներ): Հակաիրդեհային, տեխնիկական անվտանգության միջոցա-

[21] Архипова Н.И., Кульба В.В. Управление в чрезвычайных ситуациях, М.: РГГУ, 2008, стр. 67

[22] Կազմվել է ատենախոսի կողմից:

ռումները մասամբ կանխարգելում են տեխնածին վթարները և դրանցից բխող կորուստների նվազեցման գործընթացը դարձնում մասամբ կառավարելի:[23]

Որպես կանոն, մարդու կողմից ներազդեցությունը ճգնաժամերի վրա առավել էական է դրսևորվում ոչ թե կանխարգելման, այլ հետադետային ժամանակահատվածում, որը բնութագրվում է մի շարք պատճառներով: Նախ, աղետները հիմնականում ծագման հանկարծակի բնույթ են կրում և հնարավորություն չի ստեղծվում նրանց վրա ակնթարթային ներազդեցություն կատարելու և անմիջականորեն կանխելու ճգնաժամի ձևավորումը: Եվ հետևաբար, որքան էլ որ նախապատրաստական աշխատանքներ են տարվում արտակարգ իրավիճակների կանխարգելման և հնարավոր ռիսկերի կառավարման առումով, այնուամենայնիվ, ճգնաժամային երևույթների ներազդեցության հնարավորությունը դրսևորվում է առավելապես աղետների առաջացումից հաջորդիվ ժամանակահատվածում, երբ կառավարլի են դառնում աղետներից ձևավորված կորուստների նվազեցումը (տես գծապատկեր 2):

Բացի այդ, ճգնաժամային կառավարման մարմինները որպես կանոն, նախօրոք հստակեցնում են իրենց գործունեությունը, և դրանով իսկ, հետաղետային իրադարձությունները առավել կառավարելի են դառնում: Ուստի ճգնաժամային իրավիճակները բնութագրելիս կառավարումը դառնում է առավել արդյունավետ, երբ հնարավորինս կարճաժամկետ կտրվածքով են վերացվում աղետների վնասաբեր հետևանքները:

Այս առումով, կարևորվում է արտակարգ իրավիճակների կառավարման սկզբունքների կիրառումը, ինչպիսիք են.

- ✓ անընդհատությունը, երբ կառավարման մարմինների կողմից իրականացվում է հիմնախնդիրների լուծման ուղղությամբ մշտական ներազդեցություն,
- ✓ կայունությունը, երբ կառավարման մարմինների կողմից ցուցաբերվում է ունակություն, իրականացնելու գործառույթներ բարդ և կտրուկ փոփոխվող իրավիճակներում,
- ✓ վճռականությունը, երբ արտակարգ իրավիճակների խնդիրների լուծման ուղղությամբ կառավարչական որոշումները հաստատակամորեն կյանքի են կոչվում,
- ✓ ճկունությունը, իրավիճակի փոփոխություններին արձագանքելու ունակությունը, և անհրաժեշտության դեպքում, դեպքերի զարգացման արդյունքում կառավարչական որոշումների ներկայացումը,
- ✓ օպերատիվությունը, կառավարման հաղորդակցման ուղի-

[23] В.Л. Шульц, В.В. Кульба, А.Б. Шелков, И.В. Чернов Методы планирования и управления техногенной безопасностью на основе сценарного подхода. // Национальная безопасность , 2013. - № 2. - С. 198-216.

ների արդյունավետ կիրառումը, հետադարձ կապի ապահովումը, կառավարչական հաշվետվողականությունը:


## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բնութագրելով արտակարգ իրավիճակներ ձևավորող ճգնաժամային իրավիճակների շրջանակը, կարող ենք ներկայացնել այն սկզբունքները, որոնք դրվելու են ճգնաժամային կառավարման հիմքում:

Առաջին, կորպորատիվ կառավարման սկզբունքը, երբ արտակարգ իրավիճակներում հանրային մոտեցումներ են ցուցաբերվում և միահամուռ ուժերով են հաղթահարվում ճգնաժամային խնդիրների լուծման ուղիները, վնասների կանխարգելմանը ցուցաբերելով համընդհանուր մոտեցում, դրանով իսկ արտակարգ իրավիճակներում անհատական ու խմբային շահերը տեղափոխելով հանրային շահերի տիրույթ:

Երկրորդ, ճգնաժամերի հաղթահարման կառավարչական որոշումների դասակարգման սկզբունքը, երբ դրանք խմբավորվում են ըստ ներազդեցության ցածր, միջին և բարձր աստիճաններով, դրանով իսկ արտակարգ իրավիճակների կառավարումը դարձնելով առավել արդյունավետ և վնասների հաղթահարման գործառույթները կենտրոնացնելով հիմնականում կառավարելիության դաշտում:

Երրորդ, ճգնաժամային կառավարումը հիմնականում իրականացվելով արտակարգ իրավիճակների պայմաններում, շեշտադրումներ է կատարում այնպիսի կարևորագույն սկզբունքների վրա, ինչպիսիք են անընդհատությունը, կայունությունը, վճռականությունը, ճկունությունը և օպերատիվ գործելու հնարավորությունը, որով մի կողմից կայացվում են վնասաբեր օջախների վերացման թիրախավարված կառավարչական որոշումներ, և մյուս կողմից, ապահովում է դրանց արդյունավետ ու լիարժեք իրականացումը:


***Հիմնաբառեր.*** տարերային աղետ, արտակարգ իրավիճակներ, կորպորատիվ կառավարում, կառավարման ռիսկեր:

## KEY PRINCIPLES OF CRISIS MANAGEMENT

Vladimir Vahanyan


Describing the scale of crisis situations that form emergency situations, in article is presented the principles, that will underlie crisis management.

Firstly, the principle of corporate governance, in which public approaches are manifested and combined in overcoming ways to resolve crisis issues by applying a universal approach to injury prevention, which leads to the shift of individual and group interests into the public domain.

Secondly, the principle of classification of crisis management decisions, since they are grouped by low, medium and high levels of influence, which makes emergency management more efficient and focuses on loss management functions, mainly in the field of management.

Thirdly, crisis management, which focuses on emergencies, emphasizes key principles such as continuity, stability, sustainability and the ability to work effectively, on the one hand, and on the other hand, in targeted management decisions to eliminate harmful sources, their effective and complete implementation.

***Key words***: natural disasters, emergency situations, corporate governance, risk management.

## КЛЮЧЕВЫЕ ПРИНЦИПЫ КРИЗИСНОГО УПРАВЛЕНИЯ

Владимир Ваанян

Описывая масштабы кризисных ситуаций, которые формируют чрезвычайные ситуации, можем представить принципы, которые будут лежать в основе кризисного управления.

Во-первых, принцип корпоративного управления, в котором публичные подходы проявляются и объединяются в преодолении путей решения кризисных вопросов путем применения универсального подхода к предотвращению травматизма, что приводит к смещению индивидуальных и групповых интересов в общественное достояние.

Во-вторых, принцип классификации кризисных управленческих решений, поскольку они сгруппированы по низким, средним и высоким уровням влияния, что делает управление чрезвычайными ситуациями более эффективным и фокусируется на функциях управления убытками, главным образом в области управления.

В-третьих, кризисное управление, в котором основное внимание уделяется чрезвычайным ситуациям, подчеркивает ключевые принципы, такие как преемственность, стабильность, устойчивость, устойчивость и способность эффективно работать, с одной стороны, и с другой стороны, в целевых управленческих решениях по ликвидации вредных источников; их эффективное и полное выполнение.

***Ключевые слова:*** стихийные бедствия, чрезвычайные ситуации, корпоративное управление, управление рисками.

# ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վանո Ղազազյան

Ներդրումների արդյունավետության գնահատումը տնտեսագիտության տեսությունում ավանդաբար ներկայացվել է ծախսված ռեսուրսների հատույցի տեսանկյունից: Ընդ որում, հիմնականում ներդրումային հատույցը տնտեսական հարթությունում առավելապես մեկնաբանվել է ռեսուրսների հետգնման արագությամբ, կամ հավելաճով:[24] Սակայն, տնտեսավարման ներկա էտապում ներդրումային ծրագրերը իրենց հետևանքներով առնչվում են շահառուների լայն շրջանակի, որի հետևանքով դրանց արդյունավետությունը զուտ տնտեսական առումով գնահատելը կարող է համարվել ոչ լիարժեք:

Այս առումով գտնում ենք, որ ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգը աստիճանաբար անհրաժեշտ է ենթարկել փոփոխությունների, առավելապես թիրախավորելով ոչ միայն ծախսված ռեսուրսների հետգնման գործընթացը, այլև ներդրումային ծրագրերի իրագործումից շահառուների բավարարվածության աստիճանը: Այսինքն, ներդրումների արդյունավետության գնահատման հիմքում այս դեպքում դրվում է սպասելիքների գաղափարը:[25]

Մյուս կողմից, մասնագիտական գրականության մեջ նշվում է նաև, որ ներդրումներից շահառուների սպասելիքները կարող են հակազդել միմյանց վրա և անգամ կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծել: Օրինակ, ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում իրականացվող ներդրումները ավելացնում են մետաղի հանքաքարի արդյունահանման ծավալները, լեռնամետալուրգիական կազմակերպություններին տեղափոխում խոշոր հարկատուների դաշտ, որը ֆիսկալ առումով շահավետ է համարվում հանրության շրջանում: Սակայն մյուս կողմից, հանքարդյունաբերության ոլորտը հսկայական բնապահպանական վնասներ է հասցնում հանրությանը, վնասելով գյուղատնտեսական հողատարածքներ, ձնավորելով թունավոր թափոններով պոչամբարներ, որը բնականաբար հանրային դժգոհություններ է առաջացնում և չի օժանդակում ոլորտում

---

[24] Мостовщикова И.А., Соловьева И.А. Инвестиционная активность и инвестиционный портфель организации//Научный диалог, 2013, № 7(19): Экономика. Право. Политология, стр. 58-61

[25] Савина О.Н. Действующие инструменты стимулирования инвестицион-ных процессов в современных экономических условиях и предложения по их совершенствованию//Финансовая аналитика: проблемы и решения, № 6, 2015. стр.43-57.

ներդրումային գործընթացի ակտիվացմանը: Առավել ևս, երբ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող ներդրումները նպաստում են զարգացող երկրի վերածմանը տնտեսապես զարգացած երկրների հումքահանքային կցորդի:[26]




Գծապատկեր 1 Ներդրումների հատույցի դրսևորման համընդհանուր ոլորտները[27]

Հետևաբար, ներդրումների արդյունավետությունը գնահատելիս անհրաժեշտություն է ծագում բացահայտելու այն ոլորտները, որտեղ ներդրումային ծրագրերի իրագործումները իրենց սոցիալ-տնտեսական հետագիծն են թողում տնտեսավարման տարբեր հարթություններում: Իսկ ընդհանուր առմամբ, այդ ոլորտները ներկայացվում են երեք խոշոր խմբերով: Գծապատկեր 1-ը ցույց է տալիս, որ ներդրումների հատույցի դրսևորման համընդհանուր ոլորտի հիմնային շարժառիթը տնտեսականն է: Որպես կանոն, ներդրումային ծրագրերի իրագործումը տնտեսական շահ է հետապնդում, նպատակ ունենալով ամրապնդելու կազմակերպությունների մրցակցային դիրքերը շուկայում, ապահովելու հնարավորինս բարձր կապիտալահատույց: Մասնավոր սեկտորից բացի, իր հերթին պետությունը նույնպես ներդրումներից տնտեսական շահի ակնկալիքներ է հետապնդում՝ հարկային ներհոսքերի ավելացումների,

[26] Հանքարդյունաբերության բնապահպանական և առողջապահական հետևանքները, http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12
[27] Կազմվել էատենախոսի կողմից:

ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման, երկրի տնտեսական համբավի բարձրացման առումներով:[28]

Սակայն սոցիալական գործարարության զարգացման ներկայիս արագ տեմպերի պայմաններում ներդրումների իրականացման շարժառիթները տնտեսական ոլորտից աստիճանաբար տեղափոխվում են սոցիալական ոլորտ (տես գծապատկեր 1), հետապնդելով հանրային շահեր: Մակրոտնտեսական կտրվածքով ներդրումային ակտիվության արդյունավետությունը գնահատվում է նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության եկամուտների ավելացման, տարածքային սոցիալ-տնտեսական համաչափ զարգացման, մարդկային կապիտալի որակական կազմի բարելավման, աշխատուժի արտագաղթի կանխարգելման կտրվածքով:[29]

Հատկապես ներկայիս ներդումային ծրագրերին միջազգային պրակտիկայում ամրագրվում է սոցիալական պատասխանատվության նշանակալից շրջանակ, երբ ներդրողները տնտեսականից բացի, հանրության առջև սոցիալական և բնապահպանական պարտավորվածություններ են ստանձնում: Բացի այդ, տեղի է ունենում նաև հանրության հետ հետադարձ կապի գործընթաց[30], երբ ներդրողները վճարելով բնապահպանական և բնօգտագործման հարկեր, հաշվետու են լինում ազգաբնակչությանը իրենց բնապահպանական գործունեության արդյունքների գծով:

Այս առումով, ներդրումային գործընթացի արդյունավետության գնահատումները կապվում են քաղաքացիական հասարակության զարգացումների հետ, երբ հստակ խնդիր է դրվում ոչ միայն ներդրումների արդյունքում ձևավորվող սոցիալ-տնտեսական հետևանքների թափանցիկության ապահովման, այլև այդ գործընթացում հանրային շահեր հետապնդող կառավարչական որոշումներում ազգաբնակչության հնարավոր մասնակցության ոլորտներում: Բնականաբար, նման պարագայում ներդրումային գործունեության հատույցի դրսևորման գնահատումները նույնպես չեն սահմանափակվում տնտեսական ոլորտում, և տեղափոխվում են սոցիալական և բնապահպանական ոլորտներ (տես գծապատկեր 1):

---

[28] Штефан М.А., Офицерова О.Ф. Формирование многофакторного критерия оценки инвестиционной привлекательности организации//Финансы и кредит, 2015 - № 3 (627) стр. .27-37.

[29] Мякшин В.Н. Факторы инвестиционной привлекательности региона и их оценка//Региональная экономика: теория и практика, 2014. - № 14 (341), стр. 23-33

[30] Մուրադյան Ս. Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը ՀՀ լեռնահանքային կազմակերպություններում, //Հյուսիսափայլ, 2018, էջ 58-62

Աղյուսակ 1

Ներդրումների արդյունավետության գնահատման առաջարկվող հարաբերական ցուցանիշների համախումբը[31]

| Ն2. | Ցուցանիշի անվանումը |
|---|---|
| **Տնտեսական ոլորտ** | |
| $M_{11}$ | Կապիտալի շահութաբերության փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{12}$ | Ներդրոմներից դրամական զուտ ներկա արժեքի փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{13}$ | Ներդրումների հետգնման ժամկետի փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{14}$ | Իրացման շահութաբերության փաստացի և նախատեսված մեծու-թյունների հարաբերություն |
| $M_{15}$ | Հարկազանձման փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{16}$ | Ներդրումների իրականացումից բխող նորամուծությունների փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| **Սոցիալական ոլորտ** | |
| $M_{21}$ | Նոր աշխատատեղերի ստեղծման փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{22}$ | Տարածքային սոցիալական համահարթեցման փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{23}$ | Արտազաղթի կանխարգելման արդյունքների փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{24}$ | Մարդկային որակավորված կապիտալի ձևավորման փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{25}$ | Ներդրումների արդյունքում կոլեկտիվի եկամուտների փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| **Բնապահպանության ոլորտ** | |
| $M_{31}$ | Ներդրումային գործունեության բնապահպանական արդյունքների փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{32}$ | Ներդրումային գործունեության շրջանակում բնօգտագործման փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |
| $M_{33}$ | Կայուն զարգացմանը առնչվող ներդրումային գործունեության փաստացի և նախատեսված մեծությունների հարաբերություն |

[31] Կազմվել է ատենախոսի կողմից:

Հետևաբար, ներդրումների արդյունավետության գնահատման առաջարկվող ինտեգրալային ցուցանիշում անհրաժեշտություն ենք համարում ընդգրկելու ներդրումային ծրագրերից փաստացի ձեռքբերումների աստիճանը բնութագրող գործոնային ցուցանիշներ, որոնք ներկայացնում են ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու բնապահպանական ոլորտները (տես աղյուսակ 1):




Գծապատկեր 2 Ներդրումների արդյունավետության գնահատման առաջարկվող հայեցակարգային շրջանակը[32]

[32] Կազմվել է ատենախոսի կողմից:

Հարաբերական ցուցանիշների առաջարկվող համախումբը (աղյուսակ 1) հաստատուն չէ և կարող է փոփոխություններ կրել՝ ելնելով ներդրումային ծրագրի առանձնահատկություններից: Սակայն, մեր կարծիքով, ներդրումների արդյունավետությունը գնահատելիս հնարավորինս պետք է հաշվի առնվի գործոնների բազմազանությունը, որոնք արտացոլում են ներդրումային հատույցի տարբեր ոլորտներ: Այս առումով, կարևորում ենք ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային շրջանակում ներդրումային հատույցի միկրո և մակրոտնտեսական դրսևորումների արձանագրումը, որոնք ի վերջո, թիրախավորված են ներդրումներին առնչվող շահառուների սպասելիքների բավարարվածությանը (տես գծապատկեր 2):

Ներդրումների արդյունավետության գնահատման մեր կողմից առաջարկվող հայեցակարգը ընդգրկում է ոլորտային այն տիրույթները, որտեղ կարող են դրսևորվել ներդրումային սոցիալ տնտեսական հետևանքները՝ միաժամանակ փոխկապակցություն հաստատելով արդյունավետության գնահատման ուղղությունների հետ: Այսպես, ներդրումային գրավչության գնահատման առաջնահերթ ուղի է համարվում կապիտալի միգրացիան, և եթե երկրում նկատվում է կապիտալի ներհոսքի առաջանցիկություն արտահոսքի նկատմամբ, ապա դրանով իսկ դրական է գնահատվում ներդրումային գրավչության մթնոլորտը:

Հայաստանի Հանրապետությունում դեռևս նման իրավիճակ ներկայումս չի արձանագրվում, չնայած այն հանգամանքի, որ օրենսդրորեն ամրագրված են ներդրումների պաշտպանվածությունն ու ապահովագրությունը, և այս առումով կապիտալի միգրացիայի ու ներդրումային մթնոլորտի գրավչության փոխառնչության գնահատումը մեր կողմից հայեցակարգային դրույթ է համարվում ներդրումների արդյունավետության գնահատման շրջանակում (տես գծապատկեր 2):

Ներդրումների արդյունավետության գնահատման առաջարկվող հայեցակարգային շրջանակում առաջարկում ենք նաև ընդգրկել ծրագրերի համակցված ֆինանսավորման արդյունավետության գնահատումը: Ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը ոչ միայն որոշակիորեն երաշխիքներ է ստեղծում ներդրումային ծրագրերի կայուն զարգացման համար, այլև մեծացնում է շահագրգիռ ներդրողների շրջանակը տնտեսավարման տարբեր ոլորտներում արդյունավետության բարձրացման ուղղություններով, որը լրացուցիչ խթան է հանդիսանում ներդրումային մուլտիպլիկացիոն հատույցի խորքային վերլուծություններ իրականացնելու համար: Ընդ որում, ներդրումների ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը շահերի բախման հավանականություն է ստեղծում միևնույն ծրագրի իրականացման շրջանակում ընդգրկված ներդրողների միջև, որի արդյունքում տեղի են ունենում հնարավոր բացահայտներ ներդրումների արդյունավետության բարձրացման ռեզերվներ գծով:

ՀՀ-ում իրականացվող ներդրումների արդյունավետության գնահատման առաջարկվող հայեցակարգում առանցքային է համարվում նաև ինտեգրալային ցուցանիշի կիրառումը, որը չափում և համախմբում է ներդրումային ծրագրերից բխող նպատակադրումների հասանելիության աստիճանը՝ փաստացի արդյունքների նախատեսված մեծությունների համեմատման միջոցով: Արդյունավետության գնահատման ինտեգրալային ցուցանիշը հնարավորություն է ստեղծում հաշվի առնելու տարբեր ոլորտներում (տնտեսական, սոցիալական, բնապահպանական) ներդրումների հատույցը և դրանք ամփոփելու հարաբերական ցուցանիշների (գործակիցների տեսքով): Արդյունավետության գնահատման նման մոտեցմամբ փաստորեն տարբեր չափայնություն ունեցող ներդրումային արդյունքները վերածվում են գործակիցների, և դրանով իսկ ձեռք են բերում համադրելիություն: Իսկ դա հնարավորություն է ընձեռնում ներդրումային տարաբնույթ հետևանքները ամբողջացնելու և ներառելու արդյունավետությունը գնահատող մեկ ինտեգրալային ցուցանիշում:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այսպիսով, ներդրումների արդյունավետության գնահատման մեր կողմից առաջարկվող հայեցակարգային դրույթների բարելավման արդյունքում ներդրումային գործունեության ոլորտում տեղի է ունենում կառավարման գործիքակազմի որակական փոփոխություններ՝ հետևյալ ուղղություններով.

Առաջին. ներդրումների արդյունավետության գնահատումը իրականացվում է համապարփակ մոտեցմամբ, հաշվի առնելով ոչ միայն ներդրումային հատույցների ձևավորման միկրո և մակրոտնտեսական ոլորտները, այլև ներդրումային ծրագրերից ստացվող սոցիալ-տնտեսական արդյունքների բազմազանությունը:

Երկրորդ, ներդրումային դաշտի գրավչության և ներդրումային գործունեության արդյունավետության գնահատման հիմքում դրվում են ոչ միայն օրենսդրորեն ամրագրված ներդրումային կապիտալի ապահովության երաշխավորությունները, այլև երկրի տնտեսության շրջանակում կապիտալի միգրացիոն դրսևորումները:

Երրորդ, ներդրումների արդյունավետության գնահատման ավանդական մեթոդներին (կապիտալահատույց, ռեսուրսների ծախսի հետգնման արագություն, զուտ ներկա արժեք) զուգահեռ կիրառվում են արդյունավետության գնահատման այլընտրանքային մոտեցումներ:

***Հիմնաբառեր.*** ներդրումային քաղաքականություն, կապիտալի միգրացիա, ներդրումային հատույց, ներդրումային նպատակադրումներ:

# КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ИНВЕСТИЦИОННОЙ ЭФФЕКТИВНОСТИ

Вано Газазян

В результате усовершенствования предлагаемых в статье концептуальных положений, для оценки эффективности инвестиций, предлагается:

программах присутсвует четкая направленность на скандальные и сенсациональные подробности внешней и внуртенней политики. На сегоднящний день актуальными темами остаются: Украина, отношение России и Запада (Евросоюз и США). Практически не обсуждаются вопросы борьбы с терроризмом, война в Сирии и блок экологических проблем (глобальное потепление, загрязнение окружающей среды, пожары в Сибири и пр.).

По данным измерительного агентства Mediascope в 2017 году лидирующее положение среди российских политических ток-шоу занимает программа «60 минут», ее рейтинг 4,8, на втором месте «Воскресный вечер» - рейтинг 4,5, третье место занимает «Первая студия» - 3,2, «Поединок» - 2,8, «Вечер с Соловьевым» - 2,6, «Время покажет» - 2,3, «Место встречи» - 2,2 [8].

Исходя из показателей центра Mediascope мы можем заключить, что наблюдается спад зрительского интереса к ток-шоу. Подобная картина – закономерный ответ аудитории на политизацию тем программ с явным пропагандистским уклоном. По утверждению социологов, есть прямая связь между уровнем насилия на телевидении и поведением людей за экранами. На сегодняшний день мы можем заявить о кризисе данного жанра. Одним из возможных путей для преодоления кризиса может быть диверсификация телевизионного материала ток-шоу для интернет аудитории, у которых понятие простанства и времени просмотра определяется качеством интернет подключения и наличием свобдного времени в течении дня.

***Ключевые слова:*** телевидение, общественно-политические программы, ток-шоу, социокультурные особенности, Фил Донахью.

**Спискок литературы:**

1.Могилевская, Э. В. Ток-шоу как жанр ТВ: происхождение, разновидности, приемы манипулирования / Э. В. Могилевская // Акценты: новое в массовой коммуникации: альманах. – Воронеж, 2006. – Вып. 5–6. – С. 40–47.

2.Могилевская Э. Ток-шоу как жанр ТВ: происхождение, разновидности, приемы манипулирования. Научно-культурологический журнал. № 15. 17.08.2006.

3.Гуленко Петр Васильевич Истоки и генезис формата «общественно-политическое ток-шоу». ВЕСТН. МОСК. УН-ТА. СЕР. 10. ЖУРНАЛИСТИКА. 2016. № 6

4.Меркулов, С. Человек новой формации / С. Меркулов // Московский комсомолец. – 1994. – № 3. – С. 8.

5.Hofstede, G. Cultural consequences: international differences in work-related values / G. Hofstede. – Beverly Hills : SAGE, 1984. – 328 p

6.Авсеенко, Н. А. Американская традиция на российском телевидении : дис. ... канд. культурол. наук / Н. А. Авсеенко. – М. : МГУ, 2000. – 159 с

7.Дзялошинский, И. М. Роль СМИ в организации диалога власти и общества / И. М. Дзялошинский // Роль СМИ в формировании гражданского общества. – М. : Хроникер, 2006. – С. 211–234

## FEATURES OF DEVELOPMENT OF THE GENRE SOCIO-POLITICAL TAKL-SHOW ON RUSSIAN TELEVISION

Artyom Deryagin

"Socio-political talk show" - today is one of the most polar format on Russian television. A sharp increase in interest in the format of "talk shows" from commercial and public television channels has been observed since the 90s, after the collapse of the USSR. The talk show format, like many programs in the post-Soviet space, was a borrowed phenomenon and, therefore, was adapted depending on the preferences of the audience, its mentality and the nature of the perception of media information. The article analyzes the origins and specifics of the development of talk shows and the transformation of the genre in Russia.

***Keywords***: television, socio-political programs, talk shows, socio-cultural characteristics, Phil Donahue.

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹՈՔ ՇՈՈՒ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արտյոմ Դերիագին

«Հասարակական-քաղաքական թոք շոուն» այսօր ռուսական հեռուստատեսության ամենաբևեռային ձևաչափերից մեկն է: Առևտրային և հանրային հեռուստաալիքներից «թոք շոուների» ձևաչափի նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճ նկատվում է դեռևս 90-ականներից ՝ ԽՍՀՄ փլուզումից հետո: Թոք-շոուի ձևաչափը, ինչպես հետխորհրդային տարածքում առկա բազմաթիվ ծրագրեր, փոխառված երևույթ էր, և, հետևաբար, հարմարեցված էր ՝կախված հանդիսատեսի նախասիրություն-

ներից, նրա մտածելակերպից և լրատվամիջոցների տեղեկատվության ընկալման բնույթից: Հոդվածում վերլուծվում են թոք-շոուների զարգացման ծագումը և առանձնահատկությունները Ռուսաստանում:

***Հիմնաբառեր.*** հեռուստատեսություն, հասարակական-քաղաքական ծրագրեր, շոուներ, սոցիալ-մշակութային բնութագրեր, Ֆիլ Դոնահու:

## ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ

Նունե Մկրտչյան

Թումանյանն իր ստեղծագործական աղերսների խորքային բացահայտումներով, հարուստ ներաշխարհով, ոճային զգացողության յուրահատկություններով, գեղարվեստական ճանաչողության ու նախասիրության ընդհանրություններով հեղաշրջում կատարեց հայ բազմադարյան հարուստ գրականության մեջ: Նրա լեզուն և մտածողությունը պարզ են, ժողովրդական: Թումանյանի ստեղծագործությունները հնարավորություն են ընձեռում տարբեր մեկնակետերով արտացոլելու հայ ժողովրդի հոգեբանությունը: Գրողի ստեղծագործական ժառանգության նշանակությունը անգնահատելի է մեր ժողովրդի բնապաշտական հմտությունների զարգացման և հասարակության շրջանում գեղագիտական ճաշակ ու գիտելիքներ սերմանելու գործում: Ժանրային առումով Հ. Թումանյանի գործերը բազմազան են՝ պատմվածք, ակնարկ, զրույց, նովել, բնագիտական և որսորդական պատումներ, խոհեր, հուշեր, բնաերի դիտողություններ, հեքիաթանման պատմություններ: Գրողն իր քնարերգության մեջ արծարծել է հայրենասիրական, սոցիալական, քաղաքական, փիլիսոփայական, սիրային թեմաներ: Իրական կյանքի պատկերն ու սոցիալական անարդարության դեմ խտացված բողոքն են արտահայտված նրա բանաստեղծություններում: Նրա ստեղծագործությունների մեջ խտացված են հայ ժողովրդի վիշտը, ձգտումները երազանքները, ժողովրդի դարավոր պատմությանը, մաքառումներն ու տանջալից ուղին, նա հավատով է պատկերել հայրենիքի անպարտելի ու ստեղծագործ ոգին: Ժանրային բազմատեսակության մեջ էլ արտահայտվում են գրողի հետաքրքրություններն ու կենսափիլիսոփայությունը

Թումանյանի ստեղծագործական կյանքը սկսվեց 1881 թ. «Հոգուս հատոր…» զողտրիկ բանաստեղծությամբ և ավարտվեց «Էսէ, որ կա… ճիշտ ես ասում, թասըդ բե՛ր» փայլուն քառյակով՝ նվիրված բժիշկ Գրիգոր Սաղյանին: Այս երկու գործերի միջև ընկած ժամանակահատվածում ձևավորվել է Թումանյանի աշխարհը՝ անցնելով հասունացման, զարգացման, գաղափարական և հուզական սահմանների հաստատման ուղի:

Բնականաբար եղել են և տաղանդի դրսևորման փայլուն թռիչքներ և ստեղծագործական աշխատանքի դադարի պահեր, բայց երբեք կանգչի առել մտքի ու հոգու ներքին շարժումը, կյանքի իմաստի որոնումը, ինչը և պայմանավորում է բանաստեղծի ստեղծագործական ուղղու միասնական լինելը: Եվ, իհարկե, այդ աշխարհի ձևավորումը պայմանավորված էր անձնական և հասարակական կյանքի մի շարք գործոններով: Բաժանելով ստեղծագործական ուղին փուլերի՝ կարելի է բացահայտել դրա զարգացման տրամաբանությունը:

Անվանի գրականագետ Էդ. Ջրբաշյանն իր «Թումանյան. Ստեղծագործության պրոբլեմներ» ուսումնասիրության մեջ Թումանյանի գրական ուղին բաժանել է վեց շրջանի ըստ թվականների. ա.1881-1886 , բ.1887-1892 , գ.1893-1900, դ.1901-1905, ե.1906-1914, զ.1915-1922:

1881-1886թթ.-ի շրջանը ընդգրկում է բանաստեղծի ուսումնառության տարիները նախ Ջալալօղլում, ապա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Բացառելով «Հոգուս հատորի» անմիջական տողերը՝ նշենք որ այդ ժամանակահատվածում գրված մեզ հասած սակավաթիվ բանաստեղծությունները կրում են տարբեր հեղինակների թե մտքի, թե արտահայտման ձևերի ազդեցության կնիքը: Ա. Ինճիկյանը գտնում է, որ դա կենսափորձի հարստացման, տպավորությունների կուտակման, զգացած-ապրածի իմաստավորման և որոնումների շրջան էր: Պահպանվել են

Ջալալօղլում գրված «Օրորք», «Հայ վաճառական», «Երբ որ կանցնի ձմեռն սաստիկ…» և Ներսիսյան դպրոցում ուսանելու տարիներին ստեղծված «Նահապետի ողբը», «Ինչո՞ւ ես տրխուր…», «Թող փչէ քամին» երգի եղանակով», «Մարշ», «Մի խրատ տաճկահայաստանցուն» սևագիր բանաստեղծությունները, որոնք հանդիսանում են ավանդական պոետիկայի անմիջական ազդեցության արտացոլում: Բայց դրանց հետ միաժամանակ գրվելեն նաև «Շունն ու Կատուն» և «Անբախտ վաճառականները»: Թումանյանը հետագայում գրել էր, որ ժողովրդական առակներ ու լեգենդներ շատ էր գրում բարբառով, բայց, որովհետև չէր պահում, նրանցից մնացին «Շունն ու Կատուն» և «Անբախտ վաճառականները»: Այս ստեղծագործություններում արդեն ի հայտ է գալիս նրա հետաքրքրությունը ժողովրդական բանահյուսության, ժողովրդական կենդանի լեզվի հանդեպ, ինչը հետագայում դարձավ Թումանյանի ստեղծագործության հիմնական հատկանիշներից մեկը: Իհարկե, մինչ հրապարակումը այդ բալլադները ենթարկվել են մի շարք փոփոխությունների՝ կատարելության հասցնելով դրանք, բայց «թումանյանական որակն ստեղծվել է հենց սկզբից»:

1887-1892 թթ.-ը հասարակության առջև հանդես գալու և ճանաչման շրջանն էր: Ինչպես նշում է Էդ. Ջրբաշյանը, Թումանյանը առաջին հրապարակումները («Նոր-Դար» լրագրում) անստորագիր էր տպել. գրասեր պատանին, դեռ վստահ չէր իր ստեղծագործական ուժերի և կոչման նկատմամբ, ուստի և վախենում էր բացահայտորեն հանդես

գալ հասարակության առջև: Բայց շուտով նա, լսելով ընկերներին, հասարակության դատին է հանձնում իր ստեղծագործությունների առաջին ժողովածուն: 1890 թ. Մոսկվայում տպագրվում է Թումանյանի «Բանաստեղծությունների» առաջին հատորը, իսկ 1892 թ. Լույս է տեսնում նաև երկրորդը. Մի քնի բանաստեղծություններ, վեց պոեմ («Լոռեցի Սաքոն», «Մեհրի», «Ալեք», «Մերժած օրենք», «Անուշ», «Մարոն»), երեք բալլադ («Արև և Լուսին», «Շունն ու կատուն», «Ախթամար»), թարգմանություններ: Թումանյանի բանաստեղծությունները սկսում են տպվել նաև պարբերական մամուլում. նախ «Մուրճում», ապա «Տարազ» և «Հորիզոն» գրական հանդեսներում: Այս շրջանը նշանավորված էր ստեղծագործական որոնումներով, ազդեցությունների հաղթահարմամբ, ինքնուրույն ոճի և ձևի հստակեցմամբ: Թեև ինքը՝ բանաստեղծը, գնահատելով իր առաջին գրքի երկերը, գտնում էր, որ դրանք «անմշակ են և սկզբնական ձևի մեջ», սակայն նրանց մեջ երևում էին հասուն Թումանյանի մտքերի, խոհերի, պատկերների արտահայտությունները: Իսկ մի շարք բանաստեղծություններ այնպիսի թարմ շունչ բերեցին, որ երիտասարդ գրողը մեկընդմիշտ հաստատվեց հայ գրականության մեջ՝ արժանանալով ժամանակի քննադատության և ընթերցողների դրվատական գնահատականներին:

1893-1900 թթ.-ը պայմանականորեն կարելի է անվանել «նախապատրաստական»՝ հաջորդ փուլում կայացած ստեղծագործական մեծ թռիչքից առաջ: Եթե դատենք տպագրված նյութերի քանակով, ապա այս շրջանը հարուստ չէր: Դրանք էին «Դաշնակներ» փոքրիկ ժողովածուն (1893 և 1896 թ.թ.), «Աղբյուր» ամսագրի մատենաշարի գրքույկը, «Լոռեցի Սաքոյի» վերամշակված տարբերակը, թարգմանություններ Բայրոնից և Լերմոնտովից, հրապարակումներ պարբերական մամուլում: Բայց այս թվացյալ դադարը իրականում լարված որոնումների և աշխատանքի շրջան էր, ինչի արդյունքն եղավ ստեղծագործական այն զարգացումը, որն ի հայտ եկավ դարասկզբի նվաճումներում: Նա շարունակել է աշխատել մի շարք պոեմների վրա, գրել է բալլադներ («Անիծած հարսը», «Պողոս-Պետրոս», «Արծիվնու Կաղնին»), ստեղծում է գեղարվեստական արձակի փայլուն նմուշներ («Գիքորը», «Աղքատի պատիվը», «Քաջերի կյանքից», «Արջառոս» և ուրիշ պատմվածքներ, «Անխելք մարդը» հեքիաթը), հանդես է գալիս որպես հրապարակախոս («Բոռչալվում»), տպագրում է իր առաջին գրական-քննադատական հոդվածներն ու ելույթները: 90-ական թվականներին են վերաբերում Թումանյանի դրամատուրգիական փորձերն, որոնք, անշուշտ, մեծ աշխատանք էին պահանջում, բայց և այնպես այդպես էլ չավարտվեցին և չտպագրվեցին: 1895 թվականից նա սկսում է նյութեր հավաքել իր ստեղծագործական ամենամեծ երազանքը իրականացնելու նպատակով՝ «Հազարանբլբուլ» հեքիաթ-պոեմի համար:

1901-1905 թթ.-ը Թումանյանի ստեղծագործական կյանքի բարձրակետն էր: Լ. Հախվերդյանը գրում է. «Թե ով էր Թումանյանը՝ երևաց 1903-ին, երբ լույս տեսավ նրա «Բանաստեղծություններ» գիրքը բովանդակությամբ ամենահարուստ, արվեստով ամենաբարձր, հրատարակությամբ ամենաշքեղ գիրքը, որ երբևէ տպագրվել է հեղինակի կենդանության օրոք: Բյուրեղացումն այնամենի, ինչ ստեղծել էր Թումանյանը 1882-ից ի վեր»[1]: Թումանյանը հնարավորություն ստացավ հանգստանալու, բուժվելու և աշխատելու Աբասթումանում և ուրիշ ամառանոցային վայրերում: Այդ աշխատանքի արդյունքը եղավ վերամշակված և կատարելության հասցրած «Անուշը», «Լոռեցի Սաքոյի» երրորդ և «Մարոյի» երկրորդ տարբերակները, «Պոետն ու Մուսան», «Դեպի Անհունը» , «Սասունցի Դավիթը», «Թմկաբերդի առումը», «Փարվանան», քնարերգության մի շարք փայլուն նմուշներ, որ զետեղվեցին վերը նշված 1903 թ. Ժողովածուի մեջ՝ հրատարակված իշխանուհի Մարիամ Թումանյանի կողմից: Թումանյանը կատարելության հասցրեց իր ոճը՝ պարզ, սեղմ և փիլիսոփայական խորությամբ հագեցված, հյութեղ և հարուստ:

«1906-1914 թթ. շրջանի ժամանակագրական սահմանները որոշվում են ոչ այնքան ստեղծագործական, որքան հասարակական-քաղաքական իրողություններով, առաջին ռուսական հեղափոխությունից մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը»[2]: Թումանյանի հասարական ճանաչման հաստատման նոր նվաճումը եղավ 1908 թ. Բաքվում տպագրված «Բանաստեղծություններ» ժողովածուն: Այս շրջանում բանաստեղծը հանդես եկավ իր մանկական ստեղծագործություններով, որոնք տպագրվեցին «Հասկեր» մանկական հանդեսում, «Լուսաբեր» դասագրքում և իշխանուհի Մարիամ Թումանյանի հրատարակած «Հովհ. Թումանյանի մանկական գրադարանը» մատենաշարի գրքույկներում:

Թումանյան-մանկագիրը մեկընդմիշտ մտավ յուրաքանչյուր հայ երեխայի հոգու մեջ՝ դեռ թոթովախոս հասակից: Ուսումնասիրելով Թումանյանի գրական ուղին այդ շրջանում՝ նկատում ենք քնարական ստեղծագործությունների նվազումը՝ մոտ երկու տասնյակ բանաստեղծություն, որոնց թվում են թումանյանական քնարի փայլատակումներ. «Վայրէջք», «Ծագումն», «Գարնան հրավեր», «Տաղով եկավ…», «Թեպետ և բախտը մեզ շատ հարվածեց» և այլն: Բացի դրանից, Թումանյանն այս շրջանում հանդես չեկավ իր սիրված ժանրով՝ պոեմով: Նա գնաց ժողովրդական ավանդությունների և գրական աղբյուրների մշակման և նոր ճանապարհով՝ ստեղծելով այդ ժանրի իսկական գոհարներ. «Մի կաթիլ մեղրը», «Աղավնու վանքը», «Չարի վերջը», «Հսկան», «Էսպես չի մնա» և այլն: Այդ տարիներին Թումանյանի ստեղծագործության մեջ գերակշռում է գեղարվեստական արձակը: Զնավորելով իր սեղմ և հստակ ոճը՝ նա

[1] Լ. Հախվերդյան,.<<Թումանյանի աշխարհը>> Երևան, 1966թ. էջ 32:

[2] Էդ. Ջրբաշյան, <<Թումանյանի պոեզիան>> Երևան, 1969թ. էջ 64:

կատարելության է հասնում թե պատմվածքներում, թե իր հեքիաթներում, թե այլ ժողովրդների հեքիաթների թարգմանություններում: Թվենք մի քանիսը. «Գիքորի» և «Արջաորսի» վերամշակված տարբերակները, «Իմ ընկեր Նեսոն», «Քեռի Խեչանը», «Եղջերուն» և ուրիշ պատմվածքներ; «ՔաջՆազարը», «Տերն ու Ծառան», «Կիկոսի մահը», «Սուտասանը», «Բարեկենդանը», «Կացին ախպերը», «Սուտլիկ որսկանը» և այլն: Այս շրջանում է Թումանյանը գրել նաև իր հրապարակախոսական և քննադատական հոդվածների մեծ մասը, որոնք տպագրվում էին 1909 թ-ից հրատարակվող «Հորիզոն» լրագրում: Իր ելույթներում Թումանյանը արձագանքել է հասարակության առջև ծառացած գրեթե բոլոր խնդիրներին՝ դիպուկ և խորությափանց մեկնաբանելով դրանք: Գրականության, թատրոնի, բանահյուսության, պատմության, գիտության վերաբերյալ նրա դատողությունները այսօր էլ արդիական են: Ամփոփելով այս փուլի ուսումնասիրությունը՝ կարող ենք հավաստել, որ Թումանյանը դարասկզբի հայ իրականության կենտրոնական և հեղինակավոր դեմքերից մեկն էր:

1915-1922 թ.թ.-ը Թումանյանի կյանքի և ստեղծագործության վերջին շրջանն է: Այդ տարիներին բանաստեղծի կյանքը սերտորեն կապված էր իր ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Առաջին համաշխարհային պատերազմը, Մեծ եղեռնը, հեղափոխությունը, այդ տարիների նրա բուռն հասարակական գործունեությունը, անձնական ողբերգությունը՝ որդու՝ Արտավազդի և երկու եղբայրների մահը, արտացոլվեցին նրա ստեղծագործության մեջ: Իր մտորումները հայ ժողովրդին բաժին հասած դաժան փորձությունների, նրա պատմական անցյալի, ներկայի, իր հավատը նրա լուսավոր ապագայի վերաբերյալ Թումանյանը կիսեց ընթերցողների հետ մի շարք հրապարակախոսական հոդվածներում և ելույթներում. «Վան և Երևան»… Նշված ժամանակահատվածում չափածո և արձակ էպիկական տեսակները պակասում են՝ զիջելով քնարերգությանը: 1916 թ. Լույս տեսավ «Հայրենիքիս հետ» ժողովածուն, որտեղ զետեղվեցին ինչպես նախորդ տարիներին գրված, այնպես էլ նոր բանաստեղծություններ՝ հայրենասիրական քնարերգության անկրկնելի էջեր. «Մեր ուխտը», «Հայոց լեռներում», «Տրտմության սաղմոսներից», «Հայրենիքիս հետ», «Վերջին օրը», «Հոգեհանգիստ»: Նշենք նաև կյանքի ու մարդու մասին խոհերը բացահայտող «Բարձրից»-ը, «Պատրանքը», «Տիեզերքի ընթերցումը», «Սիրիուսի հրաժեշտը», և իհարկե, բանաստեղծի «հոգու կենսագրությունը» ամփոփող քառյակները – նրա ողջ գրական կյանքի զարգացման պսակը: 1916-1922 թթ. Թումանյանը գրեց հիսունից ավելի քառյակ: 1920 թվականին հրատարակվեց իր կողմից կազմված քառյակների ժողովածուն, որում ընդգրկվեց երեսուն քառյակ:

1922թ. Պոլսում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուն դարձավ Թումանյանի վերջին գիրքը: Թումանյանի ստեղծագործական ուղին տարբեր փուլերում տարբեր կերպ է զարգացել՝ սերտորեն

կապված լինելով նրա կյանքի և հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Բանաստեղծի խառնվածքն ու յուրահատուկ ներաշխարհը բացահայտել են հակասություններով լի որոնումներ, թռիչքների և անկումների պահեր՝ նրան քայլ առ քայլ մոտեցնելով գեղարվեստական կատարելության և հոգու իմաստության բարձունքին:


## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Թումանյանն իր ստեղծագործական աղերսների խորքային բացահայտումներով, հարուստ ներաշխարհով, ոճային զգացողության յուրահատկություններով, գեղարվեստական ճանաչողության ու նախասիրության ընդհանրություններով հեղաշրջում կատարեց հայ բազմադարյան հարուստ գրականության մեջ: Նրա լեզուն և մտածողությունը պարզ են, ժողովրդական: Թումանյանի ստեղծագործությունները հնարավորություն են ընձեռում տարբեր մեկնակետերով արտացոլելու հայ ժողովրդի հոգեբանությունը: Գրողի ստեղծագործական ժառանգության նշանակությունը անգնահատելի է մեր ժողովրդի բնապաշտական հմտությունների զարգացման և հասարակության շրջանում գեղագիտական ճաշակ ու գիտելիքներ սերմանելու գործում:



***Հիմնաբառեր.*** ստեղծագործական ժառանգություն, հարուստ ներաշխարհ, ոճային զգացողություն, գեղարվեստական ճանաչողության ու նախասիրության ընդհանրություններ:


## ЦИКЛЫ ТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ОВАНЕСА ТУМАНЯНА


Нуне Мкртчян



В статье представлены глубокие открытия творчества Туманяна, богатого внутренним миром, особенностей стиля, с общностью художественного признания и вкуса. Его язык и мышление просты и популярны. Литературное наследие Туманяна дает возможность поразному отражать психологию армянского народа. Важность творческого наследия писателя неоценима в развитии натуралистических навыков армянского народа, а также в воспитании эстетического вкуса и знаний.



***Ключевые слова:*** творческое наследие, богатый внутренний мир, чувство стиля, общность художественного признания и вкуса.

# CYCLES OF CREATIVE ACTIVITY OF HOVHANNES TUMANYAN

Nune Mkrtchyan

The article presents the deep discoveries of the work of Tumanyan, which is rich in the inner world, features of style, with a community of artistic recognition and taste. His language and thinking are simple and popular. Tumanyan's literary heritage provides an opportunity to reflect the psychology of the Armenian people in different ways. The importance of the writer's creative heritage is valuable in developing the naturalistic skills of the Armenian people, as well as in educating the public of an aesthetic taste and knowledge.

***Key words:*** creative heritage, rich inner world, sense of style, community of artistic recognition and taste.

# ԱՇԽԱՐՀԻ ԱՆՏՐՈՊՈՄՈՐՖԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇ» ՊՈԵՄՈՒՄ

Գրիգոր Ասատրյան

«Մեր թռիչքը Հովհաննես Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել»:
**Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ**

Աշխարհընկալման անտրոպոմորֆիստական եղանակը որպես աշխարհայացքի նախասկզբնական ձև խոր արմատներ ունի հայոց ազգային մտածողության մեջ: Այն խիստ բնորոշ է մեր ժողովրդի հոգեկերտվածքին և դարեր ու հազարամյակներ շարունակ լայն արտացոլում է գտել նրա հոգևոր ստեղծագործության մեջ: Անտրոպոմորֆիստական մտածողության վառ ու ինքնատիպ դրսևորումներով են աչքի ընկնում հատկապես հայ ժողովրդական երգն ու բանաստեղծական արվեստը:

Անտրոպոմորֆիստական գաղափարներով է շնչում, մասնավորապես, հայ բանաստեղծական արվեստը՝ սկզբնավորման ժամանակներից մինչև մեր օրերը: Դարերի ու հազարամյանկների խորքում են գտնվում այդ ավանդույթների արմատները: Տակավին վաղնջական ժամանակներից հայ բանաստեղծական խոսքը տոգորված է եղել անտրոպոմորֆիստական շնչով:

Աշխարհի անտրոպոմորֆիստական ընկալման ինքնատիպ դրսևորումների ենք հանդիպում վաղ շրջանի հայ ժողովրդական բանահյուսության մեջ («Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տորք Անգեղ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Արտավազդ» և այլն): Այդ պատկերացումներն արտացոլում են գտել նաև հայոց հին գուսանական ստեղծագործություններում, որոնց համար նյութ են ծառայել ժողովրդի վաղնջական անցյալը, դիցաբանական կերպարանք ստացած պատմական դեպքերն ու դեմքերը:

Անտրոպոմորֆիստական հզոր պաթոսով է ներթափանցված, օրինակ, հայ ժողովրդական բանահյուսության գոհարներից մեկը՝ «Վահագնի ծնունդը», որտեղ նկարագրվում է հայկական հին դիցաբանության մեջ քաջության աստված հանդիսացող Վահագնի ծննդյան տեսարանը.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր
Եւ զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հէր ունէր,

Ապա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

Ինչպես պարզորոշ երևում է, տեսարանի կիզակետում ժողովրդի էպիկական հերոսն է, դյուցազնի հատկանիշներով օժտված Վահագնը, ով, ըստ ավանդության, կռվել է վիշապների հետ և հաղթել նրանց[1]:

Հայկական մի շարք առասպելներում զգալի տեղ է հատկացվում կենդանիներին ու նրանց մարդանպաստ գործողություններին: Նրանք ակտիվորեն մասնակցում են մարդկային կյանքին, օգնում մարդուն որպես նրա հավատարիմ բարեկամ: Նման դեպքերում գլխավոր հերոսն ու կենդանին հանդես են գալիս միասնաբար. ավելին՝ հերոսի կյանքում կատարած բախտորոշ դերով երբեմն առաջին պլան է մղվում կենդանին, որը դառնում է ծավալվող իրադարձությունների առաջմղիչ ուժը: Նման դեր են կատարում, օրինակ, շղթայված Արտավազդին ազատագրելու համար նրա կապանքները կրծող շները, կռվի դաշտում զոհված Արային կենդանացնող արալեզները և այլն[2]:

Անտրոպոմորֆիստական գաղափարներով է ներթափանցված հայոց էպիկական ստեղծագործության զարդը՝ «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսը (IX դար):

Անտրոպոմորֆիստական մտածողության բազմապիսի դրսևորումների ենք հանդիպում միջնադարյան հայ պոեզիայում, հատկապես Նարեկացու ստեղծագործության մեջ: Այս առումով աչքի են ընկնում հատկապես նրա տաղերը: «Վարդավառի տաղը», օրինակ, հանդես է գալիս որպես անտրոպոմորֆիստական աշխարհընկալման, բնության պաշտամունքի փայլուն արտահայտություն.

Գոհար վարդն վառ առեալ
  ի վեհից վարսիցն արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
  ծավալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
  պղպջէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
  շողշողէր պտուղն ի ճղին…

Հայոց պոեզիայի անտրոպոմորֆիստական տոհմիկ ավանդույթները շարունակվել և ուրույն ու վառ արտացոլում են գտել նորագույն շրջանի հայ գրականության դասականների երկերում: Դրանց փայլուն ու անկրկնելի նմուշներին մենք հանդիպում ենք Խաչատուր Աբովյանի («Վերք Հայաստանի», «Մոլլա Մասրադինի պղինձը», «Ծառերն ու կացինը», «Աղվեսն ու գելը», «Բարդին (չինարին) ու վազը», «Էշն ու

[1] Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 85-86:

[2] Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, «Լույս» հրատ., 1967, էջ 79:

բլբուլը», «Բաղդադի ճամփորթ էշը»), Միքայել Նալբանդյանի («Ազատություն», «Վազող ջրին», «Վայր ընկնող աստղեր», «Աղցմիք»), Րաֆֆու («Ձայն տուր, ո՛վ ծովակ»), Ռափայել Պատկանյանի («Արաքսի արտասուքը», «Ամպամած Մասիս», «Ուռը»), Հովհաննես Հովհաննիսյանի («Վահագնի ծնունդը», «Արտավազդ», «Արծիվն ու արտույտը», «Քեզ սպասող չմնաց»), Վահան Տերյանի («Արծաթաշող առուն», «Ոչ, մենակ չեմ ես լեռներում», «Պետերբուրգ», «Fatum», «Գիշեր», «Քնկոտ առվին թեքվեց ուռին»), Գևորգ Դոդոխյանի («Ծիծեռնակ», «Մանուշակ»), Եղիշե Չարենցի («Դանթեական առասպել», «Ամբոխները խելագարված», «Մահվան տեսիլ», «Կապուտաչյա հայրենիք», «Նորք», «Քամին», «Շան կարոտներ»), Ավետիք Իսահակյանի («Դարդս լացեք», «Ուռին», «Սև-մութ ամպեր», «Հե՜յ, Արագած», «Ա՜խ, իմ ճամփես», «Մայրիկիս», «Քնքուշ հովիկ»), Հովհաննես Շիրազի («Սիամանթո և Խաչեզարե», «Ամպեց, կորավ լուսընկան»), Պարույր Սևակի («Անլռելի զանգակատուն», «Ծառերի օգնությամբ», «Անսպասելի փոթորիկ», «Կեսգիշերային բնանկար», «Ավազը՝ հովազ», «Միայնակ ծառը», «Աշխարհին մաքրություն է պետք», «Աշխարհի հին սպիները», «Կարոտ»), Համո Սահյանի («Քարափների երգը», «Իրիկնահաց», «Կանաչ, կարմիր աշուն» բանաստեղծությունների ժողովածուներ) և ուրիշների ստեղծագործություններում:

Մասնանշված առումով բացառություն չի նաև արևմտահայ գրականությունը: Այս համատեքստում հիշատակության են արժանի հատկապես Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծությունների շարքը, Մկրտիչ Պեշիկթաշլյանի («Գարուն», «Վերադարձ», «Աշուն», «Առ զեփյուռն Ալեմտաղի»), Պետրոս Դուրյանի («Լճակ», «Մանիշակ», «Վիշտք հայուն», «Սիրել»), Միսաք Մեծարենցի («Սիրերգ», «Ճերմակ վարդեր», «Ձմրան պարզ գիշեր», «Ուռիներու շուքին տակ...»), Դանիել Վարուժանի («Ձոն», «Ցեղին սիրտը», «Նեմեսիս», «Օձը», «Ծեր կռունկը») և մի շարք ուրիշ գրողների բանաստեղծությունները:

Թումանյանի ամբողջ ստեղծագործության, այդ թվում պոեզիայի լայթմոտիվը հայրենասիրության ու հումանիզմի գաղափարներն են, հայ ժողովրդի ազգային նպատակների, իղձերի ու իդեալների նուրբ ու խորունկ ըմբռնումը, բարու և գեղեցիկի պաշտամունքը, չարի, նսեմի, ժամանակավորի, անցողիկի մերժումը, վեհ ու անանց արժեքների հաստատումը:

Հայ ժողովրդի նվիրական նպատակների, նրա ազգային իղձերի ճանաչման ու հաստատման առումով բացառիկ են նրա «Մեր ուխտը» բանաստեղծությունում արծարծված գաղափարները, լուսավոր գալիքին ուղղված նրա խոսքերը.

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս,
Ու զընում ենք մեր ճամփով,
Մըրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կըրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մըրրիկներին հակառակ...
Բայց զըռում ենք մենք անվեհեր
Զարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի[3]:

Իսկ այժմ փորձենք անդրադարձ կատարել Թումանյանի անտրոպրոմորֆիստական պատկերացումներին, «Անուշ» պոեմում դրանց դրսևորումներին:

Հենց սկզբից նկատենք, որ անտրոպրոմորֆիստական մտածողությունը, աշխարհի անտրոպրոմորֆիստական ըմբռնումը կազմում են բանաստեղծի փիլիսոփայական-ստեղծագործական խառնվածքի կարևոր ու անբաժանելի մասը:

Վաղ է արթնացել Թումանյանի հանճարը: Եվ դրան զուգահեռ ձևավորվել ու զարգացել են աշխարհի մասին նրա անտրոպոմորֆիստական պատկերացումները:

Անտրոպոմորֆիստական մտածողության բազմազան ու հարուստ դրսևորումների ենք հանդիպում Թումանյանի չափածո բոլոր ժանրերում՝ պոեմներում («Անուշ», «Մարոն», «Թմկաբերդի առումը», «Լոռեցի Սաքոն», «Սասունցի Դավիթը» և այլն), լեգենդներում, բալլադներում ու առակներում («Ախթամար», «Փարվանա», «Լուսավորչի կանթեղը», «Երկինք ու երկիր», «Արև և լուսին», «Արծիվն ու կաղնին», «Անբախտ վաճառականներ», «Շունն ու կատուն», «Չարի վերջը», «Մոծակն ու մրջյունը» և այլն), ինչպես նաև մանկական բանաստեղծություններում («Փիսիկի գանգատը», «Բզեզի դպրոցը», «Աղվեսը», «Քամին», «Գետակը», «Մուկիկի մահը», «Մանուկն ու ջուրը», «Շունը», «Մարտ» և այլն):

Չափազանցություն չի լինի ասել, որ Թումանյանի պոեզիան ծնվել ու հասակ է առել անտրոպոմորֆիզմի քուրաներում: Ու թեև թումանյանագիտության մեջ բանաստեղծի ողջ պոեզիան բաժանում են երկու առանձին մասերի՝ քնարական և էպիկական, սակայն անհրաժեշտ է նկատել, որ անտրոպոմորֆիզմի դրսևորումները, անտրոպոմորֆիստական առկայծումները խորապես բնորոշ են նրա թե՛ քնարական և թե՛ էպիկական ստեղծագործություններին, նրա բանաստեղծական աշխարհին՝ իր ամբողջության մեջ:

Անտրոպոմորֆիստական աշխարհընկալման թումանյանական հակումները վառ ու պարզորոշ ուրվագծվում են արդեն բանաստեղծի ամենավաղ շրջանի ստեղծագործություններում: Դրա առաջին նշան-

[3] Հովհաննես Թումանյան, Երկեր երկու հատորով, հատոր առաջին, Երևան, Հայպետհրատ, 1958, էջ 100-101:

ներին հանդիպում ենք պատանի Թումանյանի խոշոր կտավի առաջին ստեղծագործության մեջ՝ «Մարոն» պոեմում (1887թ.):

Պոեմն սկսվում է անտրոպոմորֆիստական զարմանալի շնչով տոգորված հուզիչ, սակայն միաժամանակ՝ տխուր ու խոր դրամատիզմով լի բանաստեղծական պատկերներով, որոնք նախորդում են պոեմի հետագա տեքստում նկարագրվող ողբերգական իրադարձությունների հիմնական սյուժեն բովանդակող վերհուշին՝ այն դարձնելով առավել տպավորիչ ու ներգործուն.

Մեր գյուղն էն է, որ հըպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին
Ձեռը տըված ճակատին
Միտք է անում տըխրադեմ.
Ի՜նչ է ուզում չըգիտեմ...
Պաս չենք էնտեղ մենք ուտում,
Ու ջերմեռանդ աղոթում,
Ժամ ենք գնում ամեն օր.
Բայց միշտ ցավեր նորանոր,
Միշտ մի աղետ, մի վընաս
Գալիս է մեզ անպակաս...[4]

Այնուհետև պոեմում դրան հետևում են անտրոպոմորֆիստական պաթոսով ներթափանցված բանաստեղծական տողերը, որոնք կերտում են հայրենի բնության, մենավոր ու սգավոր ուռենու, նրա տակ խոխոջացող անհանգիստ լեռնային վտակի և կանաչ մարգերի գունեղ, ներդաշնակ ու իդիլիական տեսարանը.

Մեր գյուղից վեր մինչ էսօր
Կա ուռենի մի սըգվոր:
Մեծ անտառից նա զատված,
Մարդու կացնից ազատված՝
Կանգնած է դեռ ու շոգին
Հով է տալիս մըշակին:
Գիժ, լեռնային մի վըտակ
Խոխոջում է նըրա տակ,
Խաղում կանաչ մարգերին...[5]

Այս առումով բնորոշ է հատկապես տակավին իր ստեղծագործական էվոլյուցիայի արշալույսին՝ 1890 թվականին 21-ամյա բանաստեղծի գրած «Նախերգանք»[6] ստեղծագործությունը:

---

[4] Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր երկու հատորով, հատոր երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 1988, էջ 7:

[5] Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր երկու հատորով, հատոր երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 1988, էջ 7-8:

«Նախերգանքի» առաջին երկու քառատողերի գլխավոր մոտիվը բանաստեղծի նվիրական սերն է հայրենի եզերքի և նրա յուրահատուկ խորհրդանիշը հանդիսացող լեռների ու ձորերի նկատմամբ.

Լեռնե՜ր, ներշընչված դարձյալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցված,
Ու ջերմ ըղձերըս, բախտից հալածված,
Ձեզ մոտ են թըռչում հախուռն երամով:
Ձե՜զ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կյանքի տխրության ամպերի տակից՝
Ես ձայն եմ տալի ու ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր...
Այնուհետև՝
Ո՜վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցավերով, հազար ձևերով,-
Ոգևորության հըզոր թևերով
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՜ք իմ հեզ:
Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,
Այլ դառն հեծության հառաչանքներով
Էդ անդընդախոր ձորերըդ լըցնեմ[7]:

Սակայն մեզ հետաքրքրող պրոբլեմի տեսանկյունից ավելի արժեքավոր է «Նախերգանքի» եզրափակիչ մասը, որտեղ մենք հանդիպում ենք անտրոպոմորֆիստական մտածողության խորունկ, միաժամանակ՝ վառ ու կրքոտ դրսևորումների, բնության, սար ու ձորի նկատմամբ անտրոպոմորֆիստական մոտեցման անզուգական նմուշների.

Ձորե՜ր, ա՜յ ձորեր, սև, լայնաբերան,
Սըրտիս էս խորունկ վերքերի նըման.
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,
Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել:
Դուք էլ խոսեցե՜ք, դուք էլ պատմեցե՜ք,
Ձեր անդունդներով եկեք չափվեցե՜ք,

---

[6] «Նախերգանքը» Թումանյանի «Հառաչանք» նշանավոր պոեմի սկիզբն է, որն իր բացառիկ արժեքով առանձնանալով պոեմից, ձեռք է բերել ինքնուրույն ստեղծագործության նշանակություն: Ինչ մնում է «Հառաչանք» պոեմին իր ամբողջության մեջ, ապա այն, ցավոք, մեզ հասել է անավարտ վիճակում: 1893 և 1914 թվականներին մամուլում տպագրվել են դրա միայն երկու մասերը, իսկ մյուսները կորել են 1909-ին ժանդարմական վարչության խուզարկության ժամանակ: Պոեմում, ինչպես հայտնի է, պատկերված է բռնության և կոպիտ ուժի դեմ ժողովրդի ցասումը, սոցիալական արդարության ու հավասարության երազանքը:

[7] Հ.Թումանյան, Երկեր երկու հատորով, հատոր 1, էջ 17:

Դուք է՞լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր…[8]

Նկատենք նաև, որ սա այն հազվագյուտ (եթե չասենք՝ բացառիկ) դեպքերից է, երբ ստեղծագործողը բնության նկատմամբ անտրոպոմորֆիստական մոտեցումը միաժամանակ ծառայեցնում է իր անձնական ներաշխարհի բացահայտմանն ու ճանաչմանը: Տվյալ դեպքում հայրենի ձորերի չափերը, դրանց անդունդների մեծությունն ու խորությունը դառնում են Թումանյան բանաստեղծի անձնական զգացմունքների ու ապրումների, նրա «հոգու թախծի» արտահայտման յուրահատուկ միջոց:

Թումանյանի գրչի տակ կենդանության հատկանիշներով են օժտվում բնության առարկաներն ու երևույթները, կենսական շնչով են շնչում հայրենի բնության՝ Լոռվա բնաշխարհի տեսարանները:

Անտրոպոմորֆիստական գաղափարներով ներթափանցված բանաստեղծական տողերը Թումանյանի մոտ իրենց բովանդակությամբ հարուստ են ու խորիմաստ, պատկերավոր ու ազդեցիկ, ներդաշնակ ու գեղեցիկ: Դրանք միաժամանակ տոգորված են հուզական ներգործության հսկայական լիցքով:

Թումանյանի անտրոպոմորֆիստական մտածողության առավել խոր ու փայլուն դրսևորումները ամփոփված են նրա «Անուշ» պոեմում:

Անտրոպոմորֆիստական հզոր ու պաթետիկ պատկերներով, հայրենի բնաշխարհի նախաստեղծ ու անկրկնելի գեղեցկության և այդ ամենի նկատմամբ բանաստեղծի խորունկ կարոտի, բուռն ու նվիրական սիրո նկարագրությամբ է սկսվում պոեմի արդեն իսկ «Առաջին երգը».

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
Ու, թևերն ահա փըռած տիրաբար,
Թըռչում է հոգիս, թըռչում դեպի տուն…
**…Դեպ էն սարերը, որ վես, վիթխարի,**
**Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,**
**Հըսկա՛ շուրջպարի բըռնած երկնքում,**
**Հըրճվում են, ասես, էն մեծ հարսանքում**
**Պերճ Արագածի նազելի դըստեր.**
**Որ Դև-Ալ, Դև-Բեթ և այլ հըսկաներ,**
**Խոլ-խոլ հըսկաներ հընոց աշխարհի,**
**Փախցըրին բերին անառիկ Լոռի**»[9]: (Ընդգծումը մերն է – Գ.Ա.)

Առինքնող ու գրավիչ են Համբարձման գիշերվա թումանյանական անտրոպոմորֆիստական պատկերները.

Համբարձման գիշեր, էն դյութիչ գիշեր,

[8] Նույն տեղում, էջ 17-18:

[9] Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր երկու հատորով, հատոր երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 1988, էջ 44-45:

Կա հըրաշալի, երջանիկ վայրկյան.
Բացվում են ոսկի երկընքի դըռներ,
Ներքև պապանձում, լըռում ամեն բան,
Ու աստվածային անհաս խորհըրդով
Լըցվում բովանդակ նըրա սուրբ գըթով:
Էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Երկընքի անհու՛ն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարոտով մի հեզ համբուրվում
Աշխարքից հեռու՛, լազուր կամարում[10]:

Անտրոպոմորֆիստական գաղափարներով են ներթափանցված պոեմի բազմաթիվ հանգուցային ու հուզիչ դրվագներ: Այս առումով չափազանց բնորոշ են Սարոյի նշանավոր մենախոսության մուտքի տողերը.

Բարձըր սարեր, ա՛յ սարեր,
Ձեն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձեն տըվեք,
Իմ դարդերի թայ սարե՛ր…[11]:

Այդպիսին է նաև Անուշի հուզիչ ու անտրոպոմորֆիստական պաթոսով տոգորված մենախոսությունը՝

«Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ՝
Չեմ հասկանում դեպի ուր…
Դողում է պաղ նըրա ձենից
Իմ սիրտը սև ու տըխուր:
Դուք էլ, սարի սիրուն ծաղկունք,
Թաքուն մի ցավ ունիք լուռ,
Աչիկներըդ լիքն են արցունք,
Սիրտներըդ սև ու տըխուր:
Ա՛խ, ծաղիկներն էս աշխարհքում
Տանջվում են միշտ էսպես զուր,
Տըրորվում են ու թառամում
Սիրտները սև ու տըխուր[12]:

Համանման գաղափարներ են արտահայտված նաև Անուշի մեկ ուրիշ՝ լայնորեն հայտնի մենախոսության մեջ՝

Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պես,
Մընում էր յարին,

[10] Նույն տեղում, էջ 71:
[11] Նույն տեղում, էջ 62:
[12] Նույն տեղում, էջ 55:

Ու չեկավ նա տես:
Խեղճը դողալով՝
Անհույս կըռացավ,
Դարդից չորացավ,
Ուռենի դարձավ…[13]

Անտրոպոմորֆիստական հուզիչ պատկերներ է ստեղծում պոեմի հեղինակը Սարոյի սպանության բոթը ստացած նրա ընկերների հոգեվիճակն ու գործողությունները, ինչպես նաև այդ առթիվ բնության (տվյալ դեպքում՝ ձորի) արձագանքը նկարագրելիս.

…**Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,**
**Երկընքի մըթնած ամպերից իջներ,**
Ինչպես փոթորիկ սաստիկ սըրնթաց,
Գյուղից սըլացան մի խումբ կըտրիճներ:
Ցավից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածված,
**Ու նըրանց առջև ահռելի բացվում,**
**Թըշշում է ձորը արյունով լըցված**…[14]: (Ընդգծումները մերն են – Գ.Ա.)

Տպավորությունն ավելի ամբողջական դարձնելու նպատակով ավելորդ չենք համարում ներկայացնել մեկ ուրիշ անտրոպոմորֆիստական պատկեր նույն պոեմից, որտեղ նկարագրվում է Սարոյի թաղման հուզիչ ու սրտաբեկ տեսարանը.

Ծառ ու ծաղիկ՝ սըվսըվալով
Բույր խընկեցին դյուրեկան,
Ծեր Դև-բեդն էլ ահեղ ձենով
Երգեց վըսեմ շարական[15]:

Ինչպես երևում է վերը բերված տեքստից՝ Թումանյանն այստեղ տեսարանի տրագիզմն ուժեղացնելու և դրանում գետի դերը շեշտելու նպատակով գործածում է ոչ թե գետի «Դեբեդ» սովորական անվանումը, այլ այդ անվանման «Դև-բեդ» ձևը:

Եվ քանի որ խոսքը Դեբեդի մասին է, նշենք, որ Լոռվա բնաշխարհի զարդերից մեկը հանդիսացող և Թումանյանի մոտ պաշտամունքի յուրահատուկ առարկա դարձած այս գետի մասին հիշատակությունների մենք հանդիպում ենք պոեմի մի շարք դրվագներում, հիշատակություններ, որոնք մեծապես նպաստում են տվյալ դրվագում արծարծվող մտքերի խորացմանն ու ամբողջականացմանը, դրանց հուզական-հոգեբանական ներգործության ուժեղացմանը: Եվ եթե օգտվենք թումանյանական լեզվական կոլորիտից, մին՝

[13] Նույն տեղում, էջ 50:
[14] Նույն տեղում, էջ 64:
[15] Նույն տեղում, էջ 67:

«Դեբեդն է մենակ անդընդում հուզված՝
Խըլաձայն ողբով սողում դեպի ցած[16]:
մին՝
Անլըռելի վըշվըշում է
Պըղտոր ջուրը Դեբեդի…[17]
կամ՝
Վըշվըշում է գետը – վու՜շ, վու՜շ,
Ու հորձանք է տալիս հորդ,
Ու կանչում է՝ «Արի՜, Անու՜շ,
Արի՜, տանեմ յարիդ մոտ…»[18]
մին էլ՝
Ծերուկ Դեբեդը
Սըգում է մենակ խավար անդընդում…
…Լու՜ռ են ձորերը, լու՜ռ են ահռելի,
Դուշման Դեբեդն է մենակ մըռընչում…[19]:
Եվ, վերջապես՝
Սըգվոր գետը
Ծեր Դեբեդը,
Սիրտը քըրքրած,
Ջուրը փըրփրած,
Քարոտ ափին,
Լեռ քարափին,
Դեռ ծեծում է,
Հեծեծում է…[20]:

Վերը կատարված ծավալուն մեջբերումներից պարզորոշ երևում է, որ պոեմի տարբեր դրվագներում անտրոպոմորֆիստական բազմապիսի դրսևորումներով հանդերձ՝ գետը հանդես է գալիս կամ որպես ծավալվող դրամատիկական իրադարձությունների անմիջական ու կենդանի մասնակից, կամ դրանց զգայուն ու կրքոտ արձագանքող: Փոխվում են սյուժետային իրավիճակները, փոխվում են ծավալվող իրադարձությունների թատերաբեմն ու դեպքերի ընթացքը, դրանց համապատասխան փոխվում է նաև գետին վիճակված դերը: Սակայն գետի դերակատարումների այլևայլ փոփոխություններով հանդերձ՝ այն որպես կենդանի տարերք իր ամբողջության մեջ մնում է խիստ խորհրդավոր ու անմեկնելի:

---

[16] Նույն տեղում, էջ 64:
[17] Նույն տեղում, էջ 70:
[18] Նույն տեղում, էջ 71:
[19] Նույն տեղում, էջ 71:
[20] Նույն տեղում, էջ 66:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայ պոեզիային ներհատուկ անտրոպոմորֆիզմի համատեքստում՝ հոդվածում անդրադարձ է կատարվում Թումանյանի բանաստեղծական աշխարհում և հատկապես նրա «Անուշ» պոեմում անտրոպոմորֆիստական աշխարհընկալման դրսևորումներին: Քննության են առնվում պոեմում լայնորեն հանդիպող անտրոպոմորֆիստական պատկերների բնորոշ գծերն ու սպեցիֆիկ առանձնահատկությունները: Առանձին վերլուծության են ենթարկվում Լոռվա բնության, նրա սարերի ու ձորերի և, հատկապես, Դեբեդ գետի անտրոպոմորֆիստական արտացոլումները պոեմում:

***Հիմնաբառեր.*** Հովհաննես Թումանյան, պոեզիա, «Անուշ» պոեմը, անտրոպոմորֆիզմ, աշխարհընկալում:

## АНТРОПОМОРФИЧЕСКОЕ ВОСПРИЯТИЕ МИРА В ПОЭМЕ «АНУШ» ОВАНЕСА ТУМАНЯНА

**ГРИГОР АСАТРЯН**

В контексте присущего армянской поэзии антропоморфизма в статье подвергается осмыслению его отражение в поэтическом мире Ованеса Туманяна и особенно – в его поэме «Ануш». Исследуются характерные черты и специфические особенности антропоморфических картин, имеющих широкое распространение в поэме. Подвергаются отдельному анализу антропоморфические отражения в поэме уникального лорийского ландшафта, его гор и ущелий и особенно – реки Дебед.

***Ключевые слова:*** Ованес Туманян, поэзия, поэма «Ануш», антропоморфизм, мироощущение.

## ANTHROPOMORPHIC PERCEPTION OF THE WORLD IN HOVHANNES TUMANYAN'S POEM "ANUSH"

**GRIGOR ASATRYAN**

In the context of anthropomorphism inherent in Armenian poetry, the article considers its reflection in Hovhannes Tumanyan's poetic world and in particular – in his "Anush" poem. The characteristic traits and specifics of anthropomorphic images, widely used in the poem, are studied. Separately are analyzed anthropomorphic reflections in the poem of Lori's unique landscape, its mountains and gorges and in particular – Debed River.

***Key words***: Hovhannes Tumanyan, poetry, poem "Anush", anthropomorphism, world-view.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ – 150*

| | | |
|---|---|---|
| *Արմեն Ճուղուրյան Սաթեն Ալավերդյան* | Երվանդ Օտյանի ներկայությունը մեր իրականությունում........................................................... | 4 |
| *Վալերի Միրզոյան* | Երվանդ Օտյանի սոցիալ-փիլիսոփայական դիտարկումները................................................................ | 14 |

*ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*

| | | |
|---|---|---|
| *Աշոտ Ներսիսյան* | Առաջին աշխարհամարտում հայ կամավորական շարժման սկզբնավորման շուրջ………………………….. | 27 |
| *Արման Սարգսյան* | Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական համակարգի յուրահատկությունը……………………….. | 33 |

*ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*

| | | |
|---|---|---|
| *Armen Tshughuryan Nonna Khachatryan* | Economy Development and National Value Interdependence in Armenia………………………………… | 41 |
| *Վլադիմիր Վահանյան* | Ճգնաժամային կառավարման առանցքային սկզբունքները................................................................... | 55 |
| *Վանո Ղազազյան* | Ներդրումների արդյունավետության գնահատման հայեցակարգային հիմնախնդիրները.............................. | 65 |
| *Մեջլումյան Արմինե* | Կառավարչական հաշվառման հիմնախնդիրները պարենային համակարգի կազմակերպություններում... | 73 |

*ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

| | | |
|---|---|---|
| ***Серго Ерицян Мери Тадевосян*** | **Специфика манипулятивного воздействия СМИ в контексте современных информационных потоков**………………………………………………… | 85 |

*Артем Дерягин* Особенности развития общественно - политического ток-шоу на Российском телевидении………………………………………………… 91

*Նունե Մկրտչյան* Հովի. Թումանյանի ստեղծագործական կյանքի շրջափուլերը…………………………………………………… 97


*ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ*

*Գրիգոր Ասատրյան* Աշխարհի անտրոպոմորֆիստական ըմբռնումը Հովհաննես Թումանյանի «ԱՆՈՒՇ» պոեմում………… 104

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Հյուսիսափայլում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A 4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, հիմնաբառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով.
  - Երևանի Հյուսիսային համալսարան, խմբագրական խորհուրդ,
  - ուղարկել hyusisayin@gmail.com էլեկտրոնային փոստին:

# ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏԱՐԵԳԻՐՔ
2019 (4)

# ЮСИСАПАЙЛ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
ЕЖЕГОДНИК
2019 (4)

# HYUSISAPAYL

Collected Scientific Articles
YEARBOOK
2019 (4)


Համարի պատասխանատու՝ Ա. Ճուղուրյան

Համակարգչային ձևավորումը՝ Ի. Մարուխյան

*Տարեգրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է Հյուսիսային համալսարանի www//northern.am պաշտոնական կայքում:*

Չափսը՝ 60x84 1/16
Տպագրություն օֆսեթ՝ 6.6 մամ.
Տպաքանակ՝ 120
Տպագրված է՝ Ա/Ձ «Արսեն Ժամհարյան» տպարանում
Երևան-25, Ալեք Մանուկյան 128